«ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



## Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիայի կիրառումը ՀՀ դատարանների կողմից

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝
դատավորների վերապատրաստման դասընթաց

Sida

Մարդու իրավունքների պաշտպան

UNDP Armenia

Երևան
2009

«ԴԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառումը ՀՀ դատարանների կողմից**

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ դատավորների վերապատրաստման դասընթաց

Ղամբարյան Արթուր

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևան 2009

***Երախտագիտության խոսք***

*2008թ. Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Հայաստանի գրասենյակը անցկացրեց ուսումնասիրություն ՀՀ դատարաններում ՄԱԿ-ի մարդու իրավունքների դաշնագրերի կիրառելիության մակարդակը բացահայտելու նպատակով: Ուսումնասիրությունը իրականացրեցին ՄԱԶԾ ազգային փորձագետներ՝ ի.գ.թ. Դավիթ Հակոբյանը, ի.գ.թ. Արթուր Ղամբարյանը և ի.գ.թ. Տիգրան Սեռոբյանը: Ծրագրի այս փուլում ուսումնասիրվեց ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի «Աշխատանքի և աշխատանքի արդար և բարենպաստ պայմանների իրավունք»-ի և ՄԱԿ-ի Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայի իրացումը ՀՀ դատարանների կողմից, ինչի արդյունքում պատրաստվեցին երկու առանձին զեկույցներ:*

*Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների և զեկույցներում ներկայացված առաջարկությունների վրա՝ ՄԱԶԾ ազգային փորձագետներ՝ ի.գ.թ. Դավիթ Հակոբյանը և ի.գ.թ. Արթուր Ղամբարյանը Դատական դպրոցի հետ սերտ համագործակցությամբ մշակեցին երկու առանձին ձեռնարկ դատավորների վերապատրաստման համար: Ձեռնարկները հանձնվել են Դատական դպրոց և ընդգրկվել դատավորների վերապատրաստման ծրագրում:*

*ՄԱԶԾ գրասենյակը առանձնահատուկ շնորհակալություն է հայտնում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին և Դատական դպրոցին առարկայական ուսումնական ծրագրի մշակմանը մասնագիտական աջակցություն ցուցաբերելու և փորձագիտական կարծիք և առաջարկություններ ներկայացնելու համար:*

***Հիշեցում***

*Ձեռնարկը պատրաստվել և տպագրվել է ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի «Մարդու իրավունքների պաշտպանություն, խթանում և կրթություն» ծրագրի շրջանակներում Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին, և պարտադիր չէ, որ արտահայտեն ՄԱԿ-ի, ներառյալ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետները:*

# Բովանդակություն

## ԲԱԺԻՆ 1.

Դատավորների մասնագիտական վերապատրաստման մեթոդաբանությունը . . 5

1. Ներածություն . . . . . . . . . 5
2. Դասավանդման մեթոդիկան . . . . . . . . . 6
    - Ինտերակտիվություն . . . . . . . . . 6
    - Վերաբերելիությունը . . . . . . . . . 6
    - Տարաբնույթ մեթոդների կիրառումը . . . . . . . . . 6
    - Աշխատանքային խմբեր . . . . . . . . . 6
    - Կոնկրետ իրավիճակի քննարկում . . . . . . . . . 6
    - Քննարկում կլոր սեղանի շուրջ . . . . . . . . . 7
3. Գործնական մոտեցումը . . . . . . . . . 7
4. Գիտելիքների գնահատումը . . . . . . . . . 7


## ԲԱԺԻՆ 2.

Դասընթացի կառուցվածքը և բովանդակությունը . . . . . . . . . 8

1. Առարկայում ընդգրկված թեմաների անվանումները, պարապմունքների տեսակները և դասաժամերի քանակը . . . . . . . . . 8
2. Դասընթացի թեմաների համառոտ բովանդակությունը . . . . . . . . . 8


## ԲԱԺԻՆ 3.

Դասընթացի մասնակիցներին տրամադրվող նյութեր . . . . . . . . . 10

1. Դասընթացի հայեցակարգային դրույթները . . . . . . . . . 10
    - 1.1 Կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը, ապահովման միջազգային կառուցակարգերը . . . . . . . . . 10
    - 1.2 Կոնվենցիայի իմպլեմենտացումը ՀՀ օրենսդրությամբ . . . . . . . . . 10
    - 1.3 Խոշտանգումների մասին հաղորդումների պատշաճ քննությունը . . . . . . . . . 15

1.4 Խոշտանգման զոհերի իրավունքների պաշտպանության դատավարական և գույքային խնդիրները . . . 29

1.5 Խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը կամ դրանց օգտագործման սահմանները . . . 31

2. Խոշտանգումների արգելքը վերաբերող հիմնական միջազգային փաստաթղթեր . . . 33

3. Խոշտանգումների արգելքին վերաբերող ներպետական փաստաթղթեր . . . 91


## ԲԱԺԻՆ 4.


Թեստեր և խմբային աշխատանքի նյութեր . . . 96

1. Թեստեր . . . 96

2. Խմբային աշխատանքի նյութեր (խնդիրներ, գործի փաստական հանգամանքներ,) . . . 97


## ԲԱԺԻՆ 5.


Դասընթացի գնահատումը . . . 100

# ԲԱԺԻՆ 1

**Դասավորների մասնագիտական վերապատրաստման մեթոդաբանությունը**

## 1. Ներածություն

*Անոտացիա*

Դասընթացում ներկայացվում են Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի (Այսուհետ՝ Կոնվենցիա) ընդունման պատմությունը, կարգավորման առարկան, կառուցվածքը, Կոնվենցիայի դերն ու նշանակությունը միջազգային իրավունքում խոշտանգումների արգելման ինստիտուտի զարգացման հարցում:

Առանձնահատուկ նշանակություն է տրվում ՄԱԿ-ի կոմիտեի, Եվրոպական դատարանի և դրա հիման վրա նաև ՀՀ դատարանների կողմից Կոնվենցիայի կիրառման խնդիրներին, Կոնվենցիայի և այլ միջազգային փաստաթղթերի հարաբերակցության, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ Կոնվենցիայի առանձին դրույթների իմպլեմենտացման հարցերին:

*Դասընթացի նպատակը և խնդիրները*

**Դասընթացի նպատակն է՝** ունկնդիրներին գիտելիք հաղորդել խոշտանգումների դեմ պայքարի, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգում Կոնվենցիայի յուրահատուկ դերակատարության և նշանակության մասին: Հատկապես կարևորվում են քրեական արդարադատության ոլորտում Կոնվենցիայի կանխարգելիչ ներուժի բացահայտումը, ներկայացումը և դրանով իսկ Կոնվենցիայի իրավական արժեքի բարձրացումը իրավակիրառ ոլորտում:

**Դասընթացի խնդիրներն են՝**

- ներկայացնել Կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը և կառուցվածքը, ապահովման միջազգային կառուցակարգերը,
- պարզաբանել «խոշտանգում» հասկացության բովանդակությունը, դրա որոշման չափանիշները, ինչպես նաև տարբերությունը անմարդկային և դաժան վերաբերմունքից,
- վերհանել ՀՀ օրենսդրությամբ Կոնվենցիայի իմպլեմենտացման խնդիրները,
- ներկայացնել խոշտանգումների մասին հաղորդումների պատշաճ քննության ապահովման կառուցակարգերը, պատշաճ քննություն չիրականացնելու իրավական հետևանքները,
- քննարկել դատարանների կողմից խոշտանգման նույնականացման չափանիշները,
- վերլուծել խոշտանգումների դեպքերում պատժողական քաղաքականության ուղղությունները՝ Կոնվենցիայի, ինչպես նաև Եվրոպական այլ ինստիտուտների (Մարդու իրավունքների Եվրոպական դատարան) կողմից ձևավորված չափանիշների տեսանկյունից:

## 2. Դասավանդման մեթոդիկան

Դասական դպրոցում դասավորների վերապատրաստման դասընթացների ժամանակ օգտագործվում են դասավանդման տարբեր արդյունավետ մեթոդներ՝ հաշվի առնելով լսարանի առանձնահատկությունները: Մասնավորապես առաջարկվում է կիրառել դասավանդման ստեղծագործական, ինտերակտիվ մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս հետադարձել լսարանին և ներառել ուսումնական գործընթացում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ իրավունքի ոլորտում մասնագետների վերապատրաստման առավել արդյունավետ մեթոդներն են՝ խմբային աշխատանքները, սեմինար-դասախոսությունները, կոնկրետ գործերի, դեպքերի վերլուծությունքննարկումները, «կլոր սեղանի շուրջ» բանավեճերը, դերային խաղերը:

*Ինտերակտիվությունը:* Այս ծրագիրը ենթադրում է ուսուցման ինտերակտիվ մեթոդի կիրառում, ինչը նշանակում է ուսուցման գործընթացին ունկնդրի ակտիվ մասնակցության ապահովում: Դասավորներն առավել լավ են յուրացնում ուսումնական նյութերը, եթե նրանց ուսումնական գործընթացում ինքնուրույնության հնարավորություն է տրվում: Արդյունավետության համար ունկնդիրները պետք է լրիվ ծավալով մասնակցեն ուսումնական գործընթացին: Հանդիսանալով դասական իշխանություն իրականացնող մարմիններ՝ դասավորներն իրենց գործնական փորձը ներմուծում են ուսումնական գործընթաց: Գործնական ոլորտի այդ գիտելիքները պետք է ակտիվ օգտագործել՝ ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար:

*Վերաբերելիությունը:* Ողջ ուսումնական գործընթացում ունկնդիրը կարող է մտովի հարցնել, թե ի՞նչ կապ ունի այս ամենը իր ամենօրյա աշխատանքի հետ: Դասախոսի աշխատանքի հաջողությունը կախված է այն բանից, թե ինչպիսին կլինի այդ հարցին դրական պատասխան կտա: Այդ պատճառով պետք է գործադրել բոլոր հնարավոր ջանքերը, որպեսզի ուսումնական նյութը ուղղակի կապ ունենա ունկնդրի ամենօրյա աշխատանքի հետ, նաև պետք է ներկայացնել այդ նյութերի գործնական արժեքը, եթե դա այդքան ակնհայտ չէ:

*Տարբերույթ մեթոդների կիրառումը:* Ունկնդիրների ակտիվությունն ապահովելու համար ողջ դասընթացի ժամանակ պետք է գործածվեն տարբեր մեթոդներ: Ունկնդիրների մեծ մասը սովոր չէ երկարատև լսարանային դասընթացների, և հոգնեցուցիչ ու միապաղաղ դասընթացից ձանձրացող ունկնդրի ուշադրությունը կբևեռվի այլ հանգամանքների վրա:

Այդ նպատակով առաջարկվում է դասընթացի ժամանակ կատարել հետևյալ հանձնարարականները.

**ա. Աշխատանքային խմբեր:** Դասընթացի բոլոր մասնակիցներից կարելի է բաժանել 5-6 հոգանոց խմբերի, որոնցից յուրաքանչյուրին հանձնարարել կարճ ժամանակահատվածում (մինչև 50 րոպե) քննարկել որևէ թեմա, լուծել որևէ խնդիր: Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր խմբի կարող է կցվել մեկ վարող:

Խմբային աշխատանքներից հետո ունկնդիրները հավաքվում են, և յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչ ներկայացնում է խմբի քննարկման արդյունքները:

բ. **Կոնկրետ իրավիճակի քննարկում:** Աշխատանքային խմբերը, տարաբնույթ թեմաներ քննարկելուց բացի, կարող են վերլուծել կոնկրետ իրավիճակներ: Այդպիսի օրինակները պետք է հիմնված լինեն իրական իրավիճակների վրա: Կոնկրետ իրավիճակների քննարկումը ունկնդրից պահանջում է օգտագործել իր գիտելիքները և հմտությունները խոշտանգումների որակմամբ, խոշտանգման եղանակով ձեռք բերված ապացույցների թույլատրելիության, խոշտանգման զոհերի փոխհատուցման ոլորտում:

գ. **Քննարկում կլոր սեղանի շուրջ:** «Կլոր սեղանի շուրջ» քննարկումներում պետք է ներգրավվեն քննարկվող հարցի վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներ ունեցող տարբեր փորձագետներ: Նպատակը կենդանի քննարկում կազմակերպելն է: Վարողը պետք է ղեկավարի այդ գործընթացը, տիրապետի քննարկվող նյութին: Ունկնդիրը պետք է հնարավորություն ունենա քննարկվող հարցի վերաբերյալ որոշում կայացնելու և այն պատճառաբանելու:

դ. **Տեսողական ձեռնարկներ:** Դատավորների վերապատրաստման համար օգտակար է գործածել ցուցատախտակներ (ստենդներ), ցուցադրական նմուշներ, տեսապատկերներ (սլայդներ) և այլն:

## 3. Գործնական մոտեցումը

Գործնականում դատավորները ոչ միայն պետք է իմանան այս ոլորտում առկա կանոնները, այլև դրանք արդյունավետ ձևով կիրառելը: Նախապատրաստական ծրագրերում այս երկու հանգամանքներից որևէ մեկն անտեսելու դեպքում վերապատրաստման գործընթացը, ամենայն հավանականությամբ, հաջողություն չի ունենա: Այդ նպատակով վերապատրաստման ծրագիրը պետք է ներառի գործնական նշանակության տեղեկատվություն:

## 4. Գիտելիքների գնահատումը

Դատական դպրոցում կազմակերպվող դասընթացների ավարտին նախատեսվում է դասընթացի գնահատման գործընթաց, որն իրականացվում է հարցաշարերի և թեստերի լրացման եղանակով: Դասընթացի ավարտին հարցաշարերի և թեստերի լրացումը դասընթացը վարողին հնարավորություն կտա ստուգելու ունկնդիրների ձեռք բերած գիտելիքները, անընդմեջ կատարելագործելու այս ձեռնարկի հիման վրա իրականացվող դասընթացի ծրագիրը:

# ԲԱԺԻՆ 2

**Դասընթացի կառուցվածքը և բովանդակությունը**

## 1. Առարկայում ընդգրկված թեմաների անվանումները, պարապմունքների տեսակները և դասաժամերի քանակը.

| Դասընթացի բաժինները և թեմաները | Ընդհանուր ժամաքանակը | Դասախոսություն /PowerPoint/, ժամ. | Գործնական պարապմունք, ժամ. | Սեմինարներ, ժամ. |
|---|---|---|---|---|
| **Ներածություն** | | | | |
| **Թեմա 1.** Կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը, ապահովման միջազգային կառուցակարգերը | | 0,5 | | |
| **Թեմա 2.** Կոնվենցիայի իմպլեմենտացումը ՀՀ օրենսդրությամբ | | 1 | | |
| **Թեմա 3.** Խոշտանգումների մասին հաղորդումների պատշաճ քննությունը | | 1 | 1 | |
| **Թեմա** 4. Խոշտանգման զոհերի իրավունքների պաշտպանության գույքային խնդիրները | | 1 | | |
| **Թեմա 5.** Ապացույցների թույլատրելիությունը խոշտանգումների արգելքի խախտման դեպքում | | 0,5 | | |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | 5 | 4 | 1 | |

## 2. Դասընթացի թեմաների համառոտ բովանդակությունը

***Թեմա 1. Կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը, ապահովման միջազգային կառուցակարգերը***

Կոնվենցիայի ընդունման պատմությունը, մարմինները, Կոնվենցիայի կարգավորման առարկան, կառուցվածքը, դերը և նշանակությունը, հարաբերակցությունը միջազգային այլ փաստաթղթերի հետ, ՀՀ-ի կողմից վավերացումը, ՀՀ իրավական համակարգում դրա հեղինակությունը:

Դասախոսություն - 30 րոպե:

### *Թեմա 2. Կոնվենցիայի իմպլեմենտացումը ՀՀ օրենսդրությամբ*

Կոնվենցիայով «խոշտանգման» բնորոշումը, առանձնահատկությունները, ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգման հանցակազմի վերլուծությունը, հարակից այլ հանցակազմերի առանձնահատկությունների բացահայտումը, Կոնվենցիայի իմաստով խոշտանգման արտացոլման աստիճանը ՀՀ քրեական օրենսդրությամբ:

Դասախոսություն – 30 րոպե:

Հարց և պատասխան – 30 րոպե:

### *Թեմա 3. Խոշտանգումների մասին հաղորդումների պատշաճ քննությունը*

Քրեական արդարադատության ոլորտում խոշտանգումների մասին հաղորդումների քննության դատավարական կառուցակարգերը, խոշտանգումների կիրառումը խոցելի անձանց նկատմամբ, դատարանը՝ որպես խոշտանգումը նույնականացնող մարմին, դատարանը՝ որպես պատշաճ քննության երաշխավոր (խոշտանգումների մասին հայտարարությունների պատշաճ քննության ինստիտուցիոնալ խնդիրները, ծառայողական քննությունը՝ որպես խոշտանգումների վերաբերյալ հայտարարությունների քննության ձև, խոշտանգումների մասին հիմնական ազդակները՝ ըստ Կոմիտեի և ՀՀ դատարանների պրակտիկայի):

Դասախոսություն – 1 ժամ:

Խմբային աշխատանք – 1 ժամ:

### *Թեմա 4. Խոշտանգման զոհերի իրավունքների պաշտպանության գույքային խնդիրները*

Կոնվենցիայի իմաստով խոշտանգման զոհերի խոցելի վիճակը, դրանց դատավարական պաշտպանության անհրաժեշտությունը: Խոշտանգման զոհի՝ փոխհատուցում ստանալու իրավունքը և այդ իրավունքի իրագործման իրավական խնդիրները:

Դասախոսություն – 15 րոպե:

### *Թեմա 5. Ապացույցների թույլատրելիությունը խոշտանգումների արգելքի խախտման դեպքում*

Ապացույցների թույլատրելիության սահմանադրական և դատավարական հիմքերը, թույլատրելիության կանոնների համակարգը, խոշտանգման արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը և դրա սահմանները:

Դասախոսություն – 15 րոպե:

# ԲԱԺԻՆ 3

**Դասընթացի մասնակիցներին տրամադրվող նյութեր**

## 1. Դասընթացի հայեցակարգային դրույթները

### *1.1. Կոնվենցիայի ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը, ապահովման միջազգային կառուցակարգերը*

Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ Կոնվենցիան ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 10-ի 39/46 բանաձևով և ուժի մեջ է մտել 1987 թ. հունիսի 26-ին:

Կոնվենցիայի հիմնական նպատակն է բարձրացնել խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ պայքարի արդյունավետությունը ամբողջ աշխարհում:

Կոնվենցիան կառուցված է երեք մասից: Առաջին մասում տրվում են ըստ կոնվենցիայի իմաստով խոշտանգման բնորոշումը, խոշտանգումների կանխարգելման ոլորտում պետության կողմից արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական և այլ միջոցներ ձեռնարկելու, խոշտանգման քրեականացման պարտավորությունը, խոշտանգումների արգելքին վերաբերող ուսումնական նյութերը և տեղեկատվության հաղորդումը իրավապահ մարմիններին, քաղաքացիական, ռազմական, բժշկական անձնակազմի, պատժողական անձանց և այլոց նախապատրաստական ծրագրերում ներառելու, խոշտանգման վերաբերյալ հաղորդումների պատշաճ քննության, զոհերի փոխհատուցման և խոշտանգման արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիության հարցերը:

Երկրորդ մասում սահմանվում են Խոշտանգումների դեմ կոմիտեի և նրա անդամների կարգավիճակը, Կոմիտեի կազմավորման կարգը, գործառույթները, մասնակից պետությունների կողմից Կոմիտե զեկույցներ ներկայացնելու ժամանակահատվածը և կարգը:

Երրորդ մասում սահմանվում են Կոնվենցիայի ստորագրման, վավերացման, միանալու և հարակից այլ հարաբերությունները:

### *1.2. Կոնվենցիայի իմպլեմենտացիան ՀՀ ներպետական օրենսդրության մեջ*

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ապահովում են, որ խոշտանգումների բոլոր դրսևորումները դիտվեն իբրև հանցագործություն: Ավելին, Կոմիտեի կողմից 2007 թ. նոյեմբերին Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առնչությամբ արված ընդհանուր մեկնաբանության մեջ շեշտվում է, որ մասնակից պետությունները պարտավոր են քրեականացնել խոշտանգման հանցակազմը Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված հասկացություններով[1]:

1 Committee against Torture, General comment N2, Implementation of Art. 2 by States parties, http://www2.ohchr.org/english/bodies/cat/docs/CAT.C.GC.2.CRP.1.Rev.4–en.pdf

«Խոշտանգում» եզրույթով հանցակազմ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածում, համաձայն որի՝ խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ  հոգեկան տառապանքներ, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ (առողջությանը դիտավորությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս հասցնելը): Նշված արարքը պատժվում է մինչև 3 տարի ժամկետով ազատազրկմամբ: ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված խոշտանգումը չի ներառում անգամ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, ինչը մեծապես նվազեցնում է խոշտանգման հանրային վտանգավորությունը՝ այն դասելով միջին ծանրության հանցագործությունների շարքին:

Այս հանցակազմը սահմանված է «Մարդու դեմ ուղղված հանցագործություններ» բաժնում (այլ ոչ թե առնվազն «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ» բաժնում), ավելի նվազ պատիժ է սահմանում, քան, ասենք, անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելը: ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման հանցակազմը Կոնվենցիայի իմաստով խոշտանգումից որակական տարբեր հատկանիշներ է պարունակում, նախ՝ հանցակազմի առկայության համար հատուկ սուբյեկտ չի պահանջվում, այսինքն՝ պաշտոնատար անձի կամ վերջինիս թողտվությամբ ուժեղ ցավի կամ մարմնական, բարոյական տառապանքի պատճառում, ինչպես նաև բացակայում է կոնկրետ նպատակը՝ տուժողից կամ երրորդ անձից տեղեկատվություն կամ ինքնախոստովանություն ստանալու, որոշակի գործողության կատարման համար վախեցնել կամ պատժել և այլն: Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված «խոշտանգման» հանցակազմը առկա է, երբ անձը մեկ այլ անձի ուժեղ ցավ կամ տառապանք է պատճառում: Նշված հանցակազմը ոչ թե ամբողջությամբ չի ներառում Կոնվենցիայով սահմանված խոշտանգման տարրերը, այլ նախատեսել է որակապես տարբեր, «կենցաղային» հանցագործություն: Այս կապակցությամբ դեռևս 2000 թ. նոյեմբերի 17-ին Կոմիտեն Հայաստանի վերաբերյալ դիտողությունների 37-րդ կետում մտահոգություն է հայտնել, որ քրեական օրենսգրքի նախագծում տրված «խոշտանգում» հասկացությունը չի պարունակում Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված խոշտանգման մի շարք հատկանիշներ, և առաջարկվել է խոշտանգման հանցակազմը համապատասխանեցնել Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված բնորոշմանը[2]: Բացի այդ, Կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունների իրավապահ մարմինները պետք է անհապաղ և անաչառ հետաքննություն իրականացնեն, երբ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ կիրառվել է խոշտանգում: Մինչդեռ, ՀՀ քր. դատ. օր. 183-րդ հոդվածը «խոշտանգում» հանցակազմի վրա տարածում է քրեական գործի հարուցման մասնավոր մեղադրանքի ռեժիմը, որի պայմաններում քրեական գործի հարուցման համար պահանջում է տուժողի բողոքի առկայություն, իսկ կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու դեպքում ենթակա է կարճման:

Իրականում, Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված խոշտանգման հատկանիշները արտացոլված են ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից խոշտանգմամբ ... վկային,

2 Concluding observations of the Committee against Torture : Armenia. 17/11/2000. COMMITTEE AGAINST TORTURE.Twenty-fifth session. 13-24 November 2000

կասկածյալին, մեղադրյալին կամ տուժողին ցուցմունք կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-8 տարի ժամկետով: Փաստորեն, ՀՀ քրեական օրենսգիրքը որպես խոշտանգում քրեականացրել է միայն դատավարության ընթացքում խոշտանգմամբ ցուցմունք կամ ցանկալի եզրակացություն տալուն հարկադրելու դեպքերը՝ դրանով իսկ դուրս թողնելով ընդհանրապես պետական պաշտոնատար անձի կողմից կամ նրա հովանավորությամբ որոշակի նպատակով Կոնվենցիայի իմաստով խոշտանգման կիրառման բազմաթիվ այլ ոլորտներ՝ խոշտանգում հանրահավաքների ժամանակ (օրինակ՝ ոստիկան-ցուցարար), քրեակատարողական հիմնարկներում, զինված ուժերում և այլն: Սրանք այն ոլորտներն են, որտեղ պետական պաշտոնատար անձի կողմից Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված նպատակով բռնություններ կամ այլ գործողություններ կատարելը ՀՀ քր. օր-ում պետք է ուղղակիորեն դիտվի որպես խոշտանգում: Անգամ քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից բռնության ոչ ամեն մի դրսևորում տեսականորեն կարող է առաջացնել խոշտանգման հանցակազմի կիրառում՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի: Քրեական քաղաքականությունից դուրս են մնացել հենց նույն քննիչի, ոստիկանի կողմից բացատրություն տալուն, հաղորդում ներկայացնելուն, մեղայականով ներկայանալուն հարկադրելու նպատակով խոշտանգելու կամ երրորդ անձից ցուցմունք ստանալու նպատակով պատճառված դաժան ցավը կամ տառապանքը: Նշված բոլոր դեպքերում պաշտոնատար անձը կենթարկվի քրեական պատասխանատվության պաշտոնական լիազորությունների անցման և/կամ առողջությանը ծանր վնաս հասցնելու հանցագործությունների համակցությամբ: Տարօրինակ է, բայց փաստ, որ 119-րդ հոդվածով սահմանված խոշտանգման հետ չի կարող կիրառվել համակցություն, քանի որ 309-րդ հոդվածի 2-րդ մասում որպես պաշտոնական լիազորությունների անցման ծանրացնող հանգամանք նախատեսված է բռնության կիրառում: Վերջինս, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի տրամաբանության, բացի առողջությանը ծանր վնաս պատճառելուց՝ ներառում է բռնության բոլոր դեպքերը (այդ թվում՝ խոշտանգումը), սահմանում բռնության բոլոր դրսևորումների համար միևնույն սանկցիա՝ ինչը չի արտացոլում Կոնվենցիայի իմաստով խոշտանգման հանրային վտանգավորությունը: Այս առթիվ հարկ է նշել, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի կապակցությամբ 2007 թվականի ընդհանուր մեկնաբանության մեջ Կոմիտեն նշել է, որ եթե Կոնվենցիայի իմաստով խոշտանգման դեպքում անձը ենթարկվի քրեական պատասխանատվության ոչ թե խոշտանգման համար, այլ, ասենք, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի համար, այլ խոսքով՝ որակապես նվազ ծանրության հանցակազմով, ապա առկա է Կոնվենցիայի խախտում: Իսկ մեր դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ չունենալով բուն խոշտանգման հանցակազմ՝ նրա ներքո արարքների դեպքում անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում ծեծի, պաշտոնական լիազորությունների անցման, առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար, ինչը հնարավորություն չի տալիս հասարակական կազմակերպություններին, լայն հանրությանը նպատակաուղղված վերահսկելու Կոնվենցիայի իմաստով խոշտանգումների առնչությամբ քրեական գործերով վարույթները: Հարկ է ընդգծել, որ այս հանցագործության կատարողները կարող են համաներման կամ ներման միջոցով ազատվել քրեական պատասխանատվությունից կամ պատժից, ինչը դեմ է այն հաստատված միտումին, որ խոշտանգողների նկատմամբ պետք է բացառել որևէ համաներման կամ ներման կիրառում: Այդ մասին նշել է նաև Կոմիտեն իր՝ 2-րդ հոդվածի կապակցությամբ արված ընդհանուր մեկնաբանության մեջ:

ՀՀ fr. or-ի 341-րդ հոդվածի 2-րդ մասում խոcsանգումը օգsագործվում է nrmեs դաsավորի, դաsախազի, fննիչի կամ հեsաfննություն կասarող անձի կողմից կիրառված հակaorինական վarfագծի ծանrացնող հանգամանf՝ ուղղված վկայի, կասկածյալի, մեղադրյալի կամ sուժողին ցուցմունf, փոrձագեsին կեղծ եզrակացություն sալու, իսկ թարգմանչին սխալ թարգմանություն կասarելուն hարկադrելուն[3]: Ավելին, նույն հոդվածի 3-րդ մասը nrmեs էլ ավելի ծանrացնող հանգամանf, սահմանել է. «...նույն arարfները, nrnf առաջացrել են ծանr հեsևանfներ»: Մի շarf hարցադrումներ են առաջանում. ինչո՞ւ խոcsանգմամբ ուղեկցված arարfը չի առաջացնում ծանr հեsևանfներ, կամ nrn՞f են հոդվածի այդ մասով ենթադrված ծանr հեsևանfները, nrnf nrակական առումով sարբեr են խոcsանգումից:

Կոնվենցիայի իմպլեմենsացիոն գործընթացի նկաsմամբ ՀՀ ոtեsական իշխանության մարմինների կողմից չի դrսևորվել համալիր մոsեցում: Հաsվածային hաջողված իմպլեմենsացիայի օրինակ է ՀՀ frեական orենսգrfի 16-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված այն դrույթը, համաձայն nrի՝ ոչ nf չmեsf է hանձնվի osարերկրյա այն ոtեsությանը, nrsեղ լուrջ վsանգ կա, nr նrան կarող են սmառնալ խոcsանգումներ կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունf կամ mաsիժ:

Կոնվենցիայի առանձին դrույթներ չեն մասնավորեցվել ՀՀ frեական orենսգrfում, fանի nr վեrջինիս ընդհանուr կաsեգորիաների շarfում են: Այսmես, ՀՀ fr. or. 47-դ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ակնհայs անօրինական hրամանով կամ կարգադrությամբ դիsավորյալ հանցանf կաsարած անձը mաsասխանաsվություն է կrում ընդհանուr հիմունfներով: Այս դrույթը, փասsոrեն, համահունչ է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն nrի՝ վեrադասի hրամանը չի կarող arդarացնել խոcsանգումը: Պrակsիկայում եղել է դեmf, սակայն, երբ խոcsանգմամբ կorզված ցուցմունfը դաsավորի կողմից ոչ միայն չի դիsվել orենfի խախsմամբ ձեռf բերված ապացույց, այլև օրինականացվել է, fանի nr «ուղղված է եղել ճշմարsությունը բացահայsելուն»[4]: Ուsի hասուն անհrաժեշsություն է առաջանում սահմանելու մասնավոr նorմ՝ խոcsանգման օրինականացումը բացառելու նmաsակով:

ՀՀ frեական orենսգիrfը, ելնելով Կոնվենցիայի mահանջներից, համընդհանուr իrավազորություն է ճանաչում խոcsանգման բոլոr դեmfերի նկաsմամբ, նեrառյալ եթե դrանf կաsարվել են ՀՀ sarածfից դուrս osարերկրյա fաղաfացիների, fաղաfացիություն չունեցող անձանց կողմից[5]: ՀՀ fr. or-ի. 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, nr frեական orենfը կիրառվում է, եթե osաrերկրյա fաղաfացիները sվյալ hանցագործության hամաr չեն դաsաmարsվել մեկ այլ mեsության sarածfում: Հաշվի առնելով այն հանգամանfը, nr ՀՀ-ում Կոնվենցիայի իմասով խոcsանգման նկաsմամբ սովորաբար կիրառվում է mաշsոնական լիազորությունների չարաշահում

3 Խոcsանգումը օգsագործվում է nrmեs ծանrացնող հանգամանf arդarադաsության դեմ ուղղված հանցագործության համաr: ՀՀ fr. or-ի 341-րդ հոդվածի 1-ին մասում նախաsեսված arարfը ենթադrում է smառնալիfի կամ օրինական այլ գործողությունների կիրառում, բայց ոչ խոcsանգում:

4 ՀՀՊՏ 25.07.07 ./37(561)

5 ՀՀ fr. or-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ osարերկրյա fաղաfացիները և ՀՀ-ում մշsամեs չբնակվող fաղաfացիություն չունեցող անձինf, nվfեr hանցանfը կաsարել են ՀՀ sarածfից դուrս, ենթակա են frեական mաsասխանաsվության ՀՀ fr. or-nվ այնmիսի hանցագործությունների համաr, nrnf նախաsեսված են ՀՀ միջազգային mայմանագrով:

հանցակազմը, frեական orենfը չի կարող կիրառվել տվյալ անձի նկատմամբ, եթե վերջինս frեա-կան պատասխանատվության է ենթարկվել պաշտոնական լիազորությունների չարաշահման համար: Ավելին, orենfը չի նախատեսում որևէ բացառություն, մասնավորապես, երբ տվյալ պե-տությունում դատաfննությունը արդար չի իրականացվել (իմիտացիա), ունեցել է հստակ նպա-տակ՝ ենթադրյալ հանցավորին ազատելու frեական պատասխանատվությունից/պատժից, ներում է շնորհել և այլն:

ՄԱԿ-ի Կոնվենցիայում տրված «խոշտանգում» եզրույթին համարժեf հանցակազմի՝ ՀՀ fr. or-ում բացակայությունը մեծապես բարդացնում է ՄԱԿ-ի Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավո-րությունների կատարման նկատմամբ հանրության արդյունավետ վերահսկողության իրականա-ցումը: Չկա միասնական «խոշտանգում» հանցակազմ, որը համահունչ լիներ Կոնվենցիայով և միջազգային իրավունfում դրա ընկալմանը: Ավելին, ՀՀ frեական orենսգrfով frեականաց-ված չէ նաև խոշտանգման, այսպես կոչված, պասիվ դրսևորումը, երբ իրական հիմfեր կան ենթադրելու, որ անձը ենթարկվում է խոշտանգումների մասնավոր անձի կողմից, իսկ պետական պաշտոնյան չի ձեռնարկում խոշտանգումները կանխելու կամ պատշաճ հետաfննություն իրա-կանացնելու ուղղությամբ որևէ միջոց՝ նպաստ հետապնդելով մասնավոր անձանց ազատելու frեական պատասխանատվությունից: Նման դեպfերում Կոմիտեն գտնում է, որ այդ պետական պաշտոնյան պետf է ենթարկվի frեական պատասխանատվության որպես կատարող կամ օժան-դակող: Արարfները, որոնf ընկնում են Կոնվենցիայի իմաստով խոշտանգման տակ, ՀՀ frեական orենսգrfում տարածված են բազմաթիվ հանցակազմերում, ինչը բարդացնում է հանրության վե-րահսկողությունը դատավարության նկատմամբ:

Չունենալով խոշտանգում հանցակազմ Կոնվենցիայի իմաստով՝ անհնարին է դառնում պար-զել խոշտանգման զոհերի փոխհատուցման հիմնահարցը: Ըստ պաշտոնական տվյալների՝ անցյալ տարի որևէ frեական գործ դատարանում չի fննվել 341-2-րդ հոդվածի հատկանիշներով: Թեև ՀՀ orենսդրությամբ պետությունը պատասխանատվություն է կրում պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների հետևանfով պատճառված վնասի համար, սակայն գործե-րի բացակայությունը մեզ թույլ չի տալիս վերհանել փոխհատուցման արդարացի և համարժեf լինելը: Նմանապես անհնարին է դառնում հասարակական հիմնադրամների ստեղծումը խոշ-տանգման զոհերին փոխհատուցում տրամադրելու նպատակով: Այսօր այդ դեպfերի զգալի մասը արձագանf է գտնում ՀՀ fr. or-ի զանազան հոդվածներում:

**Եզրակացություն.** Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առնչությամբ 2007 թվականի նոյեմբերին Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությամբ սահմանված է, որ պետությունները պարտավոր են մշտապես բարեփոխել իրենց orենսդրությունը՝ հաշվի առնելով Կոմիտեի դիտողությունները և անհատական գործերով հայտնած տեսակետները[6]: ՀՀ fr. or-ում համալիր և ամբողջական կեր-պով արտացոլված չէ Կոնվենցիայի իմաստով խոշտանգման հատկանիշներ պարունակող հան-ցակազմ:

6 Committee against Torture, Geneal comment N2, Implementation of Art. 2 by States parties, http://www2.ohchr.org/english/bodies/cat/docs/CAT.C.GC.2.CRP.1.Rev.4–en.pdf,

## 1.3. Խոշտանգումների մասին հաղորդումների պաշտճ fննությունը

Խnըտանգումների կիրառման mրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, nr խnըտանգման զnh են դառնում առավելապես nrnըակի գnrծnվ frեական դատավարության սուբյեկս հանդիսացող անձինf, frեակատարողական hիմնարկներում պատիժը կրող դատապարտյալները, կալանfի տակ գտնվող անձինf, fաղաfական գnrծիչները, fաղաfական ակցիաների մասնակիցները և ուրիշ-ներ: Դա է պատճառը, nr Կոնվենցիան իր առանձին hոդվածներում, hանձնարարականներում անդրադառնում է խnըտանգումների կոնկrետ դրսևnrումներին, սահմանում դրանց կանխարգել-մանը և արդյունավետ դատապարտմանն ուղղված միջոցառումներ: Մասնավnrապես, պետու-թյուններին «խnrհուրդ է տալիս» սահմանել կասկածյալների, ձերբակալվածների կամ կալանա-վnrվածների բողոfների անհապաղ fննության համապատասխան ընթացակարգեր[7], fննարկել ազատազրկման վայրերի և նախնական կալանfի պայմաններում խnըտանգումների մասին հայտարարությունների ստուգման ազգային համակարգերի ստեղծման հարցը, աջակցել անկախ դիտորդներին ազատազրկման վայրեր այցելելիս[8], երաշխավորել խnըտանգման մասին հայտարա-րություն անող անձի, վկաների պաշտպանությունը և այլն: Այս կառուցակարգերի շրջանակնե-րում ՀՀ օրենսդիրը դատական իշխանությանը վերապահել է հետևյալ մասնակցությունը.

- դատաfննության ընթացfում հայտնաբերում է խnըտանգման կիրառման հնարավոր դեպ-fեր և այդ կապակցությամբ frեական գnrծ հարուցելու միջնորդությամբ դիմում frեական հետապնդման մարմնին,
- երաշխավորում է խnըտանգումների արդյունfում ձեռf բերված ապացույցների անթույլատ-րելիությունը կամ դրանց օգտագործման սահմանները,
- գնահատում է խnըտանգման փաստով ստացված հայտարարության ստուգման պատճառ լի-նելը, nrը բողոfի առկայության դեպfում իրականացնում է frեական գnrծի հարուցումը մերժելու մասին nrոշումը վերացնելու կամ թողնելու հարցը fննելիս,
- գնահատում է կատարված fննության պատճառ լինելը, nrն իրականացվում է frեական գnrծով վարույթը կարճելու մասին nrոշումը վերացնելիս կամ ուժի մեջ թողնելիս,
- ձեռնարկում է միջոցառումներ՝ խnըտանգման փաստով հանդես եկող վկաների, տուժողնե-րի պաշտպանության ուղղությամբ:

**ա. Դատարանը՝ nrպես խnըտանգումը նույնականացնող մարմին**

Քrեական դատավարության ընթացfում մեղադրյալը կամ պաշտպանը խnըտանգման միջո-ցով ցուցմունfներ կորզելու փաստի վերաբերյալ հայտարարություններ առավել հաճախ անում են դատաfննության ընթացfում: Ամբաստանյալը հայտնում է իրավապահ մարմինների կողմից իր նկատ-մամբ կիրառված խnըտանգումների մասին, nrnնց իսկությունը հավաստող փաստեr է ներկայացնում, օրինակ՝ ցույց է տալիս խnըտանգման հետfերը, մարմնական վնասվածfներ, ձերբակալման կամ նախ-նական կալանfի վայր տեղափոխվելիս կազմված արձանագրությունը և այլն: Դատարանը չպետf է

7 Выводы и рекомендации Комитета ООН против пыток по второму периодическому докладу Российской Федерации A/52/44, пп. 31-43, 14 ноября 1996 г.

8 COMMITTEE AGAINST TORTURE 37th session 6 – 24 November 2006.

անհրաժեշտ թողնի նման հայտարարությունները և հստակ, հիմնավորված և պատճառաբանված դիրքորոշում արտահայտի դրանց վերաբերյալ: Գործնականում դատարանի առջև ծառանում է երկու հարց.

ա. հանցագործության մասին հաղորդման ստուգում,

բ. խոշտանգման արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության ապահովում:

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը 2001 թ. նոյեմբերի 2-ի որոշման մեջ նշել է. «Վերաքննիչ դատարանն Ա. Հովհաննիսյանի նկատմամբ քննության անօրինական միջոցներ կիրառելու մասին հայտարարության հիմնավորումը ստուգելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու, ոստիկանության կոնկրետ աշխատակիցներին հարցաքննելու փոխարեն, նշված գործողությունը կատարելու ցուցում է տվել նախաքննության մարմնին»[9]: Փաստորեն, այս գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն այն է, որ խոշտանգում կիրառելու վերաբերյալ հայտարարությունների հիմնավորվածությունը պետք է ստուգվի դատաքննության ընթացքում՝ ապացույցների վերլուծությամբ և նոր ապացույցներ հավաքելով: Ընդ որում, վերը նշված երկու խնդիրները դատարանը պետք է կատարի միաժամանակ, քանի որ ապացույցների թույլատրելիությունը քննարկելիս prima facie անդրադառնում է խոշտանգման փաստին: Այս առումով տարբերվում է ՀՀ Վճռաբեկ դատարանի ստորև նշված դիրքորոշումը, որն արտահայտվել է 2001 թ. փետրվարի 8-ի որոշման մեջ. «Սույն գործով ամբաստանյալ Ա-ի պաշտպանը վճռաբեկ բողոքում նշել է, որ իր պաշտպանյալին մեղադրելու և դատապարտելու ոչ մի ապացույց ձեռք չի բերվել, իսկ «ապացույց» համարվողները վկաներից միայն բռնությամբ կորզված ցուցմունքներ են...»: ՀՀ Վճռաբեկ դատարանը արձանագրել է հետևյալ կերպ. «Բողոքում բերված այն պատճառաբանությունը, որ ցուցմունքները վկաներից կորզվել են նախաքննության ընթացքում նրանց նկատմամբ կիրառված բռնությունների միջոցով, ոչ միայն իր հիմնավորումը չի գտել գործի տվյալներով, այլև ընդհակառակը՝ հաստատվել է, որ Ա-ի հարազատներն են փորձել կիրառել համոզման և սպառնալիքի մեթոդներ վկաների նկատմամբ, որպեսզի վերջիններս փոխեն իրենց նախաքննական ցուցմունքները կամ հրաժարվեն դրանցից»[10]: Սույն գործով Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, համաձայն որի՝ «վկաների նկատմամբ բռնություն չի կիրառվել, քանի որ դա իր հիմնավորումը չի գտել գործի տվյալներով», չի կարող համարվել պատճառաբանված և հիմնավոր: Դատարանի որոշման բովանդակությունից ակնհայտ է, որ այդ հանգամանքը պատշաճ կերպով չի ստուգվել: Ավելին, անտեսվել է վկաների՝ զինվորական ծառայողներ լինելը, որոնք առավել խոցելի վիճակում են: Վճռաբեկ դատարանի այն հիմնավորումը, որ Ա-ի հարազատները սպառնացել և համոզել են վկաներին փոխել ցուցմունքները, հիմք չէ, որ վկաների նկատմամբ քրեական հետապնդման մարմինը չի կարող բռնություն կիրառել: Դատարանը պետք է ստուգեր Ա-ի հարազատների կողմից կատարված նման գործողությունների իսկությունը և, եթե նման հիմքերի առկայությունը հաստատվեր, միջնորդությամբ դիմեր քրեական գործ հարուցելու պահանջով: Վճռաբեկ դատարանը թեև հաստատված է համարել, որ Ա-ի հարազատները վկաների

9 ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, 2001, էջ 482:

10 Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, 2001, հատ. երրորդ, էջ 11:

նկատմամբ կիրառել են սպառնալիքի մեթոդներ, սակայն, ինչպես երևում է որոշման բովանդակությունից, այդ փաստը մնացել է անհետևանք:

Վճռաբեկ դատարանը պետք է պահպանի իր իսկ կողմից ձևավորված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ խոշտանգում կիրառելու վերաբերյալ հայտարարությունների հիմնավորվածությունը պետք է ստուգվի ապացույցների վերլուծությամբ և նոր ապացույցներ հավաքելով: Վերոհիշյալ գործերից մեկում Վճռաբեկ դատարանը պարզապես նշել է, որ դատապարտյալի պատճառաբանությունն այն մասին, թե վկաներից կորզել են ցուցմունքներ, անհիմն է և չի բխում գործի նյութերից[11]: Մեկ այլ դեպքում, Վճռաբեկ դատարանի 2003 թ. հունիսի 13-ի որոշման մեջ նշվում է. «Իր նկատմամբ քննության խորթ մեթոդներ կիրառելու մասին դատապարտյալ Լ. Յակովլևի փաստարկները ստուգվել են նախաքննության ընթացքում, սակայն իրենց հաստատումը չեն գտել»: Նախ, նշենք, որ որոշման բովանդակությունից պարզ չէ, թե նախաքննության ընթացքում նշված հայտարարությունները ինչպես են ստուգվել և արդյոք ստուգվե՞լ են: Եթե նախաքննության մարմինները ստուգել են ամբաստանյալի հայտարարությունները, ապա ՀՀ գլխավոր դատախազի՝ այդ պահին գործող 2000 թ. մայիսի 10-ի «ՀՀ դատախազության մարմիններում դիմումների և բողոքների քննարկման ու քաղաքացիների ընդունելության կարգի մասին» հրամանի համաձայն՝ ձերբակալվածի կամ կալանավորվածի նկատմամբ բռնության գործադրման կամ այլ անօրինական գործողությունների վերաբերյալ դիմումներ կամ բողոքներ ստանալու դեպքում դատախազը պարտավոր է անհապաղ ստուգել դրանցում նշված փաստերը և ըստ անհրաժեշտության ձեռնարկել դատախազական ներգործության համապատասխան միջոցներ: Վճռաբեկ դատարանի պալատի որոշման մեջ չի նշվել, թե նախաքննության ժամանակ այդ հայտարարությունը ստուգելու արդյունքում ինչպիսի՛ գործողություններ են կատարվել, ի՛նչ որոշում է կայացվել, որով հերքվել է հանցագործության վերաբերյալ ամբաստանյալի հայտարարությունը: Նյութերի ուսումնասիրությունից պարզվեց, որ մեղադրյալ Յակովլևին ձերբակալելու հաջորդ օրը ոստիկանության հերթապահ աշխատակիցների կողմից կազմվել է արձանագրություն՝ մարմնական վնասվածքի մասին, ըստ որի՝ մեղադրյալի ոտքերի, մեջքի և ձեռքերի վրա առկա են եղել կապտուկներ և կարմիր հետքեր: Այդ ընթացքում մեղադրյալն արդեն տվել էր ինքնախոստովանական ցուցմունքներ: Թեև նույն արձանագրության մեջ նշվել է, թե մեղադրյալը իբրև հայտարարել է, որ վնասվածքներն առաջացել են մինչև ձերբակալումը, սակայն դա չի հաստատվել առանձին քննությամբ: Նախաքննության ընթացքում լրացուցիչ հարցաքննությունների ժամանակ, ինչպես նաև դատաքննության ընթացքում մեղադրյալը բազմիցս նշել է, որ իր նկատմամբ կիրառվել են խոշտանգումներ, սակայն դա որևէ արձագանք չի ունեցել: Ամբաստանյալի մարմնի վրա եղած վնասվածքները հաստատվել են վերը նշված արձանագրությամբ և բժշկական փաստաթղթերով, ինչը բավարար հիմքեր էր տալիս ենթադրելու, որ նրա նկատմամբ կիրառվել է խոշտանգում, և ստուգելու այդ հայտարարությունը, սակայն թե՛ Վերաքննիչ դատարանը, թե՛ Վճռաբեկ դատարանի պալատը անպատասխան են թողել խոշտանգելու մասին հայտարարությունը և այդ խոշտանգման արդյունքում ստացված ապացույցը դիտել որպես մեղադրական հիմնական ապացույց:

11 Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, 2001, հատ. երրորդ, էջ 145:

Նման հիմնավորումներն արտահայտում են դատարանի կողմից խոշտանգումների մասին հաղորդումների նկատմամբ ոչ հետևողական մոտեցումը, մասնավորապես՝ դրանց նկատմամբ գործում է զրպարտության կանխավարկածը: Անհրաժեշտ է, որ դատական ակտերը նման հայտարարությունները հերքեն առավել կոնկրետ փաստերով՝ մատնանշելով այն հիմքերի բացակայությունը, որոնց առկայությունը կարող էր վկայել խոշտանգումներ կամ այլ անօրինական մեթոդներ կիրառելու մասին:

Քննության ընթացքում խոշտանգումները բացառելու նպատակով Կոնվենցիայի 11-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները պարբերաբար քննարկում են հարցաքննությանն առնչվող կանոնները, հրահանգները, մեթոդներն ու պրակտիկան, ինչպես նաև ձերբակալության պայմաններն ու անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վերաբերմունքը: ՀՀ օրենսդիրը իր հերթին հռչակել է հարցաքննության, դատավարական գործողությունների իրականացման, անազատության մեջ պահելու հիմնարար սկզբունքներ, ապա նաև սահմանել դրանց պահպանմանն ուղղված երաշխիքներ[12]: Ինքնին դատավարական նորմերի նախատեսումը լիովին չի բացառում հարցաքննության ժամանակ անօրինական մեթոդների, մասնավորապես խոշտանգման կիրառման հնարավորությունը: Ստորև նշված կանոններից յուրաքանչյուր խախտում դատարանը պետք է դիտարկի իբրև լրացուցիչ ազդակ խոշտանգման/բռնության կիրառման հնարավորության հարցը քննելիս:

1. ՀՀ քր. դատ. օր-ի 205.1-րդ հոդվածի համաձայն՝ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից ավելի, իսկ անչափահասների, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձանց հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: Հարցաքննությունը շարունակել թույլատրվում է հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 8 ժամը, իսկ անչափահասների, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձանց համար՝ վեց ժամը:

2. ՀՀ դատավարական օրենսդրությամբ փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իրավունք վերապահվում է ոչ միայն կասկածյալին, մեղադրյալին, այլև քր. դատ. օր-ի 86-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ վկան ևս իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնին ցուցմունք տալ փաստաբանի ներկայությամբ: Փաստաբանները մեզ հետ զրուցելիս նշեցին, որ քննիչների կողմից հարցաքննությունից առաջ դատավարության մասնակիցները չեն զգուշացվում փաստաբան ունենալու իրավունքի մասին կամ նրանց ներկայացվում է փաստաբանի կոնկրետ թեկնածու: Ակնհայտ է, որ եթե անձը հարցաքննվել

12 ՀՀ քր. դատ. օր-ի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում: Անձին չի կարելի հարկադրել մասնակցելու իր արժանապատվությունը նվաստացնող դատավարական գործողությունների: ՀՀ քր. դատ. օր-ի 11-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է քրեական դատավարությանը մասնակցող անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով: Արգելվում է անձին ներգրավել երկարաժամկետ կամ ֆիզիկական տանջանքներ պատճառող, նրա կամ շրջապատողների առողջության համար վտանգ ներկայացնող քննչական փորձարարությունների, դատավարական այլ գործողություններ կատարելու մեջ:

է frեական հեsաmնդման մարմնի կողմից «առաջադրված» փաստաբանի ներկայությամբ, ապա նախաfննության մարմնի հայsարարությունը, nr փաստաբանը հաստատել է արձանագրությունը, չmեsf է ոչ միայն ունենա բարձր հավաստիություն, այլև հանդիսանա լրացուցիչ կասկածելի ազդակ: Ուrեmես orենսդրական բաց կցանկանայինf մաsնանշել, nr առերեսումը իr բնույթով շաս նման է հարցաfննությանը, ուստի sրամաբանական է, nr ՀՀ fr. դաs. or-ում հսաակ նախաsեսվի, nr վկան փաստաբանի հեs կարող է մասնակցել նաև առերես հարցաfննությանը:

3. Դաsավարության մասնակիցները mեsf է իրազեկվեն փաստաբանի ներակայությամբ հարցաfննվելու իրավունfի մասին: Եթե գործի նյութերում բացակայում է հավաստում, nr նա sեղեկացել է փաստաբանի մասնակցությամբ հարցաfննվելու իր իրավունfի մասին, ներառյալ` սեփական հայեցողությամբ ընsրված փաստաբանի միջոցով, դաsավորը դա mեsf է դիsարկի իբրև ահազանգող հանգամանf:

4. Եթե մեղադրանfի հիմfում ընկած է միայն մեղադրյալի ինfնախոստովանությունը, nրից նա հրաժարվում է դաsաfննության ընթացfում, ինfնախոստովանությունը mեsf է մանրակրկիs ուսումնասիրվի դաsարանի կողմից:

5. Ընդհանուr առմամբ fննչական գործողությունների արդյունfները ամրագրվում են արձանագրությամբ: Գործնականում երբեմն հարցաfննությանը մասնակցում են նաև հեsաfննության մարմինների օmերաsիվ ստորաբաժանումների աշխասակիցները: Թեև այդօրինակ mրակsիկան ուղղակիորեն չի հակասում fr. դաs. or-ին, սակայն նման դեmfերում mեsf է mահmանել ՀՀ fr. դաs. or-ի 209-րդ հոդվածի 6-րդ կեsի mահանջները և արձանագրությունում նշել այն անձի sվյալները, ով մասնակցել է հարցաfննությանը: Նման sեղեկաsվությունը խիստ կարևոր նշանակություն ունի խոշsանգումների կիրառման առնչությամբ հայsարարությունների mաsշաճ fննարկման համար: Արձանագրության մեջ մասնակիցների մասին սխալ sեղեկաsվությունը ևս mեsf է լրացնի կասկածելի հանգամանfների շարանը:

Դաsավորը յուրաfանչյուր դեmfում, եթե գsնի, nr առկա են բավարար հիմfեր ենթադրելու, nr կիրառվել է խոշsանգում, mարsավոr է դիմել դաsախազին frեական գործ հարուցելու միջնորդությամբ: Դաsավորի նման գործառույթը նախ դաsախազությանը զրկում է խոշsանգման վերաբերյալ հայsարարությունները անարձագանf թողնելու հնարավորությունից, fանի nr փաստաբանները զանգաsվում են, nr իրենց և/կամ մեղադրյալի հայsարարությունները, շաս դեmfերում, հակառակ orենfի mահանջի, nրևէ արձագանf չեն սsանում: Մյուս կողմից, եթե դաsախազն անգամ մերժի frեական գործ հարուցելու մասին դաsավորի միջնորդությունը, ապա այդ դեmfում կայացվում է frեական գործի հարուցումը մերժելու մասին nրոշում, nրը դաsական կարգով կարող է բողոfարկվել:

Փաստաբանների հեs հանդիmումների ժամանակ վերջիններս նշեցին, nr հաճախ ամբաստանյալները դաsական նիստերի ներկայանում են կաmsուկներով: Մեր այն հարցին, թե երբևէ դաsավորը անդրադարձե՞լ է դրանց, փորձե՞լ է mարզել դրանց mաsճառման հանգամանfները, mաsասխանը միշs բացասական է: Նման դեmfերում դաsավորները չmեsf է սmասեն, մինչև ամբաստանյալները իրենf հայsարարեն, nr ենթարկվել են խոշsանգումների, այլ փորձեն

hարցերով պարզել կասկածների առաջացման պատճառները: Այս հարցը խիստ կարևոր նշանակություն ունի նաև խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության տեսանկյունից: Կոնվենցիայի 15-րդ հոդվածն այս կապակցությամբ սահմանում է՝ որևէ դատական հարցաքննության ընթացքում իբրև ապացույց չօգտագործվի որևէ հայտարարություն, որը, ինչպես պարզվել է, արվել է խոշտանգման ազդեցության տակ, բացի այն դեպքերից, երբ դա խոշտանգելու մեջ մեղադրվող անձի դեմ այդ հայտարարությունն արվելու ապացույց է հանդիսանում[13]: Փաստաբանների, դատավորների և դատախազների հետ հարցազրույցներից պարզվեց, որ հազվադեպ են դեպքերը, երբ պատշաճապես հաստատված է, որ ապացույցը ձեռք է բերվել խոշտանգման արդյունքում, և այդ փաստական տվյալները քրեական դատավարությունում դրվում են մեղադրական դատավճռի հիմքում: Նման եզակի դեպքերից է Միշա Հարությունյանի գործը, որում պատշաճը վիճարկել է գործով մեղադրյալ Մ-ի և վկաներ Գ-ի և Կ-ի կողմից տրված ցուցմունքները՝ դրանց թույլատրելիության տեսանկյունից: Պաշտպանը պնդել է, որ վերջիններս այդ ցուցմունքները տվել են ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության ստորաբաժանման աշխատակիցների կողմից կիրառված խոշտանգումների արդյունքում, ինչի վերաբերյալ արդեն հարուցված քրեական գործի մասին վերջինս հայտնել է դատարանին: Պաշտպանության կողմի նման միջնորդությունների և վկաների տված ցուցմունքներին գնահատական տալով՝ դատավորի դատավճռի պատճառաբանական մասում նշվել է. «Դատարանը, գնահատական տալով Գ., Կ. նախաքննության և դատաքննության ժամանակ տված հակասական ցուցմունքներին, գտնում է, որ իրականում հետաքննության մարմնի կողմից ռազմական ոստիկանության բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար»: Նման գնահատական տալով՝ դատավորը ընդունել է խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցները և դրել մեղադրանքի հիմքում, դրանով իսկ արդարացրել է նշված անձանց նկատմամբ իրականացված խոշտանգումները: Սույն դատավճիռը բողոքարկվել է Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններ, որոնք դատական ակտը թողել են ուժի մեջ[14]:

Խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունն ապահովելու առումով հասկապես կարևոր է Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը նմանատիպ դեպքեր վկայակոչող բողոքները վարույթ ընդունելու հարցը քննելիս: ՀՀ օրենսդրությամբ թեև նախատեսվել է, որ վճռաբեկ բողոք կարող են բերել հավաստարմագրված փաստաբանները, սակայն նրանց բերած բողոքները ևս պարտադիր կարգով ընդունման ենթակա չեն[15]: Օրենսդիրը սահմանել է բովանդակային

13 Այս հոդվածն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ քր. դատ. օր-ի 105-րդ հոդվածում, համաձայն որի՝ քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով:

14 Սույն գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, իսկ առաջին ատյանի դատարանի դատավորը ՀՀ Արդարադատության խորհրդի որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

15 ՀՀ քր. դատ. օր-ի 414.2-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ 1) Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, 2) վերանայվող դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը, կամ 3) ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

կրկնակի զոհ, ինչը հակասում է արդարադատության մատչելիության սահմանադրական սկզբունքին[16]:

ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքի միատեսակ կիրառումն ապահովող մարմնի նոր սահմանադրական կարգավիճակից հետո (27.11.2005 թ.) ձևավորված պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ Վճռաբեկ դատարանում չեն վերանայվել ՀՀ քր. օր-ի 341-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործեր, իսկ այլ բնույթի քրեական գործերի վերանայման ընթացքում, որպես կանոն, ՀՀ Վճռաբեկ դատարանում չեն բարձրացվել դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումներ կիրառելու վերաբերյալ հարցադրումներ[17]: Բազմաթիվ են վճռաբեկ բողոքները, որտեղ բարձրացված են բռնության կիրառման հետևանքով ինքնախոստովանական ցուցմունք կորզելու հանգամանքը, և դրանց ընդունումը վարույթ մերժվում է, քանի որ «չի հիմնավորվել ծանր հետևանքներ առաջացնելու փաստը»: Առավել զարմանալի էր վերջերս Վճռաբեկ դատարանի կողմից մերժված բողոքը մի գործով, որի մեղադրանքի հիմքում ընկած է երկու ապացույց՝ վկայի ցուցմունք և ինքնախոստովանություն: Ընդ որում, ի սկզբանե մեղադրյալը հայտարարել է, որ ինքնախոստովանությունը տվել է ծեծի, հոգեբանական ճնշման հետևանքով, իսկ վկան դատաքննության ընթացքում հայտարարել է, որ իրեն նախաքննության մարմինն է ասել, թե ինչ ցուցմունք տա, և որ ինքն այդ անձից երբևէ թմրամիջոց չի գնել: Այստեղ ավելանում է մեկ այլ կասկածելի ազդակ: Առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ձեռքբերումը իրացնելու նպատակով մեղադրանքի համար, որպես կանոն, առաջնային նշանակություն պետք է ունենա իրեղեն ապացույցը, այն է՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների առկայությունը տվյալ անձի տիրապետման ներքո: Մինչդեռ այս դեպքում անձը դատապարտվել է 9 տարվա ազատազրկման, քանի որ ինչ-որ մեկը հայտարարել էր, որ իրենից գնել է թմրադեղ, որից հրաժարվել էր դատաքննության ընթացքում: Դատարանը գտավ, որ վկան չարամիտ համաձայնության մեջ է մտել մեղադրյալի հետ, և հիմնվեց բացառապես ինքնախոստովանական ցուցմունքների վրա: Իսկ թե ինչպես դատարանը համոզվեց, որ խոսքը վերաբերում է առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցներին, անհայտ մնաց: Ավելին, կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում մեղադրյալը շտապօգնությամբ տեղափոխվել էր հիվանդանոց:

Եթե մինչև 27.11.2005 թ. ՀՀ սահմանադրական փոփոխությունները և դրանցից բխող օրենսդրական բարեփոխումները Վճռաբեկ դատարանը պարտադիր քննում էր վճռաբեկ բողոքները, ինչի արդյունքում պետք է արձագանքեր խոշտանգումների կիրառման մասին հայտարարություններին, ապա ներկայումս Վճռաբեկ դատարանը, ունենալով վարույթ ընդունելու կամ չընդունելու հնարավորություն, առանց պատճառ պատճառաբանության բողոքները վարույթ չի ընդունում: Ավելացնենք, որ դեռևս որևէ դատավոր չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության ակնհայտ հիմնավոր վճռաբեկ բողոքը կամայականորեն վարույթ չընդունելու համար:

---

16 ՀՀ Սահմանադրական դատարանում լսվում է հավաստամագրված փաստաբանների ինստիտուտի սահմանադրականության հարցը:

17 ՀՀ Վճռաբեկ դատարանը 2006 թ. դեկտեմբերի 22-ի որոշմամբ նախաքննության ընթացքում դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումներ կիրառելու մասին վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ նշել է. «Անհրաժեշտ է հանգամանորեն ստուգել նաև այդ օրերի ընթացքում ամբաստանյալներ Ռ.Սարգսյանի, Մ.Սեռոբյանի և Ա.Զալյանի նկատմամբ բռնություններ կիրառելու, նրանց խոշտանգումների ենթարկելու մասին պաշտպանության կողմի բողոքներում բերված փաստարկները»:

Եթե վճռաբեկ բողոք բերող անձը դրանում բարձրացնում է դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգում կիրառելու ողջամիտ կասկած հարուցող հանգամանքներ, որոնք ստորադաս դատարանում գնահատականի չեն արժանացել, ապա նման բողոքը պետք է ընդունել վարույթ այն հիմքով, որ ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Վճռաբեկ դատարանի պալատը առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի այն դեպքերին, երբ բժշկական փաստաթղթերով հաստատվում է կալանավորված կամ ձերբակալված անձանց մարմնական վնասվածքների առկայությունը:

**բ. Դատարանը՝ որպես պատշաճ քննության երաշխավոր**

Կոնվենցիայի 12-րդ և 13-րդ հոդվածների համաձայն՝ անձը պետք է իրավունք ունենա իր նկատմամբ կիրառված խոշտանգման յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմիններին բողոք ներկայացնել, իսկ վերջիններս պարտավոր են անհապաղ և անաչառ հետաքննություն իրականացնել: Կոնվենցիան հորդորում է իրավապահ մարմիններին ցուցաբերել պրոակտիվ մոտեցում. նախաձեռնել հետաքննություն ցանկացած դեպքում, երբ առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ անձը ենթարկվել է խոշտանգման: Կոմիտեի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոմիտեն կարող է «ձեռնպահ մնալ» հայտարարելու՝ եղել է խոշտանգում, թե՝ ոչ: Հիմնվելով առանձին ազդակների վրա՝ նախ հանգում է եզրակացության, որ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու խոշտանգման կիրառման փաստը, ապա, մասնանշելով ասենք, իրավապահ մարմինների կողմից օրենսդրությանը համապատասխան ընթացք չի տրվել կալանավորված անձի վիճելի բողոքին, թերացել են հետաքննություն իրականացնելու հարցում և նման հետաքննության միջոցով չեն պարզել կալանքի տակ գտնվող անձանց՝ ոստիկանության հսկողության տակ գտնվելու ընթացքում ստացած վնասվածքների առաջացման պատճառները և այլն, ուստի Կոմիտեն արձանագրում է, որ խախտվել է Կոնվենցիայի 12-րդ և (կամ) 13-րդ հոդվածները, և չի իրականացվել պատշաճ քննություն: Դատարանը ՀՀ-ում իրավազոր է վերացնելու քրեական հետապնդման մարմնի կողմից կայացված քրեական գործի հարուցումը մերժելու կամ հարուցված քրեական գործը կարճելու մասին որոշումները:

**Խոշտանգումների մասին հայտարարությունների պատշաճ քննության ինստիտուցիոնալ խնդիրները**

Ստացված հաղորդումների ստուգման և քննության որակը գնահատելիս դատարանը պետք է հաշվի առնի, նախ, դրանց քննության ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, պրակտիկայում այս կամ այն եզրակացության ապացուցողական արժեքը, կարգապահական, քրեական պատասխանատվություն փոխհարաբերությունը: Այս առումով, խոշտանգումների մասին հայտարարությունների պատշաճ քննության պահանջը ի սկզբանե վտանգված է իրավապահ մարմինների համակարգի կառուցման այնպիսի պայմաններում, երբ խոշտանգումների մասին հայտարարությունը պետք է քննվի միևնույն գերատեսչության շրջանակներում, որի պաշտոնատար անձի կողմից թույլ է տրվել ենթադրյալ խոշտանգումը: ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումների ընթացքում ՀՀ դատախազության համակարգից հանվեց քննչական ապարատը: Դատախազությունն այսուհետ կարող է առավել անկաշկանդ հսկողություն իրականացնել հետաքննության և նախաքննության

օրինականության նկատմամբ: Միևնույն ժամանակ ՀՀ քր. դատ. օր-ի 2007 թ. դեկտեմբերի 18-ի փոփոխություններով և լրացումներով՝ դատախազը զրկվել է քննիչի գործողությունների վերաբերյալ ստացված տարաբնույթ դիմում - բողոքների ստուգման նպատակով բողոք բերող անձից բացատրություններ ստանալու լիազորությունից: Եթե դատախազին հասցեագրված բողոքում դատավարության մասնակիցը նշում է, որ հարցաքննության ժամանակ քննիչի կողմից կիրառվել են անօրինական միջոցներ, ապա դատախազը զրկված է բողոքում նշված տեղեկությունների հավաստիության ստուգման նվազագույն հնարավորությունից (օրինակ՝ բողոքում նշված փաստերի վերաբերյալ բացատրություն վերցնել հարցաքննության մասնակցից կամ նրա փաստաբանից): Նման դեպքում դատախազը պարտավոր է խոշտանգման մասին յուրաքանչյուր հայտարարություն, անկախ դրա հավաստիության բնույթից, դիտարկել որպես հանցագործության մասին հաղորդում և ուղարկել ըստ ենթակայության: ՀՀ քր. դատ. օր.ի 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հատուկ պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների գործերով նախաքննություն իրականացնում են Հատուկ քննչական ծառայության քննիչները: Հետևաբար, քննիչների հանցավոր գործողությունների, այդ թվում խոշտանգումների վերաբերյալ գործերը քննում է Հատուկ քննչական ծառայությունը[18]: Հաշվի առնելով այն չգրված կանոնը, որ դատավոր-դատախազ սուբյեկտները օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ոլորտում միմյանց լրացնում են, դատախազի իրավասությունների պակասեցումը, ենթադրվում է, պետք է լրացվի դատարանի էլ ավելի ակտիվ գործունեությամբ: Ուստի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելիս դատարանը պետք է հաշվի առնի, որ դատախազը այդպես էլ հնարավորություն չի ունեցել բացատրություններ վերցնելու, ասենք՝ քննիչի անօրինական գործողությունների առնչությամբ, և ձեռնարկելու լրացուցիչ միջոցառումներ հաղորդման ստուգման որակը գնահատելու ուղղությամբ: ՀՀ քրեական դատավարության ընթացքում քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական մեթոդներ կիրառելու վերաբերյալ դատախազությանը հասցեագրված դիմում - բողոքներում բարձրացված հարցերի հավաստիությունը արագ և արդյունավետ ստուգելու և քրեադատավարական օրենքով նախատեսված համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով դատախազությանը պետք է վերապահվի ներկայացրած անձանցից, ոստիկանության աշխատակիցներից բացատրություններ վերցնելու լիազորություն[19]: Եթե դատախազը դիմումում բարձրացված հարցերի ստուգման ընթացքում պարզի, որ քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի կողմից կիրառված անօրինական մեթոդները պարունակում են հանցակազմի տարրեր, ապա նյութերը պետք է ուղարկի Հատուկ քննչական ծառայություն՝ արդեն հանցագործության փաստով քննություն անցկացնելու նպատակով:

18 ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 26.2-րդ կետի համաձայն՝ հատուկ պետական ծառայություն իրականացնող անձ են համարվում նաև ոստիկանության, ազգային անվտանգության, հարկային, մաքսային մարմինների աշխատակիցները:

19 Օրինակ՝ հարուցված քրեական գործով մեղադրյալը ստել է ինքնախոստովանական ցուցմունք, որից հետո դիմում է ներկայացրել դատախազությանը՝ հետևյալ բովանդակությամբ. «Հանգամանքներից դրդված ստորագրել եմ քննիչի կողմից գրված իրականությանը չհամապատասխանող ինքնախոստովանական ցուցմունքի տակ: Պարզաբանում եմ՝ ստորագրելուն եղել են լուրջ պատճառներ ոչ միայն քննչական մարմինների կողմից, այլև քրեական հետախուզական բաժնի աշխատակիցների կողմից կոպիտ կերպով խախտվել են սահմանադրական նորմերը: Ոչ ճիշտ ցուցմունքի տակ ստորագրելու պատճառները հիմնավոր կնշեմ ապացույցներով հետագա քննության ընթացքում»: Նշված դեպքում դատախազը պետք է հնարավորություն ունենա անմիջապես լսելու մեղադրյալին, ձեռք բերված տեղեկությունները համադրելու գործի նյութերի հետ, որից հետո լուծելու դիմումի հետագա ընթացքը:

### Ծառայողական քննությունը՝ որպես խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններով քննության ձև

Դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումներ կամ այլ անօրինական մեթոդներ կիրառելու վերաբերյալ դիմումներ ստանալով՝ գերատեսչության ղեկավարները դրանցում բարձրացված հարցերը ստուգելու և պատշաճ քննություն անցկացնելու նպատակով դրանք դատախազին կամ Հատուկ քննչական ծառայություն ուղարկելու փոխարեն նշանակում են, այսպես կոչված, ծառայողական քննություններ: Օրինակ՝ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող «Սինկրիստալ» ՍՊԸ աշխատակիցների վերաբերյալ քրեական գործով ամբաստանյալ, ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում պահվող կալանավոր Գ. Բրդոյանի նկատմամբ անվտանգության աշխատակիցների կողմից բռնություն կիրառելու հայտարարության կապակցությամբ, մինչև սույն քրեական գործի հարուցումը ՀՀ արդարադատության նախարարի 25.04.2007 թ. հրամանով նշանակվել է ծառայողական քննություն, որով չհաստատվեց Գ. Բրդոյանի նկատմամբ բռնություն գործադրելու և նրան մարմնական վնասվածք պատճառելու հանգամանքը:

Ծառայողական քննությունը՝ որպես գործունեության ինքնուրույն տեսակ, կարգավորված չէ օրենքով, իսկ եթե գերատեսչական ակտերը այս կամ այն կերպ կարգավորում են ծառայողական քննության իրականացման կարգը, ապա դրանք մատչելի չեն և չեն հրապարակվում[20]: «Ծառայողական քննությունները» ըստ էության ներգերատեսչական ստուգումներ են, որոնց արդյունքները հիմք են պետական ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Անթույլատրելի է ձևավորված այն պրակտիկան, երբ խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններով՝ ծառայողական քննությունները փոխարինում են ՀՀ քր. դատ. օր-ով սահմանված դատավարական ձևի շրջանակներում իրականացվող քննությանը: Դատախազի բազմաթիվ որոշումներում, որոնցով քրեական գործի հարուցումը մերժվել է կամ քրեական գործի վարույթը կարճվել է, պարտադիր կերպով նշվում է, որ իրականացվել է ծառայողական քննություն, որի արդյունքում չի հաստատվել խոշտանգման փաստը: Ծառայողական քննության արդյունքում կազմված գերատեսչական ակտը ձեռք է բերում անհերքելի ապացույցի ուժ, ինչը փաստորեն ենթակա չէ բեկանման և չի ստուգվում այլ ապացույցների հետ համադրությամբ և քննությամբ: Բրդոյանի գործով ծառայողական քննությունը պարզեց, որ «ձերբակալվելիս, իսկ ապա կալանավորվելիս, համապատասխանաբար ձերբակալվածների պահման վայր (ՁՊՎ) և քրեակատարողական հիմնարկ (ՔԿՀ) ընդունվելու և տեղափոխվելու ժամանակ Բրդոյանը անցել է բուժզննում, որի ընթացքում նրա մարմնի վրա վնասվածքների հետքեր չեն հայտնաբերվել: Նա իր առողջական վիճակից չի գանգատվել: Մի քանի օր անց Բրդոյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, ախտորոշվել է աջակողմյան սրտնցան ռևմոթորաքսե հիվանդությունը: Նախաքննության ընթացքում Գ. Բրդոյանը ցուցմունք էր տվել առ այն, որ իր մոտ հիվանդությունն առաջացել է ՀՀ գլխավոր դատախազությունում իր ձերբակալման օրը հատկապես կարևոր գործերով (ՀԿԳ) քննիչ Ա-ի կողմից իր աջ թևատակին բռունցքով մեկ անգամ հարվածելու հետևանքով, ինչի մասին նա ոչ մեկին չի տեղեկացրել»: Հանցակազմի բացակայությունը հիմնավորելու նպատակով դատավարական փաստաթղթում նշված է. 1. Քննիչն իր ցուցմունքներում նշել է, որ Գ. Բրդոյանի հետ երբևէ չի վիճաբանել, նրան չի վիրավորել, չի հարվածել, և այդ մասին Բրդոյանի հայտարարությունը հիմնազուրկ

20 Այդ ակտերը տեղադրված չեն «ԻՐՏԵԿ» իրավական տեղեկատվական համակարգում, որտեղ տեղադրվում են պաշտոնապես հրապարակված բոլոր ակտերը:

է: 2. Գ. Բղդոյանի նկատմամբ բռնություն գործադրելու, նրան մարմնական վնասվածք պատճառելու և դրա հետ կապված մի շարք հանգամանքներ պարզելու նպատակով քրեական գործով նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Գ. Բղդոյանը հրաժարվել է փորձագետների կողմից զննվելուց: Վերջիններս, հիմնվելով նրա հիվանդությանը վերաբերող փաստաթղթերի վրա (հիվանդության պատմություն, ռենտգեն նկարներ և այլն), տրված եզրակացության արդյունքներով հերքել են հիվանդության առաջացումը բռնություն կիրառելու հետևանքով:

Վերը նշված դեպքը դասական օրինակ է, երբ դատախազը, հիմնվելով բացառապես ծառայողական քննության եզրակացության վրա, չի անդրադառնում այն հանգամանքներին, թե ինչու է մեղադրյալը հրաժարվել անցնել այդ փորձաքննությունը (չի վստահել նշանակած փորձագետներին), հնարավո՞ր է միայն էպիկրիզի հիման վրա հանգել տվյալ եզրակացությանը, ինչպե՞ս եղավ, որ քրեակատարողական հիմնարկ բերելիս Գ. Բղդոյանի մոտ բռնության որևէ հետք չէր գրանցվել և այլն:

Նմանապես, ոստիկանության բաժանմունքներում դժբախտ պատահարների առնչությամբ փաստաբանները, իրավապաշտպան կազմակերպությունները հայտարարում են, որ, որպես կանոն, քրեական հետապնդման մարմինը սկզբից ևեթ առավելապես կողմնորոշված է լինում միայն դժբախտ պատահարի վարկածը հաստատելուն, ինչի հետևանքով անուշադրության են մատնվում կամ արհամարհվում տրամաբանորեն ենթադրվող և՛ տուժողի իրավահաջորդի, և՛ նրա ներկայացուցիչների կողմից առաջ քաշված այլ վարկածները և դրանք հիմնավորող ապացույցները:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի՝ Վանաձորի գրասենյակի տնօրեն Ա. Սաքունցը մեզ տեղեկացրեց, որ 2008 թ. հունվարին հաղորդում էր ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն, որով ահազանգել էր մի շարք քրեական գործերով իրականացվող քննության ընթացքում իրավապահների կողմից կիրառված խոշտանգումների մասին: Դրանցից հատկապես աղմկալից էին Լոռու մարզի դատախազի սպանության, Վանաձորի առևտրային կենտրոնի գողության գործով քննության ընթացքում կիրառված բռնությունները (Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի՝ Վանաձորի գրասենյակ, Հելսինկյան ասոցիացիա): Դատախազությունից ստացված պատասխանում կրկին ասվում է. «Քրեական գործի քննության ընթացքում կիրառված բռնությունների կապակցությամբ ծառայողական քննություն է իրականացվել ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության աշխատակիցների կողմից: Օպերլիազորը ենթարկվել է կարգապահական տույժի, ևս երկու աշխատակիցների հարցը քննարկվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություններում: Ինչ վերաբերում է բռնությունների կիրառմանը, ապա լրացուցիչ տվյալներ ձեռք չեն բերվել»: Մեկ այլ գործով՝ դատախազությունը տեղեկացրեց պ-ն Սաքունցին, որ հարուցվել է քրեական գործ ՀՀ քր. օր-ի 341-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (խոշտանգմամբ ցուցմունք կորզելու հանցակազմ), սակայն քննության ընթացքում քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում է կայացվել հանցագործության դեպքի բացակայության հիմքով: Բացի այդ, խոշտանգումների մասին հայտարարությունների մի զգալի զանգված մնում է անհետևանք, դրանց վերաբերյալ չի անցկացվում պատշաճ քննություն[21]: Մի գործով քրեական

21 Խոշտանգման վերաբերյալ հայտարարություններ հաճախ արվում են մամուլում, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն դիտվում են քրեական գործ հարուցելու առիթ: 2007թ. հոկտեմբերի 3-ի «ՀՀ կոլեգիայի որոշումներում, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների առանձին հանձնարարականներում փոփոխություններ մտցնելու մասին» որոշման 1.10-րդ կետով մարզերի, Երևան քաղաքի, համայնքների և կայազորների դատախազներին հանձնարարվել է կատարված հանցագործությունների, տեղ գտած օրինախախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումների մասին անհապաղ զեկուցել ՀՀ գլխավոր դատախազին՝ հետագա ընթացք տալու համար: Պարբերաբար ստուգել այդ

գործի հարուցումը մերժելու, մեկ այլ դեպքում՝ հարուցված գործը կարճելու դատախազության որոշումները չեն բողոքարկվել դատարան:

Հարցազրույցների ժամանակ իրավապաշտպան կազմակերպությունները բարձրացրին երկու խնդիր.

1. Դատարանների նկատմամբ վստահության պակասը: Տուժողների ստվար զանգվածը խուսափում է իրավապահ մարմիններից, իսկ ՀՀ դատական համակարգն ընկալվում է ոչ թե որպես իշխանության անկախ թև, այլ՝ դատական գերատեսչություն:
2. Իրավապաշտպան կազմակերպությունները չեն կարող բողոքարկել, ասենք, քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը, քանի որ չեն հանդիսանում տուժող և օժտված չեն նման լիազորությամբ:

Հիմնվելով Կոմիտեի կողմից քննված, ինչպես նաև այս հետազոտության ընթացքում մեզ տրամադրված գործերի վերլուծության վրա՝ կարող ենք առանձնացնել հետևյալ հանգամանքները (ազդակները), որոնց հաստատման ուղղությամբ պետք է դարձնի դատարանը: Ազդակներից մեկի կամ մի քանիսի առկայությունը կարող է դիտվել իբրև խոշտանգումների կիրառման հիմք և հնարավորություն տալ դատարանին եզրահանգելու, որ ստացված հաղորդումը պատշաճ չի ստուգվել, կամ դեպքի առնչությամբ պատշաճ քննություն չի իրականացվել, ինչի հետևանքով քրեական գործով վարույթը կարճվել է:

- Բժշկական փաստաթղթեր (էպիկրիզ), ինչպես նաև ցանկացած բժշկական եզրակացություն առ այն, որ ենթադրյալ զոհը պետք է ստացիոնար բուժում անցնի հիվանդանոցում:
- Իրեղեն ապացույցներ, ասենք՝ նկարներ, որտեղ անձը ծեծված է:
- Այլ անձանց վկայությունը առ այն, որ անձը ենթարկվել է խոշտանգման: Բժշկական եզրակացության բացակայության դեպքում մոր, քրոջ կամ այլ անձի կողմից գրավոր վկայություն է ներկայացվել, որ մինչև ոստիկանության բաժանմունք գնալը «զոհը» եղել է ֆիզիկապես նորմալ վիճակում, մինչդեռ վերադառնալիս՝ բռնության հետքերով[22]:
- Անուղղակի ապացույցներ, մասնավորապես իրավապաշտպան կազմակերպության հայտարարությունները, որոնք, անցկացնելով հասարակական հետաքննություն, զրուցել են տուժողների և վկաների հետ: Այս կազմակերպությունների վկայությունները կարևոր նշանակություն ունեն, քանի որ տուժողները կամ վկաները հաճախ խուսափում են ոստիկանություն սեփական նախաձեռնությամբ ներկայանալուց[23]:

---

հանձնարարությունների կատարումը և կիսամյակը մեկ վերլուծությունների արդյունքները ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին: 2008 թ. մայիսի 5-ին ՀՀ գլխավոր դատախազը կրկին ցուցում է տվել օրինախախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումների մասին անհապաղ զեկուցելու վերաբերյալ:

22 Mr. Dragan Dimitrijevic v Serbia and Montenegro, CAT/C/33/D/207/2002, 29 November 2004.

23 http://www.hahr.am/index.php?option=com–content&task=view&id=86&Itemid=40
Իրավապաշտպան Միքայել Դանիելյանը ՁԼՄ-ով հայտարարություն է արել այն մասին, որ Վանաձորի դատախազի պաշտոնության գործով դատախազություն բերման են ենթարկվել մի քանի տասնյակ մարդիկ և պահվել այնտեղ 3-4 օր: Հայտարարությունում Մ. Դանիելյանը հավելեց, որ ունի 29-ամյա Կ. Դ-ի նկարները, նա ծեծված է: Իրավապաշտպանը զրուցել է նաև մասնուցող 21-ամյա Ա. Ն-ի հետ, որին նույնպես ծեծել են դատախազությունում, և ով նույնիսկ իրավապաշտպանի հետ զրուցելիս վախից լաց էր լինում: Մասնուցողուհի Ա. Թ-ին չէին ծեծել, սակայն հայհոյել էին և սպառնացել: Պահել էին երեկոյան 11-ից մինչև գիշերվա 1-ը: «Մեկ այլ մասնուցողուհու՝ Ս. Փ-ին արդեն ծեծել էին, և դա

- Առանց փաստաբանի մասնակցության hargafննություն: Պեsf է պարզել՝ տեղեկացե՞լ է անձը իր կողմից hրավիրված փաստաբանի մասնակցությամբ hargafննվելու իր իրավունfի մասին: Ընդհանուր առմամբ, նախնական fննությանը փաստաբանի մասնակցությունը նվազեցնում է նրա վստահորդների կամ պաշտպանյալների նկատմամբ բռնություններ, խոշտանգումներ կիրառելու hնարավորությունը: Սակայն փաստաբանի մասնակցությունը ինfնին չի բացառում խոշտանգում կիրառելու փաստը: Օրինակ՝ Վճռաբեկ դատարանի պալատը նշել է. «Բողոfում բերված այն պաշտառաբանությունը, որ խոստովանական ցուցմունfները դատապարտյալներից կորզվել են fննության խորթ մեթոդների կիրառմամբ, անհիմն են և չեն բխում գործի sվյալներից, fանի որ թե՛ Փիլիպոսյանը, թե՛ Սարգսյանը պաշտպաններով ապահովված են եղել նախաfննության hենց սկզբից, և բոլոր ցուցմունքները նրանf svել են պաշտպանների ներկայությամբ: Վերջիններս մասնակցել են նաև fննչական փորձարարությանը, և նրանց կողմից որևէ ahազանգ, որ իրենց պաշտպանյալների նկատմամբ կիրառել են բռնություն, չի եղել»[24]: Մեկ այլ դեպfում՝ Վճռաբեկ դատարանի պալատը նշել է, որ, դատարանը իրավացիորեն ճիշտ է hամարել Վ. Մարգարյանի՝ ամբողջ նախաfննության ժամանակ, նաև իր պաշտպանի ներկայությամբ, sված ցուցմունfները[25]: Անվիճելի է, որ ձերբակալվածի (կասկածյալի)՝ պաշտպան ունենալու իրավունfը նրան վերապահված դատավարական իրավունfներից ամենահիմնականն է, սակայն, կարծում ենf, չպեsf է բացարձակացնել նախնական fննությանը պաշտպանի մասնակցության hանգամանfը և դրանով իսկ առհասարակ բացառել դատավարության մասնակիցների նկատմամբ խոշտանգումներ կիրառելու hնարավորությունը: Հասկապես պեsf է hաշվի առնել, որ եթե կասկածյալը կամ մեղադրյալը ձերբակալված կամ կալանավորված է, ապա նրա նկատմամբ խոշտանգումներ կարող են կիրառվել նաև մինչև դատավարական գործողություններ կատարելը կամ դրանից hեsո՝ այն ժամանակ, երբ պաշտպանը բացակայում է: Խնդիրն այն է, որ անօրինական մեթոդներ, որպես կանոն, կիրառում են ոչ թե fննիչները, այլ օպերատիվ աշխատակիցները և ոչ թե fննչական գործողությունների ընթացfում, այլ դրանից առաջ կամ hեsո: Դեռևս արդիական է մնում ազատությունից զրկված կամ ազատության մեջ գտնվող կասկածյալների, մեղադրյալների hետ օպերատիվ աշխատակիցների, fննիչների ոչ դատավարական hանդիպումների իրավաչափության և թույլատրելիության hարցը:

- Ենթադրյալ զոհը անօրինական պահվել է բաժանմունfում՝ չունենալով որևէ կարգավիճակ և առանց որևէ դատավարական փաստաթղթի, կամ խախտվել են ազատության մեջ պահելու ժամկետները[26]:

արել էր Վանաձորի դատախազության fննիչ Սարգսես Խաչատրյանը»,- իր խոսfն ամփոփեց Հելսինկյան ասոցիացիայի նախագահը:

24 Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի fրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու (2000-2001թթ.), hատ. երկրորդ, էջ 196:

25 Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի fրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու (2000-2001թթ.), hատ. երկրորդ, էջ 180:

26 Mr. Danilo Dimitrijevic v Serbia and Montenegro, CAT/C/35/D/172/2000, 29 November 2005

- Ոստիկանի անօրինական գործողությունները, օրինակ՝ ոստիկանների առանց խուզարկություն իրականացնելու թույլտվության մտնում են բնակարան, և կասկածյալը «իրեն մասնահանից դուրս է նետում»[27]:
- Վկայի բացակայությունը, որը կհաստատի, որ անձը դժբախտ դասահարի արդյունքում է մահացել[28]:
- Հատկապես «դժբախտ դասահարների» դեպքում պետք է հաշվի առնել զոհվածի մինչ այդ դրսևորած վարքագիծը, մասնավորապես իրավապահ մարմինների հետ համագործակցելը, տարբերաբար հարցաքննություններին ներկայանալը, ինչը որոշակի առումով բացառում է նրա կողմից փախուստի դիմելու, ինքնասպանություն կատարելու վարկածները և այլն
- Ոստիկանության կողմից դեպքի առնչությամբ չեն հարցաքննվել դասահարի բոլոր ականատեսները:
- Հարցաքննությանը մասնակցել են օպերատիվ աշխատողներ, որոնց մասնակցությունը չի պահանջվում դատավարական օրենքով:
- Խոշտանգումներ, բռնություն կիրառելու հայտարարությունները հաճախ արվում են իրավապահ մարմինների միևնույն աշխատակիցների դեմ:
- Հայտարարություններում նշվում են կոնկրետ անուններ, որոնք մասնակցել են խոշտանգումներին[29]:
- Դատախազի որոշումը բացառապես հիմնվում է ծառայողական քննության արդյունքում կազմված եզրակացության վրա, բազմակողմանի և համալիր չեն ուսումնասիրվել գործում եղած բոլոր ապացույցները:
- Ծառայողական քննությունը իրականացվել է արդեն իսկ որոշ ձգձգումներով:
- Ծառայողական քննության արդյունքում կարգապահական տույժի են ենթարկվել ի սկզբանե ահազանգած բռնությունների հետ որևէ առնչություն չունեցող անձինք, ինչը արդեն վկայում է, որ վերջինս նպատակ է ունեցել «ազատել», որպես կանոն, պատասխանատու պաշտոնատար անձանց:

Առանձին գործերով կարող են առկա լինել վերը նշված ազդակներից միաժամանակ մի քանիսը: Ոստիկանության բաժանմունքում մահացած Գուլյանի մասին ոստիկանության վարկածը հետևյալն էր. նա մահացել է, երբ փախուստի փորձ անելիս ընկել է ոստիկանության շենքի երկրորդ հարկի պատուհանից: Մինչդեռ գործի հանգամանքների վերլուծությունը ի հայտ է բերում վերը նշված հանգամանքների տրակցիոն դրսևորումը: Այսպես՝ մինչև «դժբախտ դասահարը» վկան ակտիվ համագործակցել է իրավապահ մարմինների հետ, մի քանի անգամ ներկայացել հարցաքննության: Նա ապօրինի պահվել է անազատության մեջ, ընդհուպ մինչև զիջեցրել ոստիկանության բաժանմունքում: Բարեկամները վկայում են, որ նրա նկատմամբ կիրառվել է բռնություն,

27 Mr. Slobodan Nikolić; Mrs. Ljiljana Nikolić v Serbia and Montenegro, CAT/C/35/D/174/2000, 9 December 2005.

28 Slobodan Nikolić; Mrs. Ljiljana Nikolić v Serbia and Montenegro, CAT/C/35/D/174/2000, 9 December 2005.

29 http://www.hahr.am/index.php?option=com–content&task=view&id=86&Itemid=40, www. panorama.am

նշվում են կոնկրետ աՃխատակիցների անունները: Իրեն զգելիս որևէ ականատես վկա չի եղել: Հարցաքննվել է առանց փաստաբանի: Այս ամենով հանդերձ՝ դատախազության կողմից կարՃվել է քրեական գործով վարույթը:

Դատարանը քննության որակը գնահատելիս պետք է ուշադրություն դարձնի վերը նշված հարցերին: Սրանք ազդակներ են, որոնք դատավորին պետք է ուղղորդեն խոշտանգումների փաստով քրեական գործ հարուցելու միջնորդությամբ քրեական հետապնդման մարմինին դիմելիս, խոշտանգման փաստով քրեական գործի հարուցումը մերժելու կամ վարույթը կարՃելու որոշումները վերացնելիս:

***Եզրակացություն.***

1. Դատարանները դատավարության մասնակցի նկատմամբ խոշտանգում կիրառելու մասին կասկածների օբյեկտիվ հատկանիշների առկայության դեպքում (օրինակ՝ ամբաստանյալի դեմքի վրա վնասվածքների առկայություն) հաՃախ նախաձեռնող չեն լինում այդ խնդիրը քննարկման առարկա դարձնելու հարցում:
2. Գործնականում թեև հազվադեպ, բայց և հանդիպում են դեպքեր, երբ պաշտոնապես հաստատված է, որ ապացույցը ձեռք է բերվել խոշտանգման արդյունքում, սակայն այդ փաստական տվյալները դրվում են մեղադրական դատավՃռի հիմքում:
3. Իրավակիրառ պրակտիկայում վկաների կամ դատավարության այլ մասնակիցների կողմից ցուցմունքները խոշտանգմամբ կորզելու հայտարարության կապակցությամբ ձևավորվել է այդ սուբյեկտների զրպարտության կանխավարկածը, որի պայմաններում խոշտանգման մասին հայտարարությունները հերքվում են ոչ հստակ պատՃառաբանություններով:

## *1.4. Խոշտանգման զոհերի իրավունքների պաշտպանության դատավարական և գույքային խնդիրները*

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգում ապահովում է, որ խոշտանգումների զոհը ստանա փոխհատուցում և ունենա իրավական սանկցիաներով ամրապնդված արդարացի և համարժեք փոխհատուցման իրավունք, ներառյալ առավել լիակատար արդարացման միջոցներ: Խոշտանգումների պատՃառով զոհի մահվան դեպքում արդարացման փոխհատուցման իրավունքը տրվում է նրա խնամքի տակ գտնվողներին:

ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը կարգավորում է տուժողներին[30] հանցագործությամբ պատՃառված ֆիզիկական, գույքային վնասների հատուցման ընթացակարգերը: Ընդհանուր կարգավորման համաձայն՝ հանցագործությամբ վնաս պատՃառելու դեպքում քաղաքացիաիրավական պատասխանատվություն կրում է հանցագործություն կատարող անձը:

30 Միջազգային մի շարք փաստաթղթերում օգտագործվում է «զոհ» հասկացությունը, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունում օգտագործվում է «տուժող» եզրույթը: Անձը տուժողի կարգավիՃակ է ստանում քննիչի կողմից համապատասխան որոշում կայացնելու պահից:

Անձի առողջությանը հանցագործությամբ պատճառված վնասը դիտարկվում է որպես արտապայմանագրային պարտավորություն, որի հատուցման նյութաիրավական հիմքերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ։ Նման դեպքերում պատասխանատվությունը կրում է այն անձը, ով հանցագործությամբ ֆիզիկական վնաս է հասցրել զոհերին։

Գործնականում հաճախ է պատահում, երբ բռնությամբ կատարված հանցագործությունների, այդ թվում՝ խոշտանգումների զոհերին չի հաջողվում ստանալ փոխհատուցում՝ մի շարք պատճառներով, օրինակ՝ հանցագործի գտնվելու վայրը անհայտ լինելու պատճառով։

Կոնվենցիայի իմաստով խոշտանգման զոհերին փոխհատուցում տալու պարտականությունը պետությանն է։ Այն, որ պետությունը պետք է պատասխանատվություն ստանձնի խոշտանգման զոհերին պատճառված վնասի համար, պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ խոշտանգումը կատարվում է պետական պաշտոնյա անձի կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդու կողմից կամ նրանց հրահրմամբ կամ նրանց գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ։

Միջազգային մի շարք փաստաթղթեր ամրագրում են բռնությամբ հանցագործության զոհերին փոխհատուցում տրամադրելու պետության պարտականությունը։

«Բռնությամբ կատարված հանցագործությունների զոհերին փոխհատուցելու մասին» Եվրոպական կոնվենցիայի (1983 թ. նոյեմբերի 24) նպատակն է նպաստել, որ տուժողները փոխհատուցում ստանան այն պետության կողմից, որի տարածքում կատարվել է հանցագործությունը, մասնավորապես, երբ հանցագործություն կատարած անձը չի բացահայտվել կամ փոխհատուցման միջոցներ չունի։

Կոնվենցիան նախատեսում է, որ պետությունը պարտավոր է աջակցել այն տուժողներին փոխհատուցում վճարելու հարցում, ովքեր բռնությամբ կատարված դիտավորյալ հանցագործության ուղղակի արդյունքում ծանր մարմնական վնասվածք կամ առողջությանը պատճառած վնաս են ստացել և (կամ) նման հանցագործության հետևանքով մահացածի խնամքի տակ գտնվող անձ են։ Ըստ Կոնվենցիայի՝ նշված անձանց փոխհատուցում պետք է տրվի նույնիսկ այն դեպքում, երբ հանցանք կատարած անձը չի կարող հետապնդվել և պատժվել։ Կոնվենցիան նախատեսում է, որ փոխհատուցումը պետք է կատարի այն պետությունը, որի տարածքում կատարվել է հանցագործությունը։ Ընդ որում, փոխհատուցումը պետք է տրվի ինչպես Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների քաղաքացիներին, այնպես էլ Եվրոպայի խորհրդի բոլոր մյուս անդամ պետությունների քաղաքացիներին, որոնց մշտական բնակության վայրը այն պետության տարածքում է, որտեղ կատարվել է հանցագործությունը։

Կոնվենցիան մասնակիցներին լիազորում է նվազեցնել կամ ընդհանրապես մերժել փոխհատուցման տրամադրումը՝ հաշվի առնելով դիմողի ֆինանսական վիճակը, ինչպես նաև տուժողի կամ դիմողի գործողությունները մինչև հանցագործությունը, դրա ընթացքում կամ դրանից հետո կամ կապված այլ հանգամանքների հետ։

«Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների» ՄԱԿ-ի հռչակագրի (ընդունվել է 1985 թ. նոյեմբերի 29-ին 40/34 բանաձևով)

համաձայն՝ այն դեպքերում, երբ հնարավոր չէ իրավախախտից կամ այլ աղբյուրներից փոխհատուցումը ամբողջ ծավալով ստանալ, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն դրամական փոխհատուցում տրամադրելու. ա. այն զոհերին, որոնք ծանր հանցագործությունների հետևանքով ստացել են մարմնական վնասվածքներ կամ էականորեն խաթարել են ֆիզիկական ու հոգեկան առողջությունը, բ. ընտանիքներին, մասնավորապես խնամակալ անձանց, որոնք մահացել են կամ դարձել են ֆիզիկապես կամ հոգեպես անգործունակ այդպիսի վիկտիմիզացիայի:

*ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ անհրաժեշտ է հստակ ամրագրել, որ բռնությամբ կատարված հանցագործության, այդ թվում խոշտանգումների տուժողներին, որոնց պատճառվել է մարմնական կամ հոգեկան վնաս, պետությունը տրամադրում է փոխհատուցում, եթե հնարավոր չէ հանցագործություն կատարած անձից կամ այլ աղբյուրներից փոխհատուցումը ամբողջ ծավալով ստանալ: ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ անհրաժեշտ է նախատեսել այն դեպքերը, երբ հանցագործության զոհերի փոխհատուցումը տրամադրում է պետությունը: Այդ նպատակով ՀՀ պետական բյուջեով անհրաժեշտ է նախատեսել համապատասխան միջոցներ:*

## *1.5. Խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությունը կամ դրանց օգտագործման սահմանները*

Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ որևէ դատական հարցաքննության ընթացքում իբրև ապացույց չօգտագործվի որևէ հայտարարություն, որը, ինչպես պարզվել է, արվել է խոշտանգման ազդեցության տակ, բացի այն դեպքերից, երբ դա խոշտանգելու մեջ մեղադրվող անձի դեմ այդ հայտարարությունն արվելու ապացույց է հանդիսանում:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը: ՀՀ քր. դատ. օր-ի 105-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով:

Փաստաբանների, դատավորների և դատախազների հետ հարցազրույցներից պարզվել է, որ դատական պրակտիկայում հազվադեպ են այն դեպքերը, երբ պաշտոնապես հաստատված է, որ ապացույցը ձեռք է բերվել խոշտանգման արդյունքում, սակայն դրա արդյունքում ձեռք բերված փաստական տվյալը քրեական դատավարությունում դրվել է մեղադրական դատավճռի հիմքում:

Նման եզակի դեպքերից է Միշա Հարությունյանի գործը: Թիվ 1-11/02 քրեական գործի քննության ընթացքում պաշտպան Հ. Ալումյանը վիճարկել է գործով մեղադրյալ Մ. Հարությունյանի և վկաներ Գ. Տավարածյանի և Կ. Անտոնյանի կողմից տրված ցուցմունքները՝ դրանց թույլատրելիության տեսանկյունից: Պաշտպանը պնդել է, որ վերջիններս այդ ցուցմունքները տվել են ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից կիրառված խոշտանգումների արդյունքում, ինչի վերաբերյալ արդեն հարուցված քրեական գործի մասին վերջինս հայտնել է դատարանին: Պաշտպանության կողմի նման միջնորդությունների և վկաների տված

ցուցմունքներից գնահատական տալով՝ դատավորի դատավճռի պատճառաբանական մասում նշվել է. «Դատարանը, գնահատական տալով Գ. Տավարածյանի, Կ. Անտոնյանի նախաքննության և դատաքննության ժամանակ տված հակասական ցուցմունքներին, գտնում է, որ իրականում հետաքննության մարմնի կողմից ռազմական ոստիկանության բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար»: Դատարանը 19.06.2002 թ. կայացրել է դատավճիռ, որի հիմքում դրվել են խոշտանգման արդյունքում ձեռք բերված ցուցմունքներ: Նման գնահատական տալով՝ դատավորն ընդունել է խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցները և դրել մեղադրանքի հիմքում, դրանով իսկ ոչ միայն արդարացրել է նշված անձանց նկատմամբ իրականացված խոշտանգումները: Սույն դատավճիռը բողոքարկվել է Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններ, որոնք դատական ակտը թողել են ուժի մեջ[31]:

ՀՀ քր. դատ. օր-ը ուղղակիորեն ամրագրում է, որ բռնությամբ ձեռք բերված փաստական տվյալը չի կարող օգտագործվել որպես ապացույց: Սակայն օրենսդրությամբ բացառություն նախատեսված չէ այն իրավիճակի համար, երբ խոշտանգմամբ ձեռք բերված փաստական տվյալը կարող է որպես ապացույց օգտագործվել խոշտանգման մեջ մեղադրվող անձի դեմ: Նշված հարցի լուծումը պահանջում է օրենսդրական կատարելագործում, սակայն դատական պրակտիկայում նման երևույթների առկայության դեպքում դատավորը կարող է ղեկավարվել Կոնվենցիայի 15-րդ հոդվածի պահանջներով և խոշտանգման մեջ մեղադրվող անձի նկատմամբ որպես ապացույց օգտագործել խոշտանգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալը:

31 Սույն գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, իսկ առաջին ատյանի դատարանի դատավորը ՀՀ արդարադատության խորհրդի որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

## 2. Խոշտանգումների արգելքը վերաբերող հիմնական միջազգային փաստաթղթեր

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ**

Ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն

**Հոդված 5.**

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, իր արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի:

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՈՒ ՊԱՏԺԻ ԱՅԼ ՁԵՎԵՐԻ ԴԵՄ (ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԵՄ)

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 1984 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի 39/46 ԲԱՆԱՁԵՎՈՎ ԵՎ ԲԱՑ Է ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ, ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՈւԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ 1987 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ՝ 27 (1) ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Գլխավոր ասամբլեան՝

վկայակոչելով Խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ու պատժի այլ ձևերից բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագիրը, որը Գլխավոր ասամբլեան ընդունել է 1975 թվականի դեկտեմբերի 9-ի իր 3452 (XXX) բանաձևով,

վկայակոչելով նաև 1977 թվականի դեկտեմբերի 8-ի իր 32/62 բանաձևը, որով նա Մարդու իրավունքների հանձնաժողովին առաջարկել էր խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայի նախագիծ կազմել Հռչակագրում մարմնավորված սկզբունքների լույսի ներքո,

այնուհետև վկայակոչելով այն, որ 1983 թվականի դեկտեմբերի 16-ի իր 38/119 բանաձևում Մարդու իրավունքների հանձնաժողովին խնդրել էր իր քառասուներորդ նստաշրջանում շտապ կարգով ավարտել նման կոնվենցիայի նախագծի մշակումը՝ նախագիծը, ներառյալ ապագա

կոնվենցիայի արդյունավետ կատարման մասին կանոնադրությունը՝ ներկայացնելու համար Գլխավոր ասամբլեային, նրա երեսունիններորդ նստաշրջանում,

զոհունակությամբ նշելով Մարդու իրավունքների հանձնաժողովի 1984 թվականի մարտի 6-ի 1984/21 բանաձևը, որով Հանձնաժողովը որոշել էր Գլխավոր ասամբլեայի քննարկմանն ուղարկել խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայի նախագծի տեքստը, որը պարունակում է աշխատանքային խմբի զեկուցագրի հավելվածը (57),

ձգտելով հասնել խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի՝ գոյություն ունեցող արգելքի (միջազգային և ազգային իրավունքի համաձայն) ավելի արդյունավետ իրականացման.

1. իր երախտագիտությունն է հայտնում Մարդու իրավունքների հանձնաժողովին Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայի նախագծի նախապատրաստման աշխատանքի համար,
2. ընդունում է և ստորագրման, վավերացման ու միանալու համար բացում է Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիան, որ բովանդակում է սույն բանաձևի հավելվածը.
3. բոլոր կառավարություններին կոչ է անում առաջնահերթ կարգով քննարկել Կոնվենցիան ստորագրելու և վավերացնելու հարցը:

**93-րդ լիագումար նիստ, 10 դեկտեմբերի 1984 թվական**

**Հավելված**

Կոնվենցիա՝ խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված սկզբունքների համաձայն՝ մարդկության ընտանիքի բոլոր անդամների հավասար և անկապտելի իրավունքների ճանաչումն ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատականությանը բնորոշ արժանապատվությունից, հաշվի առնելով Կանոնադրությանը, մասնավորապես նրա 55-րդ հոդվածի համաձայն, պետությունների պարտավորվածությունը՝ աջակցել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգմանն ու պաշտպանությանը,

հաշվի առնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (58) 5-րդ և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (59) 7-րդ հոդվածները, որոնք

երկուսն էլ նախատեսում են, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի,

հաշվի առնելով նաև 1975 թ. դեկտեմբերի 9-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ու պատժի այլ ձևերից բոլոր անձանց պաշտպանելու մասին հռչակագիրը (60),

կամենալով բարձրացնել խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ պայքարի արդյունավետությունն ամբողջ աշխարհում,

համաձայնության եկան ներքոհիշյալի մասին.

**Մաս I**

**ՀՈԴՎԱԾ 1**

1. Համաձայն սույն Կոնվենցիայի նպատակների՝ «խոշտանգում» սահմանումը նշանակում է ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն:

2. Այս հոդվածը չի վնասում միջազգային որևէ պայմանագրի կամ որևէ ազգային օրենսդրության, որոնք բովանդակում են կամ կարող են բովանդակել դրույթներ՝ առավել ընդարձակ կիրառման մասին:

**ՀՈԴՎԱԾ 2**

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ՝ իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար:

2. Ոչ մի բացառիկ իրադրություն, ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմի առկայություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող հանդիսանալ խոշտանգումների արդարացում:

3. Վերադաս պետի կամ պետական իշխանության հրամանը չի կարող համարվել խոշտանգումների արդարացում:

### ՀՈԴՎԱԾ 3

1. Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի (refouler) կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ այնտեղ նրան կարող են սպառնալ բանտային խոշտանգումները:

2. Նման հիմքերի առկայությունը որոշելու համար իրավասու իշխանությունները նկատի են առնում գործին առնչվող բոլոր հանգամանքները, համապատասխան դեպքերում՝ նաև տվյալ պետության մեջ մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող և զանգվածային խախտումների պրակտիկան:

### ՀՈԴՎԱԾ 4

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգումների բոլոր դեպքերը դիտվեն իբրև հանցագործություններ՝ իր քրեական օրենսդրության համաձայն: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաև խոշտանգմանը գործակցություն կամ մասնակցություն ունեցած ցանկացած անձի գործողություններին:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն սահմանում է համապատասխան պատիժներ այդօրինակ հանցանքների համար՝ հաշվի առնելով դրանց բնույթի ծանրությունը:

### ՀՈԴՎԱԾ 5

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել հաստատելու համար նրա իրավասությունը 4-րդ հոդվածում մատնանշված հանցագործությունների նկատմամբ՝ հետևյալ դեպքերում.

ա) երբ հանցագործությունները կատարվել են նրա իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում կամ տվյալ պետությունում գրանցված ծովային կամ օդային նավի վրա,

բ) երբ ենթադրյալ հանցագործը տվյալ պետության քաղաքացին է,

գ) երբ զոհը տվյալ պետության քաղաքացին է, և եթե տվյալ պետությունը նպատակահարմար է գտնում տարածել իր իրավասությունը նրա վրա:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն համանման կերպով ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն հաստատելու համար իր իրավասությունն այնպիսի հանցագործությունների դեպքում, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում, և պետությունը 8-րդ հոդվածի համաձայն, նրան չի վերադարձնում սույն հոդվածի 1-ին կետում նշված պետություններից որևէ մեկին:

3. Սույն կոնվենցիան չի բացառում ներքին օրենսդրությանը համապատասխանող ցանկացած քրեական իրավասության իրականացումը:

## ՀՈԴՎԱԾ 6

1. Ցանկացած մասնակից ղեsnւթյուն, nrի sարածfnւմ գsնվnւմ է 4-rդ hnդվածnւմ մաsնանcված hանցագnrծnւթյnւններից nrևէ մեկի կաsարման մեջ կասկածվnղ անձը, իr sրամադrnւթյան sակ եղած լrասվnւթյnւնը fննարկելnւց hեsn, hամnզվելnվ, nr hանգամանfներն այդ են ղահանջnւմ, կալանավnrnւմ է նrան կամ ձեռնարկnւմ է նrա ներկայnւթյnւնն աղահnվnղ իrավական այլ մի-ջnցներ: Կալանելը կամ նմանօrինակ միջnցառnւմները իrականացվnւմ են sվյալ ղեsnւթյան օrենսդrnւթյանը hամաղաsասխան, սակայն կաrnղ են sևել միայն այնfան ժամանակ, nrն անհ-rաժեcs է frեական-դաsավաrական կամ hանձնման գnrծnղnւթյnւններ ձեռնաrկելnւ hամաr:

2. Այդ ղեsnւթյnւնն անհաղաղ կաsաrnւմ է փասsեrի նախնական hեsաfննnւթյnւն:

3. Սnւյն hnդվածի 1-ին կեsի hիման վrա կալանված ցանկացած անձի ցnւյց է srվnւմ աջակցnւթյnւն՝ անհաղաղ կաղ hասsաsելnւ այն ղեsnւթյան մnsակա hամաղաsասխան նեr-կայացnւցչի hեs, nrի fաղաfացին է hամաrվnւմ նա, կամ, եթե նա fաղաfացիnւթյnւն չnւնեցnղ անձ է՝ այն ղեsnւթյան նեrկայացnւցչի hեs, nrsեղ նա սnվnrաբաr բնակվnւմ է:

4. Եrբ ղեsnւթյnւնը, սnւյն hnդվածին hամաղաsասխան, կալանnւմ է nrևէ անձի, աղա անհա-ղաղ sեղեկացնnւմ է 5-rդ hnդվածի 1-ին կեsnւմ նcված ղեsnւթյnւններին այդ անձի կալանման և այն hանգամանfների մասին, nrnնf hիմf են ծառայել նrան ձեrբակալելnւ hամաr: Սnւյն hnդ-վածի 2-rդ կեsnվ նախասեսված՝ նախնական hեsաfննnւթյnւն անցկացնnղ ղեsnւթյnւնն իr սsա-ցած sվյալների մասին csաղ hայsնnւմ է վեrnհիcյալ ղեsnւթյnւններին և մաsնանcnւմ՝ մsաղի՞r է աrդյnf իrականացնել իr իrավասnւթյnւնը, թե՝ nչ:

## ՀՈԴՎԱԾ 7

1. Մասնակից ղեsnւթյnւնը, nrի իrավասnւթյանը ենթակա sարածfnւմ բացահայsվել է 4-rդ hnդ-վածnւմ նcված hանցագnrծnւթյnւններից nrևէ մեկի կաsաrման մեջ կասկածվnղ անձը, 5-rդ hnդվածnւմ նախաsեսված՝ hանցագnrծին չվեrադաrձնելnւ դեղfեrnւմ, sվյալ գnrծը դաsական hեsաղնդման hամաr hանձնnւմ է իr իrավասnւ մաrմիններին:

2. Այս մաrմինները nrnշnւմ են կայացնnւմ այն նnւյն կաrգnվ, ինչղես լnւrջ բնnւյթի ցանկա-ցած սnվnrական hանցագnrծnւթյան դեղfnւմ՝ այդ ղեsnւթյան օrենսդrnւթյան hամաձայն: 5-rդ hnդվածի 2-rդ կեsnւմ թվաrկված դեղfեrnւմ դաsական hեsաղնդման hամաr անhrաժեcs աղացnւյցներին նեrկայացվnղ ղահանջները և դաsաղաrsnւմը եrբեf չղեsf է լինեն ղակաս խիսs, fան նrանf, nrnնf կիrառվnւմ են 5-rդ hnդվածի 1-ին կեsnւմ նcված դեղfեrnւմ:

3. Ցանկացած անձի hամաr, nrի նկաsմամբ fննnւթյnւն է կաsաrվnւմ՝ կաղված 4-rդ hnդվածnւմ մաsնանcված hանցագnrծnւթյnւններից nrևէ մեկի hեs, եrաcխավnrվnւմ է աrդաrացի վեrաբեr-մnւնf՝ hեsաfննnւթյան բnլnr աsիճաններnւմ:

## ՀՈԴՎԱԾ 8

1. 4-րդ հոդվածում մասնանշված հանցագործությունները՝ իբրև հանձնմանը հանգեցնող հանցագործություններ, ենթակա են մտցվելու հանձնման մասին մասնակից պետությունների միջև գոյություն ունեցող ցանկացած պայմանագրի մեջ: Մասնակից պետությունները պարտավորվում են նման հանցագործությունները՝ իբրև հանձնմանը հանգեցնող հանցագործություններ, ներառել հանձնման մասին իրենց միջև կնքված ցանկացած պայմանագրում:

2. Եթե հանձնումը պայմանագրի առկայությամբ պայմանավորող մասնակից պետությունը մեկ այլ մասնակից պետությունից, որի հետ ինքը չունի պայմանագիր, խնդրագիր է ստանում հանձնման մասին, նա կարող է սույն Կոնվենցիան դիտել իբրև այդպիսի հանցագործությունների դեմ հանձնման իրավական հիմք: Հանձնումն իրականացվում է այն պետության օրենսդրությամբ նախատեսված այլ պայմանների համապատասխան, որին ուղղված է հանձնման խնդրագիրը:

3. Մասնակից պետությունները, որոնք չեն պայմանավորում հանձնումը պայմանագրի առկայությամբ, իրենց միջև եղած հարաբերություններում նման հանցագործությունները դիտում են իբրև հանձնմանը հանգեցնող հանցագործություններ այն պետության օրենսդրությամբ նախատեսված պայմանների համաձայն, որին ուղղված է հանձնման խնդրագիրը:

4. Այդպիսի հանցագործությունները մասնակից պետությունների միջև հանձնման նպատակով ճանաչվում են այնպես, ինչպես եթե դրանք կատարված լինեին ոչ միայն իրենց կատարման վայրում, այլ նաև այն պետությունների տարածքներում, որոնք պետք է հաստատեն իրենց իրավասությունը 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 9

1. Մասնակից պետություններն ավելի լայն աջակցություն են ցույց տալիս միմյանց 4-րդ հոդվածում թվարկված հանցագործություններից որևէ մեկի վերաբերյալ ձեռնարկվող քրեական-դատավարական գործերի առնչությամբ, ներառյալ դատական հետապնդության համար անհրաժեշտ բոլոր ապացույցների հավաքումը, որոնք կան իրենց տրամադրության տակ:

2. Մասնակից պետությունները կատարում են իրենց պարտավորությունները սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հիմնվելով փոխադարձ իրավական օգնության մասին ցանկացած պայմանագրի վրա, որ կարող է կնքվել նրանց միջև:

## ՀՈԴՎԱԾ 10

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգումների արգելքին վերաբերող ուսումնական նյութերն ու տեղեկատվությունն ամբողջովին մտցվեն իրավապահ մարմինների, քաղաքացիական, ռազմական, բժշկական անձնակազմի, պետական պաշտոնատար անձանց և այլոց նախապատրաստական ծրագրերում, ովքեր կարող են կապ ունենալ ձերբակալության,

կալանքի կամ բանտարկության ցանկացած ձևին ենթարկված մարդկանց կալանելու, հարցաքննելու կամ նրանց հետ վերաբերվելու հետ:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն խոշտանգումների արգելքը մտցնում է ցանկացած այդպիսի անձի պարտականություններին ու գործառնություններին վերաբերող կանոնների կամ հրահանգների մեջ:

**ՀՈԴՎԱԾ 11**

Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում խոշտանգումների որևէ դեպք թույլ չտալու համար պարբերաբար քննարկում է հարցաքննությանն առնչվող կանոնները, հրահանգները, մեթոդներն ու պրակտիկան, ինչպես նաև ձերբակալության պայմաններն ու այն անձանց հանդեպ վերաբերմունքը, ովքեր ենթարկվել են ցանկացած ձևի ձերբակալության, կալանքի կամ բանտարկության:

**ՀՈԴՎԱԾ 12**

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ իր իրավասու մարմիններն անհապաղ և անաչառ հետաքննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք՝ ենթադրելու, թե խոշտանգում է կիրառվել իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում:

**ՀՈԴՎԱԾ 13**

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ ամեն մի անձ, ով պնդում է, թե ինքը ենթարկվել է խոշտանգումների, այդ պետության իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում ունենա տվյալ պետության իրավասու իշխանություններին բողոք ներկայացնելու և նրանց կողմից նմանօրինակ բողոքը անհապաղ և անաչառ կերպով հետաքննելու իրավունք: Ձեռնարկվում են միջոցներ՝ ապահովելու համար հայցվորի և վկաների պաշտպանությունը նրանց բողոքի կամ վկայական ցուցմունքի հետ կապված վաս վերաբերմունքի կամ ահաբեկման ամեն մի ձևից:

**ՀՈԴՎԱԾ 14**

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգում ապահովում է, որ խոշտանգումների զոհը ստանա փոխհատուցում և ունենա իրավական սանկցիաներով ամրապնդված արդարացի և համարժեք փոխհատուցման իրավունք, ներառյալ առավել լիակատար արդարացման միջոցներ: Խոշտանգումների պատճառով զոհի մահվան դեպքում արդարացման փոխհատուցման իրավունքը տրվում է նրա խնամքի տակ գտնվողներին:

2. Սույն հոդվածում ոչինչ չի շոշափում զոհի կամ այլոց իրավունքները ազգային օրենսդրության համաձայն գոյություն ունեցող փոխհատուցման հարցում:

## ՀՈԴՎԱԾ 15

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ որևէ դատական հարցաքննության ընթացքում իբրև ապացույց չօգտագործվի որևէ հայտարարություն, որը, ինչպես պարզվել է, արվել է խոշտանգման ազդեցության տակ, բացի այն դեպքերից, երբ դա խոշտանգելու մեջ մեղադրվող անձի դեմ այդ հայտարարությունն արվելու ապացույց է հանդիսանում:

## ՀՈԴՎԱԾ 16

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավասությանը ենթակա ցանկացած տարածքում պարտավորվում է կանխել դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձևերը, որոնք չեն մտնում 1-ին հոդվածում ներկայացվող «խոշտանգում» սահմանման մեջ, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնատար անձի կամ պաշտոնապես հանդես եկող մեկ այլ անձի կողմից կամ նրանց հրահրմամբ, գիտությամբ և լուռ համաձայնությամբ: Մասնավորապես, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներում նշված պարտավորությունները կիրառվում են խոշտանգման մասին հիշատակությունը դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի մասին հիշատակության փոխարինմամբ:

2. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն վնասում ցանկացած այլ միջազգային փաստաթղթի կամ ազգային օրենսդրության դրույթները, որոնք արգելում են դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը կամ վերաբերում են հանձնմանը կամ արտաքսմանը:

## Մաս II

## ՀՈԴՎԱԾ 17

1. Ստեղծվում է Կոմիտե ընդդեմ խոշտանգումների (այսուհետև՝ Կոմիտե), որն իրականացնում է ստորև նախատեսվող գործառնությունները: Կոմիտեն կազմվում է տասը փորձագետներից, որոնք ունեն բարոյական բարձր հատկանիշներ, հայտնի են մարդու իրավունքների բնագավառում իրազեկությամբ և հանդես են գալիս անհատական կարգով: Փորձագետներն ընտրվում են մասնակից պետությունների կողմից, ընդ որում՝ նկատի է առնվում աշխարհագրական արդարացի բաշխումը և իրավաբանական փորձ ունեցող մի քանի անձանց մասնակցության նպատակահարմարությունը:

2. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, մասնակից պետությունների առաջադրած անձանց ցուցակից: Յուրաքանչյուր մասնակից պետություն իր քաղաքացիների թվից կարող է առաջադրել մեկ թեկնածուի: Մասնակից պետությունները հաշվի են առնում այն անձանց առաջադրման նպատակահարմարությունը, ովքեր անդամակցում են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի համաձայն ստեղծված Մարդու իրավունքների կոմիտեին, և ովքեր ցանկություն են հայտնում աշխատելու Կոմիտեում:

3. Կոմիտեի անդամների ընտրությունները անցկացվում են մասնակից պետությունների խորհրդակցություններում, որոնք հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը՝ երկու տարին մեկ անգամ: Այդ խորհրդակցություններում, որտեղ քվորում է կազմում մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեում ընտրված անդամներ են համարվում Կոնվենցիայի՝ ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների ներկայացուցիչների ամենաշատ ձայները և ձայների բացարձակ մեծամասնությունը ստացած թեկնածուները:

4. Նախնական ընտրությունները անց են կացվում ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի՝ ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո: Հերթական ընտրությունների օրվանից գոնե չորս ամիս առաջ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը մասնակից պետություններին նամակ է ուղարկում՝ առաջարկելով նրանց երեք ամսվա ընթացքում ներկայացնել թեկնածուներին: Այս կերպ առաջ քաշված անձանց անունները Գլխավոր քարտուղարը ցուցակագրում է այբբենական կարգով՝ նշելով այն մասնակից պետությունները, որոնք առաջադրել են նրանց, և այդ ցուցակը ներկայացնում է մասնակից պետություններին:

5. Կոմիտեի անդամները ընտրվում են չորս տարի ժամկետով: Նրանք ունեն կրկնակի առաջադրման դեպքում վերընտրվելու իրավունք: Սակայն առաջին ընտրություններում ընտրված հինգ անդամի լիազորությունների ժամկետը լրանում է երկրորդ տարվա վերջին: Առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ հինգ անդամների անունները որոշվում են վիճակահանությամբ, խորհրդակցության նախագահի կողմից, ում մասին խոսվում է սույն հոդվածի 3-րդ կետում:

6. Կոմիտեի անդամի մահվան, պաշտոնաթողության կամ այլ պատճառներով Կոմիտեում գործելու անհնարինության դեպքում նրա թեկնածությունը սված մասնակից պետությունը, մասնակից պետությունների մեծամասնության հավանությամբ, իր քաղաքացիների թվից նշանակում է ուրիշ փորձագետի՝ մնացած ժամկետի համար: Թեկնածությունը համարվում է հավանության արժանացած, եթե մասնակից պետությունների կեսը կամ մեծ մասը ենթադրյալ նշանակման մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարից ստացած տեղեկատվությունից հետո վեց շաբաթվա ընթացքում բացասական պատասխան չի տալիս:

7. Մասնակից պետությունները իրենց վրա են վերցնում Կոմիտեի անդամների ծախսերը՝ Կոմիտեում հանձնարարություններ կատարելու ժամանակահատվածում:

**ՀՈԴՎԱԾ 18**

1. Կոմիտեն ընտրում է պաշտոնատար անձանց՝ երկու տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:

2. Կոմիտեն սահմանում է ընթացակարգի իր սեփական կանոնները, բայց այդ կանոններում, մասնավորապես, պետք է նախատեսվի հետևյալը.

ա) քվորումը կազմվում է վեց անդամից,

բ) Կոմիտեի որոշումները ընդունվում են ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ:

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն ապահովում է անհրաժեշտ անձնակազմ և պայմաններ՝ Կոմիտեի գործառնությունը սույն Կոնվենցիային համապատասխան արդյունավետորեն իրականացնելու համար:

4. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը գումարում է Կոմիտեի առաջին խորհրդակցությունը: Իր առաջին խորհրդակցությունից հետո Կոմիտեն հավաքվում է իր ընթացակարգով նախատեսված հաճախականությամբ:

5. Մասնակից պետություններն իրենց վրա են վերցնում մասնակից պետությունների ու Կոմիտեի խորհրդակցությունների հետ կապված ծախսերը, ներառյալ Միավորված ազգերի կազմակերպության ծախսերի փոխհատուցումը, ինչպես օրինակ՝ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան Միավորված ազգերի կազմակերպության կողմից ապահովվող անձնակազմի ու պայմանների վճարումը:

## ՀՈԴՎԱԾ 19

1. Մասնակից պետությունները՝ համապատասխան մասնակից պետության համար սույն Կոնվենցիայի՝ ուժի մեջ մտնելու օրվանից անցած մեկ տարվա ընթացքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով Կոմիտե են ներկայացնում զեկույցներ՝ սույն Կոնվենցիայի համաձայն իրենց պարտավորությունների կատարման բնագավառում ձեռնարկած միջոցառումների մասին: Հետագայում մասնակից պետությունները բոլոր նոր միջոցառումների մասին չորս տարին մեկ անգամ ներկայացնում են լրացուցիչ զեկույցներ, ինչպես նաև այլ զեկույցներ, որոնք կարող է պահանջել Կոմիտեն:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն այդ զեկույցներն ուղարկում է բոլոր մասնակից պետություններին:

3. Կոմիտեն քննարկում է յուրաքանչյուր զեկույց և կարող է ուղարկել դրանք համապատասխան մասնակից պետությանը՝ զեկույցի վերաբերյալ անելով ընդհանուր բնույթի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակահարմար կգտնի: Տվյալ մասնակից պետությունը ի պատասխան կարող է Կոմիտեին ներկայացնել ցանկացած դիտողություն, որն ինքը տեղին կհամարի:

4. Կոմիտեն իր տարեկան զեկուցման մեջ, որը նախապատրաստվում է 24-րդ հոդվածի համաձայն, ըստ իր հայեցողության, կարող է ընդգրկել սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան կատարած ամեն մի դիտողություն, վերջինիս վերաբերյալ տվյալ մասնակից պետությունից ստացած դիտողությունների հետ մեկտեղ: Համապատասխան մասնակից պետության խնդրանքով Կոմիտեն կարող է ընդգրկել նաև սույն հոդվածի 1-ին կետով ներկայացվող զեկույցի օրինակը:

## ՀՈԴՎԱԾ 20

1. Եթե Կոմիտեն մասնակից պետություններից որևէ մեկի տարածքում խոշտանգումների պարբերաբար կիրառման մասին լիովին հիմնավորված տվյալներ պարունակող, իր կարծիքով, հավաստի

տեղեկություններ է ստանում, նա այդ մասնակից պետությանն առաջարկում է համագործակցել այդ տեղեկատվության քննարկման հարցում և այդ նպատակով ներկայացնել իր դիտողությունները սվյալ լրատվության վերաբերյալ:

2. Հաշվի առնելով բոլոր դիտողությունները, որոնք կարող է ներկայացնել համապատասխան մասնակից պետությունը, ինչպես նաև գործին առնչվող և իր տրամադրության տակ եղած տեղեկատվությունը, Կոմիտեն կարող է նպատակահարմար գտնել իր անդամներից մեկին կամ մի քանիսին նշանակել` խորհրդապահական քննություն անցկացնելու և անհապաղ Կոմիտեին համապատասխան զեկուցագիր ներկայացնելու համար:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն անցկացվում է քննություն, Կոմիտեն ձգտում է համագործակցել համապատասխան մասնակից պետության հետ: Նման հետաքննությունը, սվյալ մասնակից պետության համաձայնությամբ, կարող է ներառել նաև այցելությունը այդ պետության տարածք:

4. Կոմիտեի անդամի կամ անդամների կողմից սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան անցկացված քննության արդյունքների քննարկումից հետո Կոմիտեն համապատասխան մասնակից պետությանն է ուղարկում այդ արդյունքները այնպիսի դիտողությունների կամ առաջարկությունների հետ մեկտեղ, որոնք նպատակահարմար են նկատվում սվյալ իրավիճակում:

5. Կոմիտեի ամբողջ աշխատանքը, որ հիշատակված է սույն հոդվածի 1-4-րդ կետերում, կրում է գաղտնի բնույթ, և այդ գործընթացի բոլոր փուլերում պետք է ձգտել համագործակցելու մասնակից պետության հետ: 2-րդ կետի համաձայն անցկացված քննության վերաբերյալ նման աշխատանքի ավարտից հետո Կոմիտեն կարող է, համապատասխան մասնակից պետության հետ խորհրդակցելով, որոշում կայացնել այդ գործի արդյունքների մասին համառոտ հաշվետվությունն իր ամենամյա զեկուցման մեջ ընդգրկելու համար, որը նախատեսասվում է 24-րդ հոդվածի համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 21

1. Սույն Կոնվենցիայի մասնակից ամեն մի պետություն, սույն հոդվածին համապատասխան, կարող է ցանկացած ժամանակ հայտարարել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը` ստանալու և քննության առնելու մասնակից պետություններից մեկի հայտարարություններին վերաբերող հաղորդագրությունները այն մասին, թե մեկ այլ մասնակից պետություն չի կատարում սույն Կոնվենցիայով նախատեսված իր պարտավորությունները: Նման հաղորդագրությունները կարող են ընդունվել և քննարկվել սույն հոդվածում շարադրված ընթացակարգի համաձայն միայն այն դեպքում, եթե դրանք ներկայացվել են այն մասնակից պետության կողմից, որը ճանաչել է Կոմիտեի իրավասությունը իր նկատմամբ: Ըստ սույն հոդվածի` Կոմիտեն չի քննարկում հաղորդագրությունները, եթե դրանք վերաբերում են նման հայտարարություն չկատարած մասնակից պետությանը: Սույն հոդվածի համաձայն` ստացված հաղորդագրությունները քննարկվում են ըստ հետևյալ ընթացակարգի.

ա) եթե որևէ մասնակից պետություն չի կատարում սույն Կոնվենցիայի դրույթները, ապա նա կարող է գրավոր ձևով հարցը ներկայացնել ի գիտություն նշված մասնակից պետությանը: Հաղորդագրություն ստացած մասնակից պետությունը ներկայացնում է գրավոր բացատրություն կամ որևէ այլ հայտարարագիր այդ հարցի պարզաբանման մասին, որը, որքանով դա հնարավոր է և նպատակահարմար, պետք է մասնանշի տվյալ հարցի առնչությամբ ձեռնարկված, ձեռնարկվող կամ ձեռնարկվելիք ներքին ընթացակարգը և միջոցառումները,

բ) եթե վեց ամսվա ընթացքում սկզբնական հաղորդագրություն ստացող պետության կողմից հարցը չի վճռվել երկու համապատասխան մասնակից պետությունների համար բավարար կերպով, այդ պետություններից ամեն մեկն իրավունք ունի հարցը ներկայացնել Կոմիտե` ծանուցելով այդ մասին թե՛ Կոմիտեին և թե՛ մյուս պետությանը,

գ) Կոմիտեն սույն հոդվածի համաձայն իրեն ուղղված հարցը քննարկում է միայն այն բանից հետո, եթե համոզվում է, որ տվյալ դեպքում բոլոր հասանելի ներքին միջոցները կիրառվել են և միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին համապատասխան` սպառել են իրենց: Այս կանոնը չի գործում այն դեպքերում, երբ այդ միջոցների կիրառումն անարդարացի կերպով ձգձգվում է կամ հազիվ թե արդյունավետ լինի սույն Կոնվենցիայի խախտման զոհ հանդիսացող անձի համար,

դ) ըստ սույն հոդվածի` հաղորդագրությունները քննարկելիս Կոմիտեն անցկացնում է փակ նիստեր,

ե) գ ենթակետի դրույթները պահպանելով` Կոմիտեն բարի ծառայություն է մատուցում համապատասխան մասնակից պետություններին` սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների հարգմամբ հարցի բարիդրացիական լուծման նպատակով: Ուստի, անհրաժեշտության դեպքում, Կոմիտեն կարող է ստեղծել հատուկ համաձայնեցման հանձնաժողով,

զ) սույն հոդվածի համաձայն` Կոմիտեն կարող է իրեն հանձնված հարցի առնչությամբ հրավիրել բ ենթակետում հիշատակված համապատասխան մասնակից պետություններին, ներկայացնել գործին վերաբերող ցանկացած տեղեկատվություն,

է) բ ենթակետում հիշատակված համապատասխան մասնակից պետություններն իրավունք ունեն ներկայացված լինել Կոմիտեում հարցի քննարկման ժամանակ և հանդես գալ բանավոր կամ գրավոր դիմումով,

ը) բ ենթակետի համապատասխան ծանուցում ստանալու օրվանից սկսած տասներկու ամսվա ընթացքում Կոմիտեն հաղորդագրություն է ներկայացնում,

- եթե հարցը որոշվում է ե ենթակետի շրջանակներում, ապա Կոմիտեն իր հաղորդագրության մեջ սահմանափակվում է փաստերի և ձեռք բերած որոշման համառոտ շարադրմամբ,

- եթե հարցը չի որոշվել ե ենթակետի դրույթների շրջանակներում, ապա Կոմիտեն իր հաղորդագրության մեջ սահմանափակվում է փաստերի համառոտ շարադրմամբ. համապատասխան մասնակից պետությունների գրավոր դիմումները և ձայնագրված բանավոր հայտարարությունները կցվում են հաղորդագրությանը:

Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հաղորդագրությունն ուղարկվում է համապատասխան մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, երբ Կոնվենցիայի հինգ մասնակից պետություն հայտարարություն են կատարում սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան: Այդպիսի հայտարարությունները մասնակից պետություններն ի պահ են հանձնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն էլ դրանց օրինակներն առաքում է մնացած մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է ետ վերցվել Գլխավոր քարտուղարի անվամբ ծանուցման միջոցով: Հայտարարության այդպիսի ետ վերցնելը չպետք է վնասի սույն հոդվածին համապատասխան արդեն հաղորդագրության առարկա դարձած որևէ հարցի քննարկումը: Որևէ մասնակից պետության ոչ մի հետագա հաղորդագրություն չի ընդունվում Գլխավոր քարտուղարի կողմից հայտարարությունը ետ վերցնելու մասին ծանուցումը ստանալուց հետո, քանի դեռ համապատասխան մասնակից պետությունը չի կատարել նոր հայտարարություն:

## ՀՈԴՎԱԾ 22

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունը կարող է ցանկացած ժամանակ սույն հոդվածին համապատասխան հայտարարել, որ ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ստանալու և քննարկելու իր իրավասության շրջանակներում գտնվող անձանց հաղորդագրությունները, ովքեր պնդում են, թե իրենք հանդիսանում են մասնակից պետության կողմից Կոնվենցիայի դրույթների խախտման զոհ, կամ նույնատիպ հաղորդագրություններ, որոնք ստացվում են նրանց անունից: Կոմիտեն չի ընդունում ոչ մի հաղորդագրություն, եթե դա վերաբերում է նման հայտարարություն չկատարած մասնակից պետությանը:

2. Սույն հոդվածի համաձայն՝ Կոմիտեն չի ընդունում որևէ անանուն կամ սույն Կոնվենցիայի հետ անհամատեղելի կամ, իր կարծիքով, նման հաղորդագրություններ ներկայացնելու իրավունքի չարաշահում պարունակող հաղորդագրություններ:

3. 2-րդ կետի դրույթների հաշվառմամբ՝ Կոմիտեն սույն հոդվածին համապատասխան իրեն ներկայացրած ամեն մի հաղորդագրության մասին տեղեկացնում է սույն Կոնվենցիայի մասնակից պետությանը: Վեց ամսվա ընթացքում հաղորդագրությունը ստացած պետությունը Կոմիտեին ներկայացնում է գրավոր բացատրություն կամ հայտարարություն, որով ճշտվում են հարցը և այդ պետության համար ընդունելի միջոցառումները:

4. Սույն հոդվածին համապատասխան ստացված հաղորդագրությունները Կոմիտեն քննարկում է այն ամբողջ տեղեկատվության լույսի ներքո, որոնք նրան են ներկայացվել տվյալ անձի կողմից կամ նրա անունից և համապատասխան մասնակից պետությունից:

5. Սույն հոդվածի համաձայն՝ Կոմիտեն չի քննարկում որևէ անձի որևէ հաղորդագրություն, եթե չի համոզվել, որ

ա) այդ հարցը չի քննարկվել և չի քննարկվում միջազգային հետաքննության կամ կարգավորման որևէ այլ ընթացակարգով,

բ) սկյալ անձը սպառել է իրավական պաշտպանության գոյություն ունեցող բոլոր ներքին միջոցները. այս կանոնը չի գործում այն դեպքերում, երբ այդպիսի միջոցների կիրառումն անարդարացիորեն ձգձգվում է կամ հազիվ թե արդյունավետ կերպով օգնի սույն Կոնվենցիայի խախտման զոհ հանդիսացող անձին:

6. Սույն հոդվածով հաղորդագրություններ քննարկելիս Կոմիտեն անցկացնում է փակ նիստեր:

7. Կոմիտեն իր կարծիքն է ներկայացնում համապատասխան մասնակից պետությանը և սկյալ անձին:

8. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, երբ սույն Կոնվենցիայի հինգ մասնակից պետություն հայտարարություն են անում սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան: Նման հայտարարությունները մասնակից պետությունների ի պահ են տալիս Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն էլ դրանց օրինակներն առաքում է մնացած մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է ետ վերցվել Գլխավոր քարտուղարի անվամբ ծանուցագրի միջոցով: Հայտարարության նման ետվերցնումը չպետք է վնաս հասցնի սույն հոդվածին համապատասխան արդեն հաղորդագրության առարկա դարձած որևէ հարցի քննարկմանը: Որևէ անձի կողմից կամ նրա անունից ուղարկված ոչ մի հետագա հաղորդագրություն սույն հոդվածի համաձայն չի ընդունվում Գլխավոր քարտուղարի կողմից՝ հայտարարությունը ետ վերցնելու մասին ծանուցումն ստանալուց հետո, քանի դեռ համապատասխան մասնակից պետությունը չի կատարել նոր հայտարարություն:

## ՀՈԴՎԱԾ 23

Կոմիտեի և հաշտ համաձայնեցման հանձնաժողովների անդամները, ովքեր կարող են նշանակվել 21-րդ հոդվածի 1-ին կետի ե ենթակետի համաձայն, ունեն Միավորված ազգերի կազմակերպության առաջադրանքով գործող փորձագետների արտոնությունների, առավելությունների և անձեռնմխելիության իրավունք, ինչպես նախատեսված է Միավորված ազգերի կազմակերպության արտոնությունների ու անձեռնմխելիության մասին Կոնվենցիայի համապատասխան բաժիններում:

## ՀՈԴՎԱԾ 24

Կոմիտեն, սույն Կոնվենցիային համապատասխան, մասնակից պետություններին և Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային է ներկայացնում իր գործունեության մասին տարեկան զեկույց:

## Մաս III

## ՀՈԴՎԱԾ 25

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրելու բոլոր պետությունների համար:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերացման գրերը ի պահ են տրվում Միա-վորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

### ՀՈԴՎԱԾ 26

Սույն Կոնվենցիան բաց է միանալու բոլոր պետությունների համար: Միացումն իրականացվում է միացման մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտու-ղարին ի պահ տալու միջոցով:

### ՀՈԴՎԱԾ 27

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում քսաներորդ վավերացման գիրը կամ միացման մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ տալուց հետո երեսուներորդ օրը:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը սույն Կոնվենցիան վավերացնում է կամ միանում է նրան քսաներորդ վավերացման գիրը կամ միացման մասին փաստաթուղթը ի պահ տալուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր սեփական վավերացման գիրը կամ միացման մասին փաստաթուղթն ի պահ տալուց հետո երեսուներորդ օրը:

### ՀՈԴՎԱԾ 28

1. Ցանկացած պետություն սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերացնելիս կամ նրան միանալիս կարող է հայտարարել, որ ինքը չի ճանաչում Կոմիտեի՝ 20-րդ հոդվածով որոշված իրա-վասությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համապատասխան վերապահում կատարած ցանկացած մասնա-կից պետություն կարող է ցանկացած ժամանակ հանել իր վերապահումը՝ այդ մասին ծանուցե-լով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

### ՀՈԴՎԱԾ 29

1. Սույն Կոնվենցիայի ցանկացած մասնակից պետություն կարող է առաջարկել և Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ներկայացնել շտկում: Այնուհետև, Միավոր-ված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը առաջարկված շտկումն ուղարկում է մասնակից պետություններին՝ խնդրելով հաղորդել իրեն՝ կողմնակի՞ց

են մասնակից պետությունների կոնֆերանսի հրավիրմանը այդ առաջարկությունը քննարկե-լու և քվեարկելու նպատակով: Եթե այդպիսի նամակ ուղարկելու օրվանից անցած չորս ամս-վա ընթացքում մասնակից պետությունների գեթ մեկ երրորդը արտահայտվում է նմանօրինակ կոնֆերանսի օգտին, Գլխավոր քարտուղարը հրավիրում է կոնֆերանս Միավորված ազգերի

կազմակերպության հովանու ներքո: Այդ կոնֆերանսին ներկա և քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների մեծամասնության կողմից ընդունված ցանկացած շտկում Գլխավոր քարտուղարը ներկայացնում է հաստատման բոլոր մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված շտկումն ուժի մեջ է մտնում այն բանից հետո, երբ սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների երկու երրորդը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցում է իրենց օրենսդրական ընթացակարգի համաձայն տվյալ շտկումն ընդունելու մասին:

3. Երբ շտկումներն ուժի մեջ են մտնում, պարտադիր են դառնում այն մասնակից պետությունների համար, որոնք դրանք ընդունել են, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Կոնվենցիայի այն դրույթներն ու նախորդ ցանկացած շտկումները, որոնք իրենք ընդունել են:

## ՀՈԴՎԱԾ 30

1. Երկու կամ ավելի մասնակից պետությունների միջև սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հարցում ցանկացած վեճ, որը հնարավոր չէ կարգավորել բանակցությունների միջոցով, նրանցից մեկի խնդրանքով տրվում է արբիտրաժ: Եթե արբիտրաժի մասին խնդրանքը հանձնելու օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում կողմերն ի վիճակի չեն համաձայնության գալ արբիտրաժի կազմակերպման հարցում, ցանկացած կողմի խնդրանքով վեճը կարող է փոխանցվել Միջազգային դատարան՝ դատարանի ստատուտի համաձայն:

2. Յուրաքանչյուր պետություն սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերացնելիս կամ դրան միանալիս կարող է հայտարարել, որ ինքն իրեն կապված չի համարում սույն հոդվածի 1-ին կետի դրույթներով: Մյուս մասնակից պետությունները սույն հոդվածի 1-ին դրույթներով ևս կապված չեն լինի նման վերապահում կատարած ցանկացած մասնակից պետության հետ:

3. Որևէ մասնակից պետություն, որն արել է վերապահում սույն հոդվածի 2-րդ կետի համապատասխան, ցանկացած ժամանակ կարող է հանել իր վերապահումը՝ այդ մասին ծանուցելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

## ՀՈԴՎԱԾ 31

1. Ցանկացած մասնակից պետություն կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցման միջոցով: Չեղյալությունն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի անց:

2. Այդպիսի չեղյալ հայտարարելը մասնակից պետությանը չի ազատում սույն Կոնվենցիայի գծով իր պարտավորություններից՝ ցանկացած գործողության կամ թերացման հարցում, որը կատարվել է չեղյալությունն ուժի մեջ մտնելուց առաջ, և չեղյալ հայտարարելը երբեք չի վնասում այն

հարցի fննարկումը շարունակելուն, որն արդեն fննարկվել է Կոմիsեում մինչև չեղյալության` ու-ժի մեջ մsնելը:

3. Որևէ մասնակից ղեsության համար չեղյալությունն` ուժի մեջ մsնելուց հեsո Կոմիsեն չի սկսում sվյալ ղեsությանը վերաբերող նոր հարցերի fննարկում:

#### ՀՈԴՎԱԾ 32

Միավորված ազգերի կազմակերղության Գլխավոր fարsուղարը Միավորված ազգերի կազմակերղության բոլոր անդամ ղեsություններին և սույն Կոնվենցիան ստորագրած կամ նրան միացած բոլոր ղեsություններին sեղեկացնում է

ա) ստորագրման, վավերացման և միացման մասին` 25-րդ և 26-րդ հոդվածներին համաղաsասխան,

բ) սույն Կոնվենցիան 27-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ մsնելու և ցանկացած ըsկում ըսs 29-րդ հոդվածի ուժի մեջ մsնելու մասին,

գ) չեղյալ հայsարարություններին մասին` 31-րդ հոդվածին համաղաsասխան:

#### ՀՈԴՎԱԾ 33

1. Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, արաբերեն, իսղաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն sեfsերը հավասարաղես բնագրային են, ի ղահ է sրվում Միավորված ազգերի կազմակերղու-թյան Գլխավոր fարsուղարին:

2. Միավորված ազգերի կազմակերղության Գլխավոր fարsուղարը սույն Կոնվենցիայի վավե-րացված օրինակներն առաfում է բոլոր ղեsություններին:

57. E/CN.4/1984/72:

58. Բանաձև 217 Ա (III):

59. Sե՛ս բանաձև 2200 Ա (XXI):

60. Բանաձև 3452 (XXX):

61. Բանաձև 22 Ա (I):

# ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ներածություն

Սույն Արձանագրության մասնակից պետությունները,

վերահաստատելով, որ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արգելված են և հանդիսանում են մարդու իրավունքների լուրջ խախտում,

համոզված լինելով, որ հետագա միջոցներ են անհրաժեշտ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի (այսուհետ` Կոնվենցիա) նպատակներն իրականացնելու և ազատազրկված անձանց` խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանությունն ուժեղացնելու համար,

հիշեցնելով, որ Կոնվենցիայի 2-րդ և 16-րդ հոդվածները յուրաքանչյուր մասնակից պետության պարտավորեցնում են արդյունավետ միջոցներ ձեռնարկել խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն իր իրավազորությանը ենթակա ցանկացած տարածքում կանխարգելելու համար,

ընդունելով, որ պետությունները ունեն առաջնային պատասխանատվություն այդ հոդվածների իրականացման համար. որ ազատազրկված անձանց պաշտպանության ուժեղացումն ու նրանց` մարդու իրավունքների լիակատար հարգումը հանդիսանում են բոլորի ընդհանուր պատասխանատվությունը, և որ միջազգային իրականացնող մարմինները լրացնում և ամրապնդում են ներպետական մակարդակով իրականացվող միջոցառումները,

հիշեցնելով, որ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ կանխարգելումը պահանջում է ուսուցում և տարբեր օրենսդրական, վարչական, դատական և այլ միջոցների համակցում,

հիշեցնելով նաև, որ Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովը հստակորեն հայտարարել է, որ խոշտանգումների վերացմանն ուղղված ջանքերը պետք է նախ և առաջ ուղղված լինեն կանխարգելմանը, և կոչ է արել ընդունել Կոնվենցիայի կամընտիր արձանագրություն` ազատազրկման վայրեր պարբերական այցելությունների կանխարգելման համակարգ ստեղծելու մտադրությամբ,

համոզված լինելով, որ ազատազրկված անձանց պաշտպանությունը խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ

պատժից հնարավոր է ուժեղացնել ազատազրկման վայրեր պարբերական այցելությունների վրա հիմնված կանխարգելիչ բնույթի ոչ իրավական միջոցներով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

## ՄԱՍ I

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

### Հոդված 1

Սույն Արձանագրության նպատակն է ստեղծել անկախ միջազգային և ազգային մարմինների՝ ազատազրկման վայրեր կանոնավոր այցելությունների համակարգ՝ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու համար:

### Հոդված 2

1. Կստեղծվի Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ենթակոմիտե (այսուհետ՝ Կանխարգելման ենթակոմիտե), որը կիրականացնի սույն Արձանագրությամբ ամրագրված գործառույթներ:

2. Կանխարգելման ենթակոմիտեն կիրականացնի իր աշխատանքները Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության շրջանակներում և կղեկավարվի նրա նպատակներով ու սկզբունքներով, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի մասին նորմերով:

3. Կանխարգելման ենթակոմիտեն հավասարապես կղեկավարվի գաղտնիության, անկողմնակալության, անաչառության, համընդհանրության և օբյեկտիվության սկզբունքներով:

4. Կանխարգելման ենթակոմիտեն և մասնակից պետությունները կհամագործակցեն սույն Արձանագրության իրականացման հարցում:

### Հոդված 3

Յուրաքանչյուր մասնակից պետություն ազգային մակարդակով կստեղծի, կնշանակի կամ կպահի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելմամբ զբաղվող մեկ կամ մի քանի՝ այցելություն իրականացնող մարմին (այսուհետ՝ կանխարգելման ազգային մեխանիզմ):

**Հոդված 4**

1. Յուrաfանչյուr մասնակից ոtեsnւթյուն ոtեsf է թույլաsrի սույն Աrձանագrության համաձայն, 2-rդ և 3-rդ հոդվածնեrում նշված մեխանիզմնեrով այցելություննեrը իr իrավազոrության և hսկողության նեrfn գsնվող ցանկացած վայr, nrsեղ անձինf զrկված են կամ կաrող են զrկվել իrենց ազատությունից (այսուհեs՝ կալանավայrեr) ոtեsական մաrմնի կողմից srված hrամանով կամ նrա hrահrումով, ինչոtես նաև նrա համաձայնությամբ կամ թույլsվությամբ: Այդ այցելություննեrը ոtեsf է նախաձեռնվեն այդ անձանց՝ խոշտանգումնեrից և այլ դաժան, անմաrդկային կամ աrժանաոtասվությունը նվասsացնող վեrաբեrմունfից կամ ոtաsժից ոtաշտոtանությունը անհrաժեշsության դեոtfում ուժեղացնելու նոtաsակով:

2. Սույն Աrձանագrության նոtաsակնեrի համաr ազատազrկում նշանակում է անձին ցանկացած ձևով կալանfի sակ ոtահել կամ բանsաrկել կամ անձին hսկողության sակ ոtահվող հանrային կամ մասնավոr վայrում sեղավոrել, nrն անձին nrևէ դաsական, վաrչական կամ այլ մաrմնի nrոշմամբ չի թույլաsrվում կամովին թողնել:

**ՄԱՍ II**

**ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԵ**

**Հոդված 5**

1. Կանխաrգելման ենթակոմիsեն ոtեsf է կազմված լինի sասը անդամից: Սույն Աrձանագrության hիսունեrոrդ վավեrացումից կամ նrան միանալուց hեsn Կանխաrգելման ենթակոմիsեի անդամնեrի թիվը կավելանա մինչև fսանհինգը:

2. Կանխաrգելման ենթակոմիsեի անդամնեrը ոtեsf է ընsrվեն բաrձr բաrոյական hաsկանիշնեr ունեցող անձանցից, nrnնf ոtեsf է ունենան hաsաsված մասնագիsական փոrձ աrդաrադաsության իrականացման բնագավառում, մասնավոrաոtես՝ frեական իrավունfի, բանsային կամ ոusիկանության վաrչակազմում կամ ազատազrկված անձանց նկաsմամբ վեrաբեrմունfին առնչվող sաrբեr բնագավառնեrում:

3. Կանխաrգելման ենթակոմիsեի կազմի մեջ ոtաշտաճ կեrոtով ոtեsf է հաշվի առնվի աշխաrհագrական հավասաr բաշխվածությունը և մասնակից ոtեsություննեrի fաղաfակrթության ու իrավական համակաrգեrի sաrբեr ձևեrի նեrկայացվածությունը:

4. Այդ կազմում ոtեsf է հաշվի առնվի նաև հավասաrակշռված գենդեrային նեrկայացվածությունը՝ հիմնված հավասաrության և անխsrականության սկզբունfնեrի վrա:

5. Կանխաrգելման ենթակոմիsեի անդամ կաrող են լինել նույն ոtեsության ոչ ավելի, fան եrկու fաղաfացինեr:

6. Կանխարգելման ենթակոմիտեի անդամները ղեsf է գործեն իրենց անհատական կարգավի-ճակով, ղեsf է լինեն անկախ ու անաչառ և հնարավորություն ունենան արդյունավեs կերղով աշխաsելու Կանխարգելման ենթակոմիտեում:

**Հոդված 6**

1. Յուrաfանչյուr մասնակից ղեsություն կաrող է սույն հոդվածի 2-rդ կեsի համաձայն, առաջադrել 5-rդ հոդվածում նշված որակավորումներն ունեցող և ղահանջները բավարարող մինչև երկու թեկնածուի և ղեsf է sրամադրի թեկնածուների որակավորման վերաբերյալ մանրա-մասն sեղեկաsվություն:

2. ա) Թեկնածուները ղեsf է ունենան սույն Արձանագրության մասնակից ղեsության fաղաfա-ցիություն.

բ) երկու թեկնածուներից առնվազն մեկը ղեsf է ունենա առաջադրող մասնակից ղեsության fաղաfացիություն.

գ) ղեsf է առաջադրվի մասնակից ղեsության ոչ ավելի, fան երկու fաղաfացի.

դ) մի մասնակից ղեsության կողմից մեկ այլ մասնակից ղեsության fաղաfացի առաջադրվելուց առաջ նա ղեsf է դիմի և սsանա svյալ մասնակից ղեsության համաձայնությունը:

3. Մասնակից ղեsությունների այն հանդիղման ժամկեsից առնվազն հինգ ամիս առաջ, որի ընթացfում ղեsf է sեղի ունենան ընsրությունները, Միավորված ազգերի կազմակերղության Գլխավոր fարsուղարը մասնակից ղեsություններին ղեsf է ուղարկի գրություն՝ հրավիրելով նրանց երեf ամսվա ընթացfում առաջադրել իրենց թեկնածուներին: Գլխավոր fարsուղարը ղեsf է այբբենական կարգով ներկայացնի բոլոր առաջադրված թեկնածուների ցանկը՝ նշելով նրանց առաջադրած մասնակից ղեsություններին:

**Հոդված 7**

1. Կանխարգելման ենթակոմիտեի անդամները ղեsf է ընsրվեն հեsևյալ կարգով.

ա) առաջին հերթին հաշվի է առնվելու սույն Արձանագրության 5-րդ հոդվածի ղահանջների և չափորոշիչների բավարարումը.

բ) նախնական ընsրությունը ղեsf է անցկացվի ոչ ուշ, fան սույն Արձանագրության ուժի մեջ մsնելու օրվանից վեց ամիս հեsո.

գ) մասնակից ղեsությունները ղեsf է Կանխարգելման ենթակոմիտեի անդամներին ընsրեն գաղsնի fվեարկությամբ.

դ) Կանխարգելման ենթակոմիտեի անդամների ընsրությունները ղեsf է անցկացվեն Միավորված ազգերի կազմակերղության Գլխավոր fարsուղարի կողմից երկու sարին մեկ հրավիրվող՝ մաս-նակից ղեsությունների հանդիղումների ընթացfում: Այդ հանդիղումների ժամանակ, որոնցում

մասնակից պետությունների երկու երրորդը կազմում է քվորում, Կանխարգելման ենթակոմիտեում ընտրված կհամարվեն այն անձինք, ովքեր կհավաքեն ձայների մեծ մասը և ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծ մասը:

2. Եթե ընտրության ընթացքում Կանխարգելման ենթակոմիտեի անդամ դառնալու իրավունք են ստանում մասնակից պետության երկու քաղաքացիներ, ապա Կանխարգելման ենթակոմիտեի անդամ կարող է դառնալ ձայների առավել քանակն ստացած թեկնածուն: Եթե երկու քաղաքացիներն էլ ստացել են նույն քանակությամբ ձայներ, ապա կիրառվում է հետևյալ ընթացակարգը.

ա) եթե մասնակից պետության կողմից առաջադրված թեկնածուներից միայն մեկն է տվյալ պետության քաղաքացի, ապա նա էլ պետք է դառնա Կանխարգելման ենթակոմիտեի անդամ.

բ) եթե մասնակից պետության կողմից առաջադրված երկու թեկնածուն էլ տվյալ պետության քաղաքացի են, պետք է անցկացվի առանձին գաղտնի քվեարկություն, որի արդյունքում կորոշվի, թե նրանցից ով պետք է դառնա անդամ.

գ) եթե մասնակից պետության կողմից առաջադրված և ոչ մի թեկնածու այդ պետության քաղաքացի չէ, ապա պետք է անցկացվի առանձին գաղտնի քվեարկություն, որի արդյունքում կորոշվի, թե որ թեկնածուն կդառնա անդամ:

**Հոդված 8**

Կանխարգելման ենթակոմիտեի անդամի մահվան կամ հրաժարական տալու կամ որևէ այլ պատճառով նրա պարտականությունների հետագա կատարման անհնարինության դեպքում այդ անդամին առաջադրած մասնակից պետությունը, հաշվի առնելով իրավասության տարբեր ոլորտների միջև պատշաճ հավասարակշռություն պահպանելու անհրաժեշտությունը, մինչև մասնակից պետությունների հաջորդ ժողովը աշխատելու համար պետք է առաջադրի մեկ ուրիշ անձի, որն ունի 5-րդ հոդվածում նշված որակավորումները և բավարարում է պահանջները` մասնակից պետություններից մեծ մասի կողմից նրա թեկնածությանը հավանություն տրվելու պայմանով: Հավանությունը կհամարվի ստացված, եթե Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից տեղեկացվելուց հետո վեց շաբաթվա ընթացքում մասնակից պետությունների կեսը կամ ավելին բացասաբար չարտահայտվի առաջադրված նշանակման վերաբերյալ:

**Հոդված 9**

Կանխարգելման ենթակոմիտեի անդամները կընտրվեն չորս տարի ժամկետով: Կրկին առաջադրվելու դեպքում նրանք կարող են վերընտրվել մեկ անգամ: Առաջին ընտրություններում ընտրված անդամների կեսի լիազորությունների ժամկետը պետք է լրանա երկու տարի անց. այդ անդամների անունները կորոշվեն վիճակահանությամբ` առաջին ընտրություններից անմիջապես հետո` 7-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետում նշված հանդիսման նախագահողի կողմից:

**Հոդված 10**

1. Կանխարգելման ենթակոմիտեն ղեsf է ընsrի իr ղաշsnնասար անձանց երկու sաrի ժամկեsով: Նrանf կարող են վերընsrվել:

2. Կանխարգելման ենթակոմիտեն ղեsf է սահմանի իr ընթացակարգի կանոնները: Այդ կանոնները, inter alia, ղեsf է նախաsեսեն, nr

ա) անդամների կեսը, գումարած մեկ անդամը, կկազմի fվnrում.

բ) Կանխարգելման ենթակոմիsեի nrnշումները ղեsf է ընդունվեն ներկա գsնվող անդամների ձայների մեծ մասով.

գ) Կանխարգելման ենթակոմիsեն իr հանդիղումներն անցկացնելու է դռնփակ:

3. Միավորված ազգերի կազմակերղության Գլխավոr fարsnւղարը կիրավիրի Կանխարգելման ենթակոմիsեի առաջին ժողովը: Իr առաջին հանդիղումից հեsn Կանխարգելման ենթակոմիsեն հանդիղումները կանցկացնի իr ընթացակարգի կանոններով սահմանված ղարբերականությամբ: Կանխարգելման ենթակոմիsեն և Խոշsանգումների դեմ կոմիsեն առնվազն sաrին մեկ անգամ իրենց նիսsերը կանցկացնեն միաժամանակ:

## ՄԱՍ III

## ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻ ՄԱՆԴԱՏԸ

**Հոդված 11**

1. Կանխարգելման ենթակոմիsեն ղեsf է.

ա) այցելի 4-րդ հոդվածում նշված վայրերը և խnrհrդաsվություններ կազմի մասնակից ղեsnւթյունների համար՝ խոշsանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանաղաsվությունը նվասsացնող վերաբերմունքից կամ ղաsժից ազաsագrկված անձանց ղաշsղանության վերաբերյալ.

բ) կանխարգելման ազգային մեխանիզմների վերաբերյալ՝

i) sրամադրի խnrհrդաsվություն և, անհrաժեշsության դեղfում, աջակցի մասնակից ղեsnւթյուններին դrանց սsեղծման գործում.

ii) աղահովի անմիջական և, անհrաժեշsության դեղfում, գաղsնի կաղ կանխարգելման ազգային մեխանիզմների հեs և նrանց առաջարկի կարողությունների ուժեղացմանն ուղղված ուսուցում և sեխնիկական աջակցություն.

iii) sրամադրի խnrհrդաsվություն և աջակցի նrանց՝ խոշsանգումներից և այլ դաժան, անմարդկային և արժանաղաsվությունը նվասsացնող վերաբերմունքից կամ ղաsժից ազաsագrկված

անձանց պաշտպանությունն ուժեղացնելու համար անհրաժեշտ կարիքների և միջոցների գնահատման հարցում.

iv) կազմի խորհրդատվություններ և դիտողություններ մասնակից պետությունների համար՝ նպատակ ունենալով ուժեղացնել կանխարգելման ազգային մեխանիզմների կարողությունները և մանդատը խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման համար.

գ) ընդհանրապես խոշտանգումների կանխարգելման նպատակով համագործակցի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից բոլոր անձանց պաշտպանությունը ուժեղացնելու ուղղությամբ գործող՝ Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան մարմինների և մեխանիզմների, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային և ազգային ինստիտուտների կամ կազմակերպությունների հետ:

**Հոդված 12**

Կանխարգելման ենթակոմիտեին 11-րդ հոդվածով ամրագրված նրա մանդատն իրականացնելու հնարավորություն ընձեռելու համար մասնակից պետությունները պարտավորվում են.

ա) ընդունել Կանխարգելման ենթակոմիտեին իրենց տարածքում և թույլ տալ նրան մուտք գործել սույն Արձանագրության 4-րդ հոդվածով սահմանված կալանավայրեր.

բ) տրամադրել ամբողջ համապատասխան տեղեկությունները, որոնք Կանխարգելման ենթակոմիտեն կարող է պահանջել այն կարիքներն ու միջոցները գնահատելու համար, որոնք պետք է ընդունվեն՝ խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատազրկված անձանց պաշտպանությունն ուժեղացնելու համար.

գ) խրախուսել և դյուրացնել Կանխարգելման ենթակոմիտեի և կանխարգելման ազգային մեխանիզմների միջև կապերը.

դ) ուսումնասիրել Կանխարգելման ենթակոմիտեի խորհրդատվությունները և վերջինիս հետ ծավալել երկխոսություն դրանց իրականացման հնարավոր միջոցների վերաբերյալ:

**Հոդված 13**

1. Կանխարգելման ենթակոմիտեն կսահմանի (սկզբում՝ վիճակահանությամբ) մասնակից պետություններ պարբերաբար կատարվելիք այցելությունների ծրագիրը՝ 11-րդ հոդվածով ամրագրված իր մանդատը իրականացնելու նպատակով:

2. Խորհրդատվություններից հետո Կանխարգելման ենթակոմիտեն տեղեկացնում է մասնակից պետություններին իր ծրագրի մասին, որպեսզի նրանք կարողանան անմիջապես ձեռնարկել այցելությունների իրականացման համար անհրաժեշտ գործնական նախապատրաստությունները:

3. Այցելությունները պետք է իրականացվեն Կանխարգելման ենթակոմիտեի առնվազն երկու անդամների կողմից: Այդ անդամներին անհրաժեշտության դեպքում կարող են ուղեկցել սույն Արձանագրության առարկայի ոլորտում ակնառու մասնագիտական փորձ և գիտելիքներ ունեցող փորձագետներ, ովքեր կընտրվեն մասնակից պետությունների, Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի և Միավորված ազգերի կազմակերպության միջազգային հանցագործությունների կանխարգելման կենտրոնի կողմից արված առաջարկությունների հիման վրա կազմված փորձագետների ցուցակից: Ցուցակը պատրաստելիս շահագրգիռ մասնակից պետություններից յուրաքանչյուրը պետք է առաջարկի ոչ ավելի, քան հինգ ազգային փորձագետի: Շահագրգիռ մասնակից պետությունը կարող է առարկել այցելությանը առանձին փորձագետի ներգրավմանը, որի դեպքում Կանխարգելման ենթակոմիտեն պետք է առաջարկի մեկ այլ փորձագետի:

4. Եթե Կանխարգելման ենթակոմիտեն նպատակահարմար գտնի, կարող է առաջարկել կանոնավոր այցելությունից հետո կարճատև հետայցելություն:

**Հոդված 14**

1. Կանխարգելման ենթակոմիտեին իր մանդատն իրականացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով սույն Արձանագրության մասնակից պետությունները պարտավորվում են նրան տրամադրել.

ա) անսահմանափակ հնարավորություն՝ ստանալու 4-րդ հոդվածում սահմանված կալանավայրերում գտնվող ազատազրկված անձանց, ինչպես նաև այդ վայրերի քանակի և դրանց գտնվելու տեղի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը.

բ) անսահմանափակ հնարավորություն՝ ստանալու այդ անձանց նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև կալանավայրերում նրանց պայմանների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը.

գ) ներքոհիշյալ 2-րդ կետի պայմանի պահպանմամբ՝ անսահմանափակ հնարավորություն՝ մուտք գործելու բոլոր կալանավայրերը և դրանց կառույցներն ու շինությունները.

դ) հնարավորություն՝ վարելու առանձնազրույցներ ազատազրկված անձանց հետ՝ առանց վկաների, անձամբ կամ, անհրաժեշտության դեպքում, թարգմանչի միջոցով, ինչպես նաև ցանկացած այլ անձի հետ, ով, Կանխարգելման ենթակոմիտեի կարծիքով, կարող է համապատասխան տեղեկատվություն տրամադրել.

ե) ազատություն՝ ընտրելու այն վայրերը, ուր ցանկանում է այցելել, և այն անձանց, ում հետ ցանկանում է զրուցել:

2. Որևէ կալանավայր այցելություն կատարելուն կարելի է առարկել միայն անհետաձգելի և ծայրահեղ անհրաժեշտության հիմքերով՝ կապված պետական պաշտպանության, հասարակական անվտանգության, բնական աղետի կամ այցելության վայրում լուրջ անկարգությունների հետ, որոնք ժամանակավորապես խոչընդոտում են տվյալ այցելության իրականացմանը: Հայտարարված արտակարգ իրավիճակի առկայությունը որպես այդպիսին չի կարող մասնակից պետության կողմից վկայակոչվել որպես այցելությունը մերժելու պատճառ:

### Հոդված 15

Ոչ մի մարմին կամ պաշտոնատար անձ չպետք է հրամայի, կիրառի, թույլատրի կամ հանդուրժի որևէ պատժամիջոց որևէ անձի կամ կազմակերպության նկատմամբ՝ Կանխարգելման ենթակոմիտեին կամ նրա պատվիրակներին որևէ տեղեկատվություն (ճիշտ կամ սխալ) հաղորդելու համար, և ոչ մի նման անձի կամ կազմակերպության որևէ այլ կերպ չպետք է վնաս հասցվի:

### Հոդված 16

1. Կանխարգելման ենթակոմիտեն իր խորհրդատվություններն ու դիտողությունները պետք է գաղտնի կերպով հաղորդի մասնակից պետությանը և անհրաժեշտության դեպքում՝ կանխարգելման ազգային մեխանիզմին:

2. Կանխարգելման ենթակոմիտեն պետք է հրապարակի իր հաշվետվությունը շահագրգիռ մասնակից պետության ցանկացած մեկնաբանության հետ մեկտեղ՝ մասնակից պետության կողմից նման խնդրանքի դեպքում: Եթե մասնակից պետությունը հրապարակի հաշվետվության մի մասը, ապա Կանխարգելման ենթակոմիտեն կարող է հրապարակել այդ հաշվետվությունն ամբողջությամբ կամ մասամբ: Սակայն ոչ մի անձնական տվյալ չպետք է հրապարակվի՝ առանց շահագրգիռ անձի բացահայտ համաձայնության:

3. Կանխարգելման ենթակոմիտեն իր գործունեության վերաբերյալ պետք է Խոշտանգումների դեմ կոմիտեին ներկայացնի տարեկան հանրային հաշվետվություն:

4. Եթե մասնակից պետությունը հրաժարվում է 12-րդ և 14-րդ հոդվածների համաձայն համագործակցել Կանխարգելման ենթակոմիտեի հետ կամ քայլեր ձեռնարկել Կանխարգելման ենթակոմիտեի խորհրդատվությունների համաձայն իրավիճակը բարելավելու ուղղությամբ, ապա Խոշտանգումների դեմ կոմիտեն Կանխարգելման ենթակոմիտեի դիմումի հիման վրա այն բանից հետո, երբ մասնակից պետությունը հնարավորություն է ունեցել հայտնելու իր դիրքորոշումը, իր անդամների ձայների մեծամասնությամբ կարող է որոշել հանդես գալ այդ հարցի վերաբերյալ հրապարակային հայտարարությամբ կամ հրապարակել Կանխարգելման ենթակոմիտեի հաշվետվությունը:

## ՄԱՍ IV

## ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

### Հոդված 17

Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց կամ այն վավերացնելուց կամ նրան միանալուց ոչ ուշ, քան մեկ տարի հետո յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է հաստատի, նշանակի կամ ստեղծի մեկ կամ մի քանի` կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ` ներպետական մակարդակով խոշտանգումների կանխարգելման նպատակով: Ապակենտրոնացված միավորումների կողմից ստեղծված մեխանիզմները, սույն Արձանագրության նպատակներից ելնելով, կարող են նշանակվել որպես կանխարգելման ազգային մեխանիզմներ, եթե դրանք համապատասխանում են նրա դրույթներին:

### Հոդված 18

1. Մասնակից պետությունները պետք է երաշխավորեն կանխարգելման ազգային մեխանիզմների գործառնական անկախությունը, ինչպես նաև դրանց աշխատակազմերի անկախությունը:

2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ապահովեն կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների` պահանջվող ունակությունները ու մասնագիտական գիտելիքները: Նրանք պետք է ջանան ապահովել գենդերային հավասարակշռություն և երկրում առկա էթնիկ և փոքրամասնությունների խմբերի համարժեք ներկայացվածություն:

3. Մասնակից պետությունները պարտավորվում են մատչելի դարձնել կանխարգելման ազգային մեխանիզմների գործունեության համար անհրաժեշտ միջոցները:

4. Կանխարգելման ազգային մեխանիզմներ ստեղծելիս մասնակից պետությունները պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող սկզբունքները:

### Հոդված 19

Կանխարգելման ազգային մեխանիզմներին պետք է տրվեն առնվազն հետևյալ լիազորությունները.

ա) պարբերաբար ուսումնասիրել 4-րդ հոդվածում նշված կալանավայրերում գտնվող ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքը` նպատակ ունենալով անհրաժեշտության դեպքում ուժեղացնել խոշտանգումներից կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից նրանց պաշտպանությունը.

բ) խորհրդատվություններ տալ համապատասխան մարմիններին` նպատակ ունենալով բարելավել ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունքն ու ազատազրկման պայմանները և կանխարգելել խոշտանգումներն ու այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը

նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան նորմերը.

գ) ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ գործող կամ նախագծային փուլում գտնվող օրենսդրության վերաբերյալ:

**Հոդված 20**

Կանխարգելման ազգային մեխանիզմների կողմից իրենց մանդատի իրականացումն ապահովելու նպատակով սույն արձանագրության մասնակից պետությունները պարտավորվում են նրանց տրամադրել.

ա) հնարավորություն՝ ստանալու 4-րդ հոդվածում սահմանված կալանավայրերում գտնվող ազատազրկված անձանց, ինչպես նաև այդ վայրերի քանակի և դրանց գտնվելու տեղի մասին ամբողջ տեղեկատվությունը.

բ) հնարավորություն՝ ստանալու այդ անձանց նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև կալանավայրերում նրանց պայմանների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը.

գ) հնարավորություն՝ մուտք գործելու բոլոր կալանավայրերը և դրանց կառույցներն ու շինությունները.

դ) հնարավորություն՝ վարելու առանձնազրույցներ ազատազրկված անձանց հետ՝ առանց վկաների, անձամբ կամ, անհրաժեշտության դեպքում, թարգմանչի միջոցով, ինչպես նաև ցանկացած այլ անձի հետ, ով, Կանխարգելման ենթակոմիտեի կարծիքով, կարող է համապատասխան տեղեկատվություն տրամադրել.

ե) ազատություն՝ ընտրելու այն վայրերը, ուր ցանկանում է այցելել, և այն անձանց, ում հետ ցանկանում է զրուցել.

զ) իրավունք՝ Կանխարգելման ենթակոմիտեի հետ կապեր ունենալու, տեղեկատվություն ուղարկելու և հանդիպելու:

**Հոդված 21**

1. Ոչ մի մարմին կամ պաշտոնատար անձ չպետք է հրամայի, կիրառի, թույլատրի կամ հանդուրժի որևէ պատժամիջոց որևէ անձի կամ կազմակերպության նկատմամբ՝ կանխարգելման ազգային մեխանիզմին տեղեկատվություն (ճիշտ կամ սխալ) հաղորդելու համար, և ոչ մի նման անձի կամ կազմակերպության որևէ այլ կերպ չպետք է վնաս հասցվի:

2. Թույլատրվում է ազգային կանխարգելման մարմնի կողմից գաղտնի տեղեկատվություն հավաքելը: Ոչ մի անձնական տվյալ չպետք է հրապարակվի առանց շահագրգիռ անձի բացահայտ համաձայնության:

**Հոդված 22**

Համապատասխան մասնակից պետության իրավասու մարմինները պետք է ուսումնասիրեն կանխարգելման ազգային մեխանիզմի խորհրդատվությունները և երկխոսություն ծավալեն նրա հետ դրանց իրականացման հնարավոր միջոցների վերաբերյալ:

**Հոդված 23**

Սույն Արձանագրության մասնակից պետությունները միջոցներ են ձեռնարկում Ազգային կանխարգելման մարմինների տարեկան հաշվետվությունները հրապարակելու և տարածելու համար:

**ՄԱՍ V**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հոդված 24**

1. Վավերացման ժամանակ մասնակից պետությունները կարող են հայտարարություն անել, որ հետաձգում են սույն արձանագրության III կամ IV մասերով հանձն առնվող իրենց պարտավորությունների կատարումը:

2. Նման հետաձգումը պետք է վավեր համարվի առավելագույնը երեք տարի: Մասնակից պետության կողմից պատշաճ պատճառաբանություն ներկայացվելուց և Կանխարգելման ենթակոմիտեի հետ խորհրդակցելուց հետո Խոշտանգումների դեմ կոմիտեն կարող է երկարացնել այդ ժամկետը լրացուցիչ երկու տարով:

**ՄԱՍ VI**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 25**

1. Սույն Արձանագրության կատարման ընթացքում Կանխարգելման ենթակոմիտեի կողմից կատարված ծախսերը կհոգա Միավորված ազգերի կազմակերպությունը:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կտրամադրի անհրաժեշտ աշխատակազմ և հնարավորություններ սույն Արձանագրությամբ նախատեսված՝ Կանխարգելման ենթակոմիտեի գործառույթների արդյունավետ իրականացման համար:

**Հոդված 26**

1. Գլխավոր ասամբլեայի համապատասխան ընթացակարգի համաձայն՝ կստեղծվի հատուկ հիմնադրամ, որը կկառավարվի Միավորված ազգերի կազմակերպության ֆինանսական կանոնակարգերի և կանոնների համաձայն՝ մասնակից պետություն կատարած այցելության արդյունքների հիման վրա Կանխարգելման ենթակոմիտեի կողմից տրված խորհրդատվությունների իրականացման, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմների ուսուցման ծրագրերի ֆինանսավորմանը օգնելու նպատակով:

2. Հատուկ հիմնադրամը կարող է ֆինանսավորվել կառավարությունների, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների և այլ մասնավոր կամ հանրային միավորների կամավոր մուծումներից:

## ՄԱՍ VII

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 27**

1. Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած ցանկացած պետության կողմից ստորագրվելու համար:

2. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման Կոնվենցիան վավերացրած կամ նրան միացած ցանկացած պետության կողմից: Վավերագրերը պետք է ի պահ հանձնվեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Արձանագրությունը բաց կլինի Կոնվենցիան վավերացրած կամ նրան միացած ցանկացած պետության միանալու համար:

4. Միանալն ուժի մեջ կմտնի միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն արձանագրությունը ստորագրած կամ նրան միացած բոլոր պետություններին կծանուցի յուրաքանչյուր նոր վավերագիր կամ միանալու մասին փաստաթուղթ ի պահ ստանալու մասին:

**Հոդված 28**

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի քսաներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո՝ երեսուներորդ օրը:

2. Քսաներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո սույն Արձանագրությունը, այն

վավերացնող կամ նրան միացող յուրաքանչյուր պետության համար, ուժի մեջ կմտնի վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո` երեսուներորդ օրը:

**Հոդված 29**

Սույն Արձանագրության դրույթները առանց որևէ սահմանափակման կամ բացառության կտարածվեն դաշնային պետությունների բոլոր սուբյեկտների վրա:

**Հոդված 30**

Սույն Արձանագրությանը ոչ մի վերապահում չպետք է արվի:

**Հոդված 31**

Սույն Արձանագրության դրույթները չեն ազդի կալանավայրեր այցելելու համակարգ սահմանող որևէ տարածաշրջանային կոնվենցիայով մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների վրա: Կանխարգելման ենթակոմիտեն և նման տարածաշրջանային կոնվենցիաներով ստեղծված մարմինները խրախուսվում են խորհրդակցելու և համագործակցելու` կրկնություններից խուսափելու և սույն արձանագրության նպատակները արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով:

**Հոդված 32**

Սույն Արձանագրության դրույթները չեն ազդում ո՛չ 1949 թվականի օգոստոսի 12-ի` Ժնևի չորս կոնվենցիաներով և 1977 թվականի հունիսի 8-ին ընդունված դրանց լրացուցիչ արձանագրություններով մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների և ո՛չ էլ միջազգային մարդասիրական իրավունքով չնախատեսված իրավիճակներում կալանավայրեր այցելելու Կարմիր խաչի միջազգային կոմիտեին ցանկացած մասնակից պետության կողմից տրված լիազորության վրա:

**Հոդված 33**

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սույն Արձանագրության գործողությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով, որը այդ մասին այնուհետև կտեղեկացնի սույն արձանագրության և Կոնվենցիայի մյուս մասնակից պետություններին: Գործողության դադարեցումն ուժի մեջ կմտնի Գլխավոր քարտուղարի` ծանուցումը ստանալուց մեկ տարի անց:

2. Այդուհանդերձ, գործողության դադարեցումը մասնակից պետության չի ազատի սույն Արձանագրությամբ ստանձնած իր պարտավորությունների կատարումից գործողության դադարեցման ուժի մեջ մտնելու օրվանից առաջ տեղի ունեցած ցանկացած գործողության կամ իրավիճակի նկատմամբ կամ այն միջոցների նկատմամբ, որոնք Կանխարգելման ենթակոմիտեն որոշել էր կամ կարող էր որոշել ձեռնարկել համապատասխան մասնակից պետության նկատմամբ. գործողության դադարեցումը որևէ կերպ չի խոչընդոտի մինչև գործողության դադարեցման ուժի մեջ մտնելը Կանխարգելման ենթակոմիտեի կողմից քննությանն առնված ցանկացած գործի քննարկման շարունակմանը:

3. Մասնակից պետության համար գործողության դադարեցման ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից Կանխարգելման ենթակոմիտեն չպետք է սկսի այդ պետության վերաբերյալ որևէ նոր գործի քննություն:

**Հոդված 34**

1. Սույն Արձանագրության յուրաքանչյուր մասնակից պետություն կարող է առաջարկել փոփոխություն և այն ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Այնուհետև Գլխավոր քարտուղարը առաջարկված փոփոխությունը կուղարկի սույն Արձանագրության մասնակից պետություններին` խնդրելով, որ նրանք իրեն տեղեկացնեն առաջարկությունները քննարկելու և դրանց վերաբերյալ քվեարկելու նպատակով մասնակից պետությունների համաժողով հրավիրելուն իրենց հավանության մասին: Այդպիսի հաղորդագրության օրվանից հետո` չորս ամսվա ընթացքում, մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդի կողմից նման համաժողովի գումարմանը հավանություն տրվելու դեպքում Գլխավոր քարտուղարը հրավիրում է համաժողովը Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Համաժողովին ներկա և քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների երկու երրորդի կողմից ընդունված ցանկացած փոփոխություն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից կներկայացվի բոլոր մասնակից պետությունների ընդունմանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ընդունված փոփոխությունն ուժի մեջ կմտնի, երբ կընդունվի սույն Արձանագրության մասնակից պետությունների երկու երրորդի կողմից` նրանց համապատասխան սահմանադրական գործընթացների համաձայն:

3. Ուժի մեջ մտնելուց հետո փոփոխությունները պարտադիր կդառնան այն մասնակից պետությունների համար, որոնք դրանք ընդունել են. մյուս մասնակից պետությունների համար պարտադիր ուժ կունենան սույն Արձանագրության դրույթները և նրանց կողմից առավել վաղ ընդունված ցանկացած փոփոխությունը:

**Հոդված 35**

Կանխարգելման ենթակոմիտեի և կանխարգելման ազգային մեխանիզմների անդամներին իրենց գործառույթների անկախ իրականացման համար կտրվեն անհրաժեշտ արտոնություններ և անձեռնմխելիություն: Կանխարգելման ենթակոմիտեի անդամներին կտրվեն Միավորված ազգերի կազմակերպության` 1946 թվականի փետրվարի 13-ի` Արտոնությունների և

անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայի 22-րդ բաժնով նախատեսված արտոնություն-ներն ու անձեռնմխելիությունը՝ այդ կոնվենցիայի 23-րդ բաժնի դրույթների պահպանմամբ:

**Հոդված 36**

Մասնակից պետություն այցելություն կատարելիս Կանխարգելման ենթակոմիտեի անդամնե-րը, չվնասելով սույն Արձանագրության դրույթներն ու նպատակները և այն արտոնություններն ու անձեռնմխելիությունը, որոնք կարող են նրանց տրամադրվել, պետք է.

ա) հարգեն այցելած պետության օրենքներն ու կանոնները.

բ) ձեռնպահ մնան իրենց պարտականությունների անկողմնակալ և միջազգային բնույթին անհամատեղելի որևէ գործողությունից կամ գործունեությունից:

**Հոդված 37**

1. Սույն Արձանագրությունը, որի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իս-պաներեն տեքստերը հավասարազոր են, ի պահ կտրվի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության հաստատված պատճենները կուղարկի բոլոր պետություններին:

***Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2006 թ. հոկտեմբերի 14-ից:***

## ՕՐԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ, ԿԱՄԱՅԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՀԱՊԱՏԻԺՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՄԱՆ Ս Կ Զ Բ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ը ՀԱՆՁՆԱՐԱՐՎԱԾ ԵՆ ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 1989 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի 1989/65 ԲԱՆԱՁԵՎՈՎ

Տնտեսական ու սոցիալական խորհուրդը,

հիշեցնելով, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածը հռչակում է յուրաքանչյուրի կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքը,

ուշադրության առնելով, որ Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգա-յին դաշնագրի (114) 6-րդ հոդվածի 1-ին կետում նշվում է, որ կյանքի իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է, որը պահպանվում է օրենքով, և ոչ ոք չի կարող մեկ այլ մարդու կամայականորեն զրկել կյանքից,

ուշադրության առնելով նաև Մարդու իրավունքների կոմիտեի ընդհանուր դիտողությունները կյանքի իրավունքի վերաբերյալ, ինչպես դա նախատեսված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածում,

ընդգրկելով, որ օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժները Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում են,

հաշվի առնելով, որ հանցագործությունների կանխման և իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված Միավորված ազգերի կազմակերպության յոթերորդ կոնգրեսը օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժների մասին 11-րդ բանաձևում բոլոր կառավարություններին կոչ է արել անհետաձգելի ու վճռաբեկ ջանքեր գործադրել` հետապնդելու նմանօրինակ արարքները, որտեղ էլ որ դրանք տեղի ունեցած լինեն, նպատակ ունենալով պատժել նրանց, ովքեր մեղավոր կճանաչվեն, ինչպես նաև ձեռնարկել մյուս բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են այդ գործելակերպը կանխելու համար,

հաշվի առնելով նաև, որ Տնտեսական ու սոցիալական խորհուրդը 1986 թվականի մայիսի 21-ի իր 1986/10 բանաձևի 1-ին բաժնում Հանցագործությունների կանխման ու դրանց դեմ պայքարի կոմիտեին խնդրել էր իր տասներորդ նստաշրջանում քննարկել օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժների հարցը` նման գործելակերպի արդյունավետ կանխման և հետապնդման սկզբունքների մշակման նպատակով,

հիշեցնելով, որ Գլխավոր ասամբլեան 1978 թվականի դեկտեմբերի 20-ի իր 33/173 բանաձևով խոր մտահոգություն էր հայտնել աշխարհի տարբեր մասերից ստացվող այն հաղորդումների առթիվ, որոնք վերաբերում էին մարդկանց բռնի կամ ոչ կամովին անհետացմանը, և կառավարություններին կոչ էր արել, նման հաղորդումներ ստանալիս, համապատասխան միջոցներ ձեռնարկել նման անձանց փնտրելու համար և անհետաձգելի ու անաչառ հետաքննություն անցկացնել,

երախտագիտությամբ նշելով հետաքննություն անցկացնելու համար ստանդարտներ (115) մշակելու ոչ կառավարական կազմակերպությունների ջանքերը,

ընդգծելով, որ Գլխավոր ասամբլեան 1987 թվականի դեկտեմբերի 7-ի իր 42/141 բանաձևում կրկին վճռականորեն դատապարտել է մեծ թվով ընդհանուր կամ կամայական մահապատիժները, ներառյալ անօրինական մահապատիժները, որոնք պարբերաբար տեղի են ունենում աշխարհի տարբեր մասերում,

նշելով, որ այդ նույն բանաձևով Գլխավոր ասամբլեան ճանաչել է Մարդու իրավունքների կենտրոնի, Սոցիալական զարգացման ու մարդասիրական հարցերի կենտրոնի, Հանցագործությունների կանխման և քրեական արդարադատության սեկտորի և Հանցագործությունների կանխման ու դրանց դեմ պայքարի կոմիտեի ավելի սերտ համագործակցության անհրաժեշտությունը ընդհանուր կամ կամայական մահապատիժներին վերջ դնելու նպատակով ձեռնարկվող ջանքերում,

զիտակցելով, որ օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժների արդյունավետ կանխման և հետաքննման համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան ֆինանսական ու տեխնիկական ռեսուրսներ,

1. հանձնարարում է, որ օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժների արդյունավետ կանխման ու հետաքննման սկզբունքները, որոնք բովանդակվում է սույն բանաձևի հավելվածը, հաշվի առնվեն և կիրառվեն կառավարությունների կողմից` ազգային օրենսդրության ու գործելակերպի շրջանակներում և հասցվեն ի գիտություն իրավակարգը պաշտպանող մարմինների և քրեական արդարադատության համակարգի աշխատակիցների, զինծառայողների, իրավաբանների, կառավարության գործադիր և օրենսդիր մարմինների անդամների և, ամբողջությամբ վերցված, հասարակայնությանը.

2. Հանցագործությունների կանխման ու դրանց դեմ պայքարի կոմիտեին խնդրում է մշտապես հետևել վերը նշված հանձնարարականների իրականացմանը, ներառյալ սկզբունքների իրականացումը, հաշվի առնելով սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային տարբեր պայմանները, որոնցում տեղ են գտնում օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժներ.

3. այն անդամ պետություններին, որոնք դեռևս չեն վավերացրել օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժներն արգելող միջազգային փաստաթղթերը կամ չեն միացել դրանց, ներառյալ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (114), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրությունը (114) և Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիան (116), առաջարկում է դառնալ այդ փաստաթղթերի մասնակիցներ.

4. Գլխավոր քարտուղարին խնդրում է սույն սկզբունքները զետեղել Միավորված ազգերի կազմակերպության «Մարդու իրավունքները. Միջազգային պայմանագրերի ժողովածու» վերնագրով հրատարակության մեջ.

5. հանցագործությունների կանխման և իրավախախտների հետ վարվեցողության Միավորված ազգերի կազմակերպության տարածաշրջանային ու միջտարածաշրջանային հաստատություններին խնդրում է գիտական հետազոտությունների և կադրերի պատրաստման իրենց ծրագրերի շրջանակներում առանձնակի ուշադրություն դարձնել Սկզբունքներին, ինչպես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին (114), Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայի (116) դրույթներին, Իրավակարգը պաշտպանող անձանց վարվեցողության կանոնագրքին, Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրին և մյուս միջազգային փաստաթղթերին, որոնք վերաբերում են օրենքից դուրս կամայական և ընդհանուր մահապատիժների հարցին:

***15-րդ լիագումար նիստ, 24 մայիսի 1989 թվականի***

### Հավելված

## ՕՐԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՀԱՊԱՏԻԺՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՆԽՄԱՆ ՈՒ ՀԵՏԱՔՆՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

**Նախազգուշացում**

1. Կառավարությունները օրենսդրական կարգով արգելք են սահմանում օրենքից դուրս, կամայական և ընդհանուր բոլոր մահապատիժների նկատմամբ և ապահովում, որ նման բոլոր մահապատիժները հանցագործություն ճանաչվեն՝ իրենց քրեական օրենսդրությանը համապատասխան, և որ դրանց կատարման համար նախատեսվեն պատշաճ պատժամիջոցներ, որոնք հաշվի կառնեն նման հանցագործությունների լրջությունը: Բացառիկ հանգամանքները, այդ թվում՝ պատերազմական վիճակը կամ պատերազմի սպառնալիքը, ներքին քաղաքական անկայունությունը կամ պետությունների ցանկացած այլ արտակարգ իրավիճակները չեն կարող հիմք հանդիսանալ նման մահապատիժների համար: Նման մահապատիժները չեն իրականացվում ոչ մի հանգամանքում, ներառյալ մասնավորապես այն իրավիճակները, որոնք կապված են ներքին զինված բախման, պետական պաշտոնատար անձի կամ պաշտոնապես գործող այլ անձի կամ հրահրմամբ գործող անձի կամ նման անձի ակնհայտ կամ լռելյայն համաձայնությամբ գործող անձի կողմից ուժի չափից ավելի կամ անօրինական գործադրմամբ, և այնպիսի իրավիճակում, երբ մահը վրա է հասնում կալանքի տակ գտնվելու ժամանակ: Այս արգելքը առավելություն ունի գործադիր իշխանության կողմից արձակվող որոշումների նկատմամբ:

2. Օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժների կանխման նպատակով կառավարությունները ապահովում են խիստ վերահսկողություն, ներառյալ ենթակայության հստակ համակարգը, այն բոլոր պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնց պարտականության մեջ մտնում է կալանումը, ձերբակալումը, կալանքի տակ պահելը և բանտարկումը, ինչպես նաև այն պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնք, օրենքի համաձայն, լիազորություններ ունեն ուժ և հրազեն գործադրելու:

3. Կառավարությունները արգելում են վերադաս պաշտոնատար անձանց կամ պետական մարմինների կողմից այնպիսի հրամաններ արձակելը, որոնք ուրիշ անձանց լիազորում են կամ հրահրում կատարել ցանկացած՝ նման օրենքից դուրս, կամայական կամ ընդհանուր մահապատիժներ: Բոլոր պաշտոնատար անձինք իրավունք ունեն և պարտավոր են չկատարել նման հրամանները: Իրավակարգը պահպանող մարմինների աշխատակիցներ պատրաստելիս առանձնակի ուշադրություն է դարձվում վերը շարադրված դրույթներին:

4. Առանձին անձանց և խմբերի, որոնց օրենքից դուրս, կամայական կամ ընդհանուր մահապատժներ են սպառնում, այդ թվում՝ հաշվեհարդարի սպառնալիքներ ստացած անձանց, երաշխավորվում է արդյունավետ պաշտպանություն դատական կամ այլ միջոցների օգնությամբ:

5. Ոչ ոք չի կարող բռնությամբ հանձնվել կամ տրվել որևէ երկրի, երբ ծանրակշիռ հիմքեր կան կարծելու, թե այդ անձը կարող է օրենքից դուրս, կամայական կամ ընդհանուր մահապատժի զոհ դառնալ այդ երկրում:

6. Կառավարությունները ապահովում են ազատազրկված անձանց պահելը պաշտոնապես ընդունված կալանավայրերում և նրանց ազգականներին ու դատապաշտպաններին կամ վստահված այլ անձանց անհապաղ ստույգ տեղեկություն են տրամադրում նրանց ձերբակալվելու և գտնվելու վայրի, այդ թվում՝ նրանց այլ վայրեր տեղափոխելու մասին:

7. Որակյալ տեսուչները, այդ թվում՝ բուժաշխատողներ կամ համարժեք անկախ մարմին, կանոնավոր հիմքի վրա տեսչական ստուգումներ են անցկացնում կալանքի տակ պահելու վայրերում և լիազորվում են չհայտարարված տեսչական ստուգումներ անցկացնել սեփական նախաձեռնությամբ՝ այդ գործառույթը կատարելիս ապահովվելով անկախության լիակատար երաշխիքներով: Այդ տեսուչներն օգտվում են նման կալանավայրերում գտնվող բոլոր անձանց մոտ անսահմանափակ մուտք ունենալու, ինչպես նաև նրանց վերաբերող փաստաթղթերին առնչվելու իրավունքից:

8. Կառավարություններն ամեն ջանք գործադրում են կանխելու օրենքից դուրս կամայական և ընդհանուր մահապատիժները այնպիսի միջոցների իրականացմամբ, ինչպես դիվանագիտական միջամտությունը, գանգատներով միջկառավարական ու դատական մարմիններին դիմելու հնարավորությունների ընդլայնումը և նմանօրինակ գործելակերպի հրապարակային դատապարտումը: Ցանկացած նման մահապատժի մասին հաղորդումները հետաքննելու և նմանօրինակ գործելակերպի կասեցման նպատակով արդյունավետ միջոցներ ձեռնարկելու համար օգտագործվում են միջկառավարական մեխանիզմներ: Կառավարությունները, այդ թվում՝ այն երկրների կառավարությունները, որտեղ, ինչպես կասկածվում է, տեղի են ունենում օրենքից դուրս կամայական և ընդհանուր մահապատիժներ, ապահովում են լիակատար օժանդակություն նմանօրինակ գործելակերպի միջազգային հետաքննությունների անցկացմանը:

**Հետաքննություն**

9. Մանրակրկիտ, օպերատիվ և անաչառ կերպով հետաքննվում են օրենքից դուրս, կամայական և ընդհանուր մահապատիժների բոլոր կասկածելի դեպքերը, ներառյալ այն դեպքերը, երբ ազգականների գանգատներում կամ այլ հավաստի հաղորդումներում ասվում է վերոհիշյալ հանգամանքներում անբնական մահվան վրա հասնելու մասին: Կառավարություններն ապահովում են հիմնարկների և ընթացակարգերի առկայությունը՝ նման հետաքննություններ անցկացնելու համար: Հետաքննության նպատակն է պարզել մահվան պատճառները, բնույթը և վրա հասնելու ժամանակը, պատասխանատու անձին և ցանկացած համակարգը կամ գործելակերպը, որը կարող էր մահվան պատճառ դառնալ: Հետաքննությամբ նախատեսվում է պատշաճ դիահերձում կատարել, հավաքել և վերլուծել բոլոր իրեղեն ու փաստական ապացույցները և վկաների ցուցմունքները: Հետաքննությունը սահմանում է մահվան բնույթը՝ բնական մահ, դժբախտ պատահարի հետևանքով վրա հասած մահ, ինքնասպանություն և սպանություն:

10. Հետաքննող մարմինն իրավունք ունի պահանջելու հետաքննության անցկացման համար բոլոր տեղեկությունները: Հետաքննություն անցկացնող անձինք իրենց տրամադրության տակ ունեն հետաքննության արդյունավետ անցկացման համար բոլոր անհրաժեշտ բյուջետային ու տեխնիկական միջոցները: Նրանք նաև լիազորություն ունեն ցանկացած նման մահապատիժների հետ,

ինչպես ենթադրվում է, առնչված պաշտոնական անձանց պարտավորեցնել ներկայանալու, որպեսզի վկայի ցուցմունքներ տան: Դա վերաբերում է նաև ցանկացած վկայի: Այդ նպատակով նրանք լիազորված են վկային, ներառյալ այն պաշտոնական անձանց, որոնք, ինչպես ենթադրվում է, առնչություն ունեն ցանկացած նման մահապատիժների հետ, կանչելու ծանուցագրեր տալ և պահանջել, որ նրանք ապացույցներ ներկայացնեն:

11. Այն դեպքերում, երբ հետաքննության սահմանված ընթացակարգերը չեն բավարարում պահանջները՝ անբավարար իրավասության կամ անաչառության հետևանքով, հարցի կարևորության և պարբերաբար չարաշահումների ակներև առկայության հետևանքով, ինչպես նաև այն դեպքերում, երբ այդ քերությունների դեմ զանգատներ են ստացվում զոհի ընտանիքից, կամ էական այլ պատճառներով, կառավարությունները հետաքննություն են անցկացնում հետաքննող անկախ հանձնաժողովի միջոցով կամ համանման ընթացակարգով: Նման հանձնաժողովի անդամներ են ընտրվում իրենց անաչառությամբ, ձեռնհասությամբ և անձնական անկախությամբ հայտնի անձինք: Մասնավորապես նրանք պետք է անկախ լինեն ցանկացած կազմակերպությունից, հիմնարկից կամ անձից, որոնք կարող են հետաքննության օբյեկտ հանդիսանալ: Հանձնաժողովն իրավունք ունի պահանջելու հետաքննության համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները, և հետաքննությունն անցկացնում է սույն Սկզբունքներին համապատասխան:

12. Վախճանվածի մարմինը չի թաղվում մինչև պաշտաճ դիահերձումը բժշկի կողմից, որը, ըստ հնարավորի, պետք է լինի դատաբժշկական փորձաքննության պաթոլոգանատոմ: Դիահերձում կատարող անձինք իրավունք ունեն առնչվելու հետաքննության բոլոր տվյալներին, մուտք ունենալու դիակի հայտնաբերման վայր և այնտեղ, որտեղ ենթադրաբար վրա է հասել մահը: Եթե դիակը թաղվել է, իսկ հետագայում անհրաժեշտություն է առաջանում հետաքննություն անցկացնելու, ապա դիակը, անհապաղ և անհրաժեշտ պահանջների կիրառմամբ, զերեզմանից հանվում է դիահերձման համար: Եթե հաջողվում է հայտնաբերել միայն կմախքի մնացորդները, ապա աճյունը խնամքով հանվում է և մանրակրկիտ ուսումնասիրվում սիստեմային մարդաբանական տարրալուծման եղանակներով:

13. Հանգուցյալի դիակը հերձող անձանց տրամադրվում է բավականաչափ ժամանակ, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի մանրակրկիտ հետաքննություն անցկացնելու: Դիահերձման ընթացքում փորձ է արվում առնվազն պարզելու հանգուցյալի անձը և մահվան պատճառն ու բնույթը: Ըստ հնարավորության, պարզվում են նաև մահվան ժամանակն ու վայրը: Դիահերձման եզրակացությանը կցվում են հանգուցյալի մանրակրկիտ գունավոր լուսանկարները՝ հետաքննության հետևությունները փաստերով ամրապնդելու նպատակով: Դիահերձման մասին եզրակացության մեջ պետք է նշվեն մահացածի ստացած բոլոր վերքերը, այդ թվում՝ խոշտանգումների ամեն մի նշան:

14. Օբյեկտիվ արդյունքներ ապահովելու համար դիահերձող անձինք պետք է հնարավորություն ունենան գործելու անաչառ և ցանկացած անձից, կազմակերպությունից կամ հիմնարկից անկախ, որոնք կարող են թեկուզ ինչ-որ առնչություն ունենալ տվյալ գործի հետ:

15. Հայցվորները, վկաները, հետաքննությունն անցկացնող անձինք և նրանց ընտանիքները պաշտպանվում են բռնությունից, բռնության սպառնալիքներից կամ ահաբեկման ցանկացած այլ

ձևից: Այն անձինք, որոնք կարող են կապված լինել օրենքից դուրս, կամայական կամ ընդհանուր մահապատիժների հետ, հեռացվում են ամեն տեսակ վերահսկողությունից կամ իշխանությունից՝ ուղղակի թե անուղղակի, հայցվորների, վկաների և նրանց ընտանիքների, ինչպես նաև հետաքննություն անցկացնող անձանց նկատմամբ:

1. Հանգուցյալների ընտանիքները և նրանց օրինական ներկայացուցիչները ծանուցվում են հետաքննությանը վերաբերող ցանկացած ունկնդրման և ցանկացած տեղեկության մասին և ունենն դրանց մասնակցելու թույլտվություն, ինչպես նաև այլ վկայություններ ներկայացնելու իրավունք: Հանգուցյալի ընտանիքը իրավունք ունի պնդելու, որ դիահերձմանը ներկա լինի բժշկական կամ որևէ այլ որակյալ ներկայացուցիչ: Հանգուցյալի անձը պարզելուց հետո ծանուցում է տրվում մահվան մասին, և հանգուցյալի ընտանիքը կամ ազգականներն անհապաղ իրազեկ են պահվում: Հանգուցյալի դիակը նրանց է հանձնվում հետաքննության ավարտից հետո:

17. Խելամիտ ժամկետի ընթացքում գրավոր հաշվետվություն է կազմվում նման հետաքննությունների եղանակների ու արդյունքների մասին: Հաշվետվությունն անհապաղ հրապարակվում է, այն պետք է տեղեկություններ պարունակի հետաքննության շրջանակների, այն ընթացակարգերի և եղանակների մասին, որոնք կիրառվել են ապացույցները, ինչպես նաև ստացված արդյունքների և կիրառվող օրենսդրության հիման վրա արված հետևություններն ու հանձնարարականները գնահատելիս: Հաշվետվությունը պետք է նաև մանրամասն տեղեկություններ բովանդակի այն կոնկրետ դեպքերի մասին, որոնք, ինչպես պարզվել է, տեղի են ունեցել, ինչպես նաև այն ապացույցները, որոնց հիման վրա ստացվել են այդ արդյունքները, և ցուցմունքները տված վկաների ազգանունները, բացառությամբ նրանց, որոնց անձը չի հրապարակվել՝ նրանց պաշտպանության նպատակով: Կառավարությունը խելամիտ ժամկետի ընթացքում կա՛մ պաշտոնական պատասխան է տալիս հետաքննության մասին այդ հաշվետվությանը, կա՛մ էլ հաղորդում, թե ինչ միջոցներ են ձեռնարկվելու այդ կապակցությամբ:

**Դատավարություն**

18. Կառավարություններն ապահովում են այն անձանց դատի տալը, որոնք, ինչպես պարզվել է հետաքննության ընթացքում, մասնակցել են օրենքից դուրս, կամայական կամ ընդհանուր մահապատիժներին՝ իրենց իրավասության ներքո գտնվող ցանկացած տարածքում: Կառավարությունները կա՛մ դատի են տալիս այդ անձանց, կա՛մ համագործակցում են ցանկացած այդպիսի անձանց այլ երկրների հանձնելու գործում, որոնք ցանկանում են իրականացնել իրենց իրավասությունը: Այս սկզբունքը կիրառվում է անկախ այն բանից, թե ովքեր են մեղավորները կամ զոհերը և որտեղ են գտնվում նրանք՝ անկախ նրանց քաղաքացիությունից և անկախ այն բանից, թե որտեղ է կատարվել հանցագործությունը:

19. Առանց ի վնաս վերը նշված 3-րդ սկզբունքի՝ վերադաս պետի կամ պետական իշխանության մարմնի հրամանը չի կարող օրենքից դուրս, կամայական կամ ընդհանուր մահապատիժների արդարացում հանդիսանալ: Վերադաս ղեկավարները կամ պետական պաշտոնական այլ անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել իրենց ենթակայության տակ գտնվող

անձանց կատարած արարքների համար, եթե խելամիտ հնարավորություն են ունեցել կանխելու նմանօրինակ արարքները: Ոչ մի պարագայում, ներառյալ պատերազմական վիճակը, պաշարողական դրությունը կամ այլ արտակարգ իրավիճակներ, ոչ մի անձի, որն, ինչպես ենթադրվում է, առնչություն ունի օրենքից դուրս, կամայական կամ ընդհանուր մահապատիժների հետ, դատական հետապնդումից լիակատար անձեռնմխելիության իրավունք չի տրվում:

20. Օրենքից դուրս, կամայական կամ ընդհանուր մահապատիժների զոհերի ընտանիքներն ու խնամակալները իրավունք ունեն արդարացի և պատշաճ փոխհատուցում ստանալ խելամիտ ժամկետում:

114. Տե՛ս Գլխավոր ասամբլեայի 2200 A (XXI) բանաձևը:

115. Տե՛ս T/FC. 57 /1988/ NC/4:

116. Գլխավոր ասամբլեայի 39/46 բանաձև:

## ՈՐԵՎԷ ՁԵՎՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎՈՂ ԿԱՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի 43/173 ԲԱՆԱՁԵՎՈՎ

Գլխավոր ասամբլեան՝

վկայակոչելով 1980 թվականի դեկտեմբերի 15-ի իր 35/177 բանաձևը, որով նա Վեցերորդ կոմիտեի առջև խնդիր էր դրել մշակել որևէ ձևով ձերբակալվող կամ կալանվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի նախագիծ և որոշում էր կայացրել այդ նպատակով հիմնել բաց կազմով աշխատանքային խումբ,

ի գիտություն ընդունելով որևէ ձևով կալանվող կամ ձերբակալվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի նախագծի աշխատանքային խմբի զեկուցագիրը (56), որը նիստեր էր անում Գլխավոր ասամբլեայի քառասուներեքերորդ նստաշրջանի ընթացքում և ավարտել է սկզբունքների ժողովածուի նախագծի մշակումը,

նկատի առնելով, որ աշխատանքային խումբը որոշում է ընդունել սկզբունքների ժողովածուի նախագծի տեքստը ներկայացնել Վեցերորդ կոմիտեին՝ քննարկման և ընդունման համար (57),

համոզված լինելով, որ սկզբունքների ժողովածուի նախագծի ընդունումը կարևոր ավանդ կներդնի մարդու իրավունքների պաշտպանության գործում,

ուշադրության առնելով սկզբունքների ժողովածուի տեքստի լայն տարածումն ապահովելու անհրաժեշտությունը,

1. հաստատում է որևէ ձևով ձերբակալվող կամ կալանվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն, որի տեքստը կցվում է սույն բանաձևին.

2. իր երախտագիտությունն է հայտնում որևէ ձևով ձերբակալվող կամ կալանվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի նախագծի աշխատանքային խմբին` (56) Սկզբունքների ժողովածուի մշակման գործում ներդրած կարևոր ավանդի համար.

3. Գլխավոր քարտուղարին խնդրում է Սկզբունքների ժողովածուի ընդունման մասին իրազեկ պահել Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետություններին և մասնագիտացված հիմնարկների անդամներին.

հաստատակամորեն կոչ է անում ամեն ջանք գործադրել Սկզբունքների ժողովածուն լայնորեն տարածելու և կիրառելու համար:

***76-րդ լիագումար նիստ, 9 դեկտեմբերի 1988 թվականի***

**Հավելված**

## ՈՐԵՎԷ ՁԵՎՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎՈՂ ԿԱՄ ԿԱԼԱՆՎՈՂ ԲՈԼՈՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն սկզբունքները կիրառվում են բոլոր այն անձանց պաշտպանելու համար, որոնք ձերբակալվում կամ կալանավորվում են որևէ ձևով:

### ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ`

ա) «ձերբակալություն» բառը նշանակում է անձի ձերբակալում` որևէ իրավախախտում կատարելու կասկածանքով կամ որևէ մարմնի որոշմամբ.

բ) «ձերբակալված անձ» բառակապակցությունը նշանակում է ցանկացած անձ, որն անձնական ազատությունից զրկվել է կատարած իրավախախտման համար դատապարտված չլինելու հետևանքով.

գ) «կալանված անձ» բառակապակցությունը նշանակում է ցանկացած անձ, որն անձնական ազատությունից զրկվել է` կատարած որևէ իրավախախտման համար դատապարտվելու հետևանքով.

դ) «ձերբակալում» բառը նշանակում է ձերբակալված անձի վիճակ, որի բնորոշումը բերված է վերը.

ե) «կալանք» բառը նշանակում է բանտարկված անձի վիճակ, որի բնորոշումը բերված է վերը.

զ) «դատական կամ այլ մարմին» բառակապակցությունը նշանակում է օրենքին համապատասխան դատական կամ այլ մարմին, որի կարգավիճակն ու դիրքն ապահովում են իրավասության, անաչառության և անկախության առավելագույնս կայուն երաշխիքներ:

**ՍԿԶԲՈՒՆՔ 1**

Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված բոլոր անձինք մարդասիրական վերաբերմունքի և մարդ անհատին բնորոշ արժանապատվության հարգման իրավունք ունեն:

**ՍԿԶԲՈՒՆՔ 2**

Կալանավորումը, ձերբակալումը կամ բանտարկությունը կատարվում է միայն օրենքի դրույթներին խստիվ համապատասխան և իրավասու պաշտոնատար անձանց կամ այդ նպատակի համար օրենքով լիազորված անձանց կողմից:

**ՍԿԶԲՈՒՆՔ 3**

Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանվող անձանց շահերից ելնելով` չի թույլատրվում իրավունքին, կոնվենցիաներին, կանոններին կամ սովորույթներին համապատասխան որևէ պետության մեջ ճանաչվող կամ գոյություն ունեցող մարդու իրավունքների ոչ մի սահմանափակում կամ որևէ նսեմացում այն հիման վրա, թե այդ իրավունքները չեն ճանաչվում կամ նվազ ծավալով են ճանաչվում սույն սկզբունքների ժողովածուում:

**ՍԿԶԲՈՒՆՔ 4**

Որևէ ձևով ձերբակալումը կամ բանտարկությունը և մարդու իրավունքները շոշափող բոլոր միջոցները ձերբակալված կամ բանտարկված անձանց նկատմամբ պետք է իրականացվեն որոշման միջոցով կամ ենթակա են դատական կամ այլ մարմնի արդյունավետ վերահսկողությանը:

**ՍԿԶԲՈՒՆՔ 5**

1. Սույն սկզբունքները կիրառվում են բոլոր անձանց նկատմամբ, ցանկացած տվյալ պետության տարածքի սահմաններում` առանց որևէ խտրության, ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ հավատի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագման, գույքային, դասային կամ այլ դրության առումով:

2. Օրենքի շրջանակներում կիրառվող և հատկապես կանանց, առանձնապես հղի կանանց և ծծմայրերի, ինչպես նաև երեխաների, դեռահասների, զառամյալների, հիվանդների կամ հաշմանդամների իրավունքներն ու հատուկ իրավիճակը պաշտպանելու համար նախատեսված միջոցները խտրական չեն համարվում: Նման միջոցների անհրաժեշտության ու կիրառման հարցը միշտ ենթակա է դատական կամ այլ մարմնի քննարկման:

**ՍԿԶԲՈՒՆՔ 6**

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի այլ ձևերի*: Ոչ մի հանգամանք չի կարող արդարացում հանդիսանալ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի այլ ձևերի համար:

**ՍԿԶԲՈՒՆՔ 7**

1. Պետությունները պետք է օրենսդրական կարգով արգելեն սույն սկզբունքների բովանդակած իրավունքներին ու պարտականություններին հակասող ամեն տեսակ գործողությունները, համապատասխան պատժամիջոցների ենթարկեն դրանց համար և գանգատների անաչառ հետաքննություն անցկացնեն:

2. Պաշտոնատար անձինք, որոնք հիմքեր ունեն համարելու, որ տեղի է ունեցել կամ կարող է տեղի ունենալ սույն սկզբունքների ժողովածուի խախտում, պետք է այդ մասին հաղորդեն վերադաս իշխանություններին և, երբ դա անհրաժեշտ է, ուրիշ համապատասխան իշխանությունների կամ մարմինների, որոնց վրա դրության հսկողության կամ շտկման լիազորություններ են դրված:

3. Ցանկացած այլ անձ, որը հիմք ունի համարելու, որ տեղի է ունեցել կամ կարող է տեղի ունենալ սույն սկզբունքների ժողովածուի խախտում, իրավունք ունի այդ մասին հաղորդելու մեղսակից պաշտոնատար անձանց նկատմամբ վերադաս ատյաններին, ինչպես նաև համապատասխան այլ իշխանությունների կամ մարմինների, որոնց վրա դրված են դրության հսկողության կամ շտկման լիազորություններ:

**ՍԿԶԲՈՒՆՔ 8**

Ձերբակալված անձանց նկատմամբ կիրառվում է չդատապարտված անձանց իրավիճակին համապատասխանող ռեժիմ: Դրա հետևանքով նրանք միշտ, երբ դա հնարավոր է, տեղավորվում են կալանավորված անձանցից առանձին:

**ՍԿԶԲՈՒՆՔ 9**

Անձին կալանավորող, նրան ձերբակալող կամ գործի հետաքննություն անցկացնող իշխանությունները իրականացնում են միայն օրենքով իրենց տրամադրվող լիազորությունները, և այդ լիազորությունների իրականացումը կարող է գանգատարկվել դատական կամ այլ մարմնում, որ նախատեսված է օրենքով:

**ՍԿԶԲՈՒՆՔ 10**

Կալանավորման ժամանակ յուրաքանչյուր կալանավորվածի հաղորդվում են նրա կալանավորման պատճառները և անհապաղ՝ նրան ներկայացվող ցանկացած մեղադրանք:

**ՍԿԶԲՈՒՆՔ 11**

1. Անձը չի կարող կալանքի տակ գտնվել առանց դատական կամ այլ մարմնի կողմից շտապ կարգով ունկնդրվելու արդյունավետ հնարավորության ընձեռման: Ձերբակալված անձն իրավունք ունի ինքը հանդես գալու ի պաշտպանություն իրեն կամ օգտվելու դատապաշտպանի օգնությունից, ինչպես դա նախատեսված է օրենքով:

2. Ձերբակալված անձին կամ նրա դատապաշտպանին, եթե այդպիսին կա, անհապաղ լրիվ տեղեկություն է տրվում ձերբակալման ցանկացած որոշման, ինչպես նաև ձերբակալման պատճառների մասին:

3. Դատական կամ այլ մարմինը պետք է լիազորություններ ունենա անհրաժեշտության դեպքում կալանքը շարունակելու հիմքը քննարկելու համար:

**ՍԿԶԲՈՒՆՔ 12**

1. Պատշաճ կերպով արձանագրության մեջ գրանցվում են՝

ա) կալանավորման պատճառները.

բ) տվյալ անձի կալանավորման ժամանակը, նրա՝ կալանավայր տարվելու ժամանակը, ինչպես նաև դատական կամ այլ մարմնի առջև առաջին անգամ հայտնվելու ժամանակը.

գ) իրավապահ մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց ազգանունները.

դ) կալանավայրի վերաբերյալ ստույգ տվյալները:

2. Այդ արձանագրությունները օրենքով կարգագրված կարգով ներկայացվում են ձերբակալվածին կամ նրա դատապաշտպանին, եթե այդպիսին կա:

**ՍԿԶԲՈՒՆՔ 13**

Ցանկացած անձի, կալանավորման պահին և ձերբակալման կամ կալանավորման սկզբում կամ դրանից հետո շատ չանցած, կալանավորման, ձերբակալման կամ բանտարկման համար պատասխանատու մարմինը համապատասխանաբար իրազեկ է պահում և պարզաբանում է նրա իրավունքները և այն, թե նա ինչպես կարող է իրականացնել այդ իրավունքները:

**ՍԿԶԲՈՒՆՔ 14**

Այն անձը, որը բավականաչափ լավ չի հասկանում կամ խոսում նրա կալանավորման, ձերբակալման կամ բանտարկության համար պատասխանատու իշխանությունների կողմից օգտագործվող լեզվով, իրավունք ունի հնարավորին չափ արագ ստանալու իրեն հասկանալի լեզվով տեղեկություններ, որոնք նշված են 10-րդ, 11-րդ (կետ 2-րդ), 12-րդ (կետ 1-ին) և 13-րդ սկզբունքներում,

ինչպես նաև ստանալու թարգմանչի օգնություն, եթե անհրաժեշտ է՝ ձրի, իր կալանավորումից հե-
տո իրավաբանական քննության կապակցությամբ:

**ՍԿԶԲՈՒՆՔ 15**

Չնայած այն բացառություններին, որ բովանդակում են 16-րդ սկզբունքի 4-րդ և 18-րդ սկզբուն-
քի 3-րդ կետերը, ձերբակալված կամ կալանավորված անձին կարող են մերժել կապ ունենալու
արտաքին աշխարհի և մասնավորապես իր ընտանիքի կամ դատապաշտպանի հետ մի քանի օրից
ոչ ավելի ժամանակահատվածում:

**ՍԿԶԲՈՒՆՔ 16**

1. Կալանավորվելուց հետո շատ չանցած և ամեն անգամ ձերբակալության կամ բանտարկության
մի վայրից մեկ ուրիշը փոխադրվելուց հետո ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձն իրա-
վունք ունի դիմելու իրավասու մարմնի՝ խնդրելով իր ընտանիքի անդամներին կամ իր ընտրությամբ
համապատասխան այլ անձանց տեղյակ պահելու իր կալանավորման, ձերբակալման կամ բան-
տարկվելու կամ էլ իր տեղափոխության և այն վայրի մասին, որտեղ նա պահվում է:

2. Եթե ձերբակալված կամ կալանավորված անձը օտարերկրացի է, նրան պետք է անհապաղ
հաղորդվի համապատասխան միջոցներով այն պետության հյուպատոսության կամ դիվանագի-
տական ներկայացուցչության հետ կապվելու իր իրավունքի մասին, որի քաղաքացին է նա, կամ
որը այլ կերպ իրավասու է նման հաղորդում ստանալու՝ միջազգային իրավունքին համապատաս-
խան, կամ իրավասու միջազգային կազմակերպության հետ, եթե նա փախստական է կամ որևէ այլ
կերպ գտնվում է միջկառավարական կազմակերպության պաշտպանության ներքո:

3. Եթե ձերբակալված կամ բանտարկված անձը անչափահաս է կամ ի վիճակի չէ գիտակցել իր
իրավունքները, ապա հիշյալ իրավասու մարմինն իր նախաձեռնությամբ տեղեկացման պարտա-
վորություն է ստանձնում, որ հիշատակված է սույն սկզբունքում: Առանձնակի ուշադրություն պետք
է դարձվի ծնողներին և խնամակալներին տեղյակ պահելուն:

4. Սույն սկզբունքում հիշատակված ցանկացած ծանուցում անհապաղ պետք է ուղարկվի կամ
թույլատրվի իրավասու մարմնի կողմից: Իրավասու մարմինը, սակայն, կարող է ծանուցումը հե-
տաձգել ավելի խելամիտ ժամանակի, եթե այդ են պահանջում հետաքննության բացառիկ հան-
գամանքները:

**ՍԿԶԲՈՒՆՔ 17**

1. Ձերբակալված անձն իրավունք ունի իրավաբանական օգնություն ստանալու դատապաշտպանի
կողմից: Կալանքից հետո շատ չանցած՝ նա իրավասու մարմնի կողմից իրազեկ է պահվում իր
իրավունքի մասին, և նրան խելամիտ հնարավորություններ են ընձեռվում այդ իրավունքն իրակա-
նացնելու համար:

2. Եթե ձերբակալված անձը դատապաշտպան չունի իր ընտրությամբ, նա, բոլոր դեպքերում, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, իրավունք ունի օգտվելու դատական կամ այլ մարմնի կողմից նշանակված դատապաշտպանի ծառայությունից՝ առանց նրա սպասարկումների վարձատրման, եթե ինքը բավականաչափ դրամական միջոցներ չունի:

**ՍԿԶԲՈՒՆՔ 18**

1. Ձերբակալված կամ բանտարկված անձն իրավունք ունի կապվելու և խորհրդակցելու դատապաշտպանի հետ:

2. Ձերբակալված կամ բանտարկված անձին անհրաժեշտ ժամանակ ու պայմաններ են տրամադրվում իր դատապաշտպանի հետ խորհրդակցելու համար:

3. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձին դատապաշտպանի այցելելու, առանց հապաղման կամ գրաքննության և լիակատար գաղտնիության պայմաններում նրա հետ խորհրդակցելու և կապի մեջ լինելու նրա իրավունքը չի կարող առժամանակ չեղյալ հայտարարվել կամ սահմանափակվել, բացի բացառիկ հանգամանքներից, որոնք սահմանվում են օրենքով կամ նախատեսված են օրենքին համապատասխան կանոններով, երբ դատական կամ այլ մարմնի կարծիքով՝ դա անհրաժեշտ է անվտանգությունը և կարգուկանոնը պահպանելու համար:

4. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի տեսակցություններն իր դատապաշտպանի հետ կարող են տեղի ունենալ այնպիսի պայմաններում, որոնք իրավապահ մարմինների պաշտոնատար անձին թույլ են տալիս տեսնել նրանց, բայց չլսել:

5. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի կապը իր դատապաշտպանի հետ չի կարող օգտագործվել որպես վկայություն մեղադրվող կամ կալանքի տակ գտնվող անձի դեմ, եթե նա առնչություն չունի կատարվող կամ մտահղացվող հանցագործության հետ:

**ՍԿԶԲՈՒՆՔ 19**

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձին մասնավորապես ընտանիքի անդամների այցելության և նրանց հետ նամակագրության, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ հարաբերություն ունենալու իրավունք է տրվում՝ օրենքի բովանդակած և օրենքին համապատասխան կանոններով սահմանված խելամիտ պայմանների ու սահմանափակումների համաձայն:

**ՍԿԶԲՈՒՆՔ 20**

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի խնդրանքով նա պահվում է, եթե դա հնարավոր է, նրա բնակության սովորական վայրից խելամիտ հեռավորության վրա գտնվող ձերբակալման կամ բանտարկության վայրում:

**ՍԿԶԲՈՒՆՔ 21**

1. Արգելվում է չարաշահել ձերբակալված կամ կալանfի sակ գsնվող անձի վիճակը՝ նրան խոստովանության կամ nrևէ այլ ինfնամեrկացման կամ ցանկացած այլ անձի դեմ ցուցմունfներ sալուն harկադrելու նպաsակով:

2. Ոչ մի ձերբակալված անձ hurgաfննության ժամանակ չpեsf է բռնության, սպառնալիfների կամ hեsաfննության այնպիսի եղանակների ենթարկվի, nrnնf խախsում են nrnշումներ ընդունելու կամ դաsողություններ անելու նրա ընդունակությունը:

**ՍԿԶԲՈՒՆՔ 22**

Ոչ մի ձերբակալված կամ կալանfի sակ գsնվող անձ չpեsf է նույնիսկ իr համաձայնությամբ nrևէ բժշկական կամ գիsական փnrձի ենթարկվի, nrnնf կarող են վնասել նրա առողջությունը:

**ՍԿԶԲՈՒՆՔ 23**

1. Ձերբակալված կամ կալանfի sակ գsնվող անձի hurgաfննման կամ hurgաfննությունների միջև ընկած ընդմիջումների sևողությունը, ինչպես նաև hurgաfննությունն անցկացնող պաշsոնաsar անձանց և մյուս ներկաների ազգանունները գrանցվում են և hաստաsվում այն ձևով, nrպիսին կarող է կarգագrված լինել orենfով:

2. Ձերբակալված կամ կալանfի sակ գsնվող անձը կամ նրա դաsապաշsպանը, երբ դա նախաsեսված է orենfով, թույլsվություն ունեն առնչվելու այն sեղեկություններին, nrնց մասին ասվում է սույն սկզբունfի 1-ին կեsում:

**ՍԿԶԲՈՒՆՔ 24**

Ձերբակալված կամ կալանfի sակ գsնվող անձին hնարավորություն է ընձեռվում պաշsաճ բուժզննում անցնելու ձերբակալության կամ բանsարկության վայր ժամանելուց hեsո ամենակարճ ժամկեsում. hեsագայում նրան բուժսպասարկում և բուժում են srամադրվում ամեն անգամ, երբ դրա անհrաժեշsությունը ծագում է: Բուժսպասարկումն ու բուժումը srամադrվում են անվճar:

**ՍԿԶԲՈՒՆՔ 25**

Ձերբակալված կամ կալանfի sակ գsնվող անձը կամ նրա դաsապաշsպանը ձերբակալության կամ կալանfի վայrում անվsանգության և կarգուկանոնի պահպանման համar անհrաժեշs խելամիs պայմանների կաsարման պայմանով միայն իrավունf ունեն դիմելու դաsական կամ այլ մարմնի՝ կrկնական բուժզննման կամ բժշկական եզrակացության խնդrանfով կամ խնդrագrով:

**ՍԿԶԲՈՒՆՔ 26**

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի բուժզննման փաստը, բժշկի ազգանունը և այդ զննման արդյունքները պատշաճ կերպով գրանցվում են արձանագրությունում: Թույլատրվում է առնչվելը այդ արձանագրությանը: Նման թույլտվության եղանակները սահմանվում են ազգային օրենսդրության համապատասխան նորմերով:

**ՍԿԶԲՈՒՆՔ 27**

Այս սկզբունքները չպահպանելը, ապացույցներ ստանալու դեպքում, ուշադրության է առնվում ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի դեմ նման ապացույցների թույլատրելիությունը որոշելիս:

**ՍԿԶԲՈՒՆՔ 28**

Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձն իրավունք ունի առկա միջոցների սահմաններում, եթե դա պետական աղբյուրներից է, ստանալու խելամիտ քանակությամբ ուսումնական, գեղարվեստական և լրատվական նյութեր՝ ձերբակալության կամ կալանքի վայրերում անվտանգությունը և կարգուկանոնն ապահովող տրամաբանական պայմանների պահպանմամբ:

**ՍԿԶԲՈՒՆՔ 29**

1. Համապատասխան օրենքների և կանոնների խստիվ կիրառմանը հետևելու նպատակով կանոնավոր կերպով կալանավայրեր են այցելում որակյալ և բավականաչափ փորձառու անձինք, որոնք նշանակվում և պատասխանատու են իրավասու իշխանությունների առջև՝ ի տարբերություն այն իշխանությունների, որոնց անմիջական տնօրինության ներքո են գտնվում ձերբակալության կամ բանտարկության վայրերը:

2. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը իրավունք ունի ազատորեն և լիակատար գաղտնիության պայմաններում շփվելու այն անձանց հետ, որոնք ձերբակալության կամ բանտարկության վայրեր են այցելում 1-ին կետին համապատասխան՝ նման վայրերում անվտանգության և կարգուկանոնի ապահովման համար անհրաժեշտ խելամիտ պայմանների պահպանմամբ:

**ՍԿԶԲՈՒՆՔ 30**

1. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի վարվելակերպի բնույթը, որը ձերբակալման կամ կալանավորման ժամանակ կարգապահական իրավախախտում էր, հնարավոր կարգապահական պատժի տեսակն ու տևողությունը, ինչպես նաև այն իշխանությունները, որոնց իրավասության մեջ է մտնում նման պատիժ նշանակելը, պետք է ճշտորեն սահմանված լինեն պատշաճ կերպով հրապարակված օրենքներում կամ օրենքին համապատասխան հաստատված կանոններով:

2. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձն իրավունք ունի ունկնդրվելու՝ կարգապահական պատժամիջոցներ դրվելուց առաջ: Նա իրավունք ունի գանգատարկել նման միջոցները վերադաս իշխանությունների առջև:

### ՍԿԶԲՈՒՆՔ 31

Համապատասխան իշխանությունները միջոցներ են ձեռնարկում, ազգային օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում օգնություն տրամադրելու ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձանց ընտանիքների անդամներին, որոնք գտնվում են նրանց խնամքի տակ, հատկապես անչափահաս անձանց, և առանձնակի ուշադրություն են դարձնում առանց հսկողության մնացած երեխաների պատշաճ խնամակալությանը:

### ՍԿԶԲՈՒՆՔ 32

1. Ձերբակալված անձը կամ նրա դատապաշտպանը իրավունք ունեն ցանկացած ժամանակ, ներքին օրենսդրությանը համապատասխան, քննություն հարուցել դատական կամ այլ մարմնի առջև՝ վիճարկելու համար տվյալ անձի ձերբակալման օրինականությունը՝ անհապաղ նրա ազատ արձակմանը հասնելու նպատակով, եթե այդ ձերբակալումը անօրինական է:

2. 1-ին կետում հիշատակված քննությունը պետք է լինի պարզ, արագ և անվճար այն անձանց համար, ովքեր համապատասխան միջոցներ չունեն: Ձերբակալումն իրականացնող իշխանությունները պետք է, առանց չարդարացված ձգձգումների, ձերբակալված անձին ներկայացնեն նրա գործը քննող մարմնին:

### ՍԿԶԲՈՒՆՔ 33

1. Ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը կամ նրա դատապաշտպանն իրավունք ունեն ձերբակալման կամ կալանավայրի կառավարման համար պատասխանատու մարմին և ավելի բարձր ատյաններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գանգատները քննարկելու կամ պաշտպանության միջոցներ տրամադրելու լիազորված համապատասխան մարմիններ ուղարկել խնդրագիր կամ գանգատ տվյալ անձի նկատմամբ վարվեցողության վերաբերյալ, մասնավորապես խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնող այլ վարվելաձևի դեպքում:

2. Այն դեպքերում, երբ ո՛չ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը, ո՛չ նրա դատապաշտպանը հնարավորություն չունեն իրականացնելու նրա իրավունքները 1-ին կետին համապատասխան, նման իրավունք կարող է իրականացնել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի ընտանիքի անդամը կամ որևէ այլ անձ, որն իրազեկ է այդ գործին:

3. Պահպանվում է խնդրագրի կամ գանգատի գաղտնիությունը, եթե այդ մասին խնդրում է խնդրագիր կամ գանգատ տվողը:

4. Յուրաքանչյուր խնդրագիր կամ գանգատ անհապաղ քննարկվում է, և պատասխանը տրվում է առանց չարդարացված ձգձգման: Այդ խնդրագրի կամ գանգատի մերժման կամ չարդարացված ձգձգման դեպքում խնդրագիր կամ գանգատ տվողը կարող է այն ուղարկել դատական կամ այլ մարմին: Ինչպես ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը, այնպես էլ ցանկացած խնդրագիր կամ գանգատ տվող, 1-ին կետին համապատասխան, չեն կարող հալածանքների ենթարկվել՝ խնդրագիր կամ գանգատ տալու համար:

**ՍԿԶԲՈՒՆՔ 34**

Եթե ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը մահանում է կամ անհետանում ձերբակալվելիս կամ բանտարկվելիս, ապա դատական կամ այլ մարմին հետաքննություն է անցկացնում կա՛մ իր նախաձեռնությամբ, կա՛մ տվյալ անձի ընտանիքի անդամի, կա՛մ տվյալ գործի մասին տեղեկություններ ունեցող ցանկացած անձի խնդրանքով: Եթե դա արդարացված է հանգամանքներով, ապա նման հետաքննությունն անցկացվում է նույնպիսի արարողակարգային հիման վրա, ամեն անգամ, երբ մահը կամ անհետացումը տեղի է ունենում ձերբակալության կամ բանտարկության ժամկետի լրանալուց հետո շատ չանցած: Նման հետաքննության արդյունքները կամ դրա մասին զեկուցագիրը տրամադրվում է խնդրագրով, եթե դա վնաս չի հասցնում անցկացվող քրեական հետաքննությանը:

**ՍԿԶԲՈՒՆՔ 35**

